ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Բանաստեղծութիւններ

-A LIT
ISAA
1955

ԹԻՒ 20

ԷՏՎԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

504



U. U. M

Fr. Khajag Barsamian
P. O. Box 14218
Jerusalem – Israel

Աի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԾՆՆՊԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Ա.

ՀԱՏՈՐ



ՏՊԱՐԱՆ ԷՏՎԱՆ
ՊԷՅՐՈՒԹ
1955

Fr. Khajag Barsamian
P. O. Box 14218
Jerusalem – Israel

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Աւետիք Իսահակեան ծնած է Ալեքսանդրապոլ այժմ (Լենինական)՝ 1875 Հոկ 31ին։ Եօթ տարեկանին կը սկսի իր առաջին կրթութիւնը տեղւոյն ծխական դպրոցին մէջ, որ 1885ի ցարական հրամանով բոլոր հայ վարժարաններուն հետ ան ևս փակուելով, Իսահակեան կը ստիպուի յաճախել տեղւոյն ռուսական վարժարանը։

1889ին, Էջմիածնի Գէորգեան ճեմարանը կ՚ընդունուի բայց առիթ չունենար աւարտելու զայն։ Աշակերտական խռովութիւններու հետեւանքով Իսահակեան կը լքէ ճեմարանը և 1893ին կը մեկնի Եւրոպա՝ չարունակելու իր ուսումը։ Հոն՝ նախ Վիեննայի ապա Լայփցիկի համալսարաններու մէջ կը հետեւի մարդաբանական, ազգագրական ու գրական ճիւղերուն։

1895ին, Իսահակեան կը վերադառնայ հայրենիք, բայց չորս տարի ետք կրկին կը մեկնի Եւրոպա, ուր՝ չվման մէջ կը մտնէ արտասահմանի հայ գրագէտներու՝ ի մասնաւորի Հ. Ղ. Ալիշանի հետ։ 1902ին կրկին կը վերադառնայ Հայաստան, ու կը ծանօթանայ Վահան Տէրեանի և իր ժամանակակից բոլոր հայ մեծ արուեստագէտներուն։

1908ին Իսահակեան կը ձերբակալուի ու վեց ամսուան բանտարկութենէ մը ետք ազատ կարճակուի։ 1912ին կը մեկնի Եւրոպա։ Առաջին համաշխարհային պատերազմը վրայ հասնելով Աւետիք Իսահակեան 14 տարիներ ստան-

դական կեանք մը կը վարէ արտասահմանի մէջ։ 1926ին կը վերադառնայ հայրենիք։ Զօրս տարի եռանդ կրկին անգամ ըլլալով կը մեկնի Եւրոպա ու կը հաստատուի Փարիզ։ 1936ին իր դեգերումներուն վերջ տալով վերջնականապէս կը հաստատուի Հայաստան, վայելելով իր հայրենակիցներուն ու արուեստակիցներուն գուրգուրանքը։ Հայկական ակադեմիայի առաջին անդամներուն մաս կը կազմէ և գրողներու միութեան նախագահ կը նշանակուի, պարգեւատրուելով պետական մեծագոյն մրցանակներով։

ԻՐ ԵՐԿԵՐԸ

Խահակեան սկսած է գրել պզտիկ տարիքէն։ 1892ին «Տարազ» պարբերաթերթի մէջ լոյս կը տեսնէ իր առաջին քերթուածը, «Ծաղիկ էի նորաթողուած»ը, որուն կը յաջորդեն ուրիշ բազմաթիւ քերթուածներ, գրուած՝ Հայաստանի և արտասահմանի մէջ, որոնք 1898ին, առանձին հատորով «Երգեր ու վէրքեր» վերնագրով լոյս կը տեսնեն Ալեքսոլի մէջ։

1902ին Պաքուի մէջ կը հրատարակէ «Հին նոր երգեր ու վէրքեր» բանաստեղծութիւններու նոր ժողովածուն։ 1903ին կրկին Պաքուի մէջ կը տպագրուի իր «Աչքերի խաղերը»։ 1910ին լոյս կը տեսնէ «Արու յալա Մահարի»ն Գարեգին Լեւոնեանի «Գեղարուեստ» հանդէսին մէջ։ 1917ին կը հրատարակէ «Ալագեազի Մանիներ» բանաստեղծութեանց չարքը, իսկ 1937ին «Սասմայ Մհերը»ը, վերամշակուած։

1938ին Հայպետհրատը կը տպագրէ իր երկերու ժողովածուն, իսկ 1952ին Զօրս հատորներու մէջ կ'ամփոփուին իր երկերու լիակատար ժողովածուն։

ԱՐՈՒԵՍՏԸ

Սիրոյ ու կարօտի երգիչը

Հայ գրականութեան մէջ Սեւակի պէս Խահակեան եղակի ձիրք մը ունի որպէս քնարերգակ բանաստեղծ։ Իր արուեստը, գերազանցօրէն ժողովրդական, թէեւ զուրկ հզօր երեւակայութեան մը նպաստէն, կրկնակիօրէն հա-

մակրելի է իր վճիռ ու մարդկային պարզ հոգիի անկեղծ արտայայտութեամբ։ Ու այս՝ առաւելաբար սիրոյ և պանդխտի իր երգերուն մէջ։

Խահակեանի գրականութիւնը հարազատ պատկերաւորում մըն է իր իսկ կեանքին ու հոգեկան վիճակներուն։ Ամէն մի քերթուած, պոէմ կամ արձակ, վաւերական նօթեր են իր սէրերուն, ապառնդական կեանքին մէջ զգացած կարօտներուն, յուսախաբութիւններուն ու յոյսերուն։

Յուզականութիւնը իր երգերուն, անուշ թախիծով թաթաւուն պինք կը մատրմացնէն հայ աշուղներու։ Այս մատրմութիւնը կը դառնայ յաճախ այնքան սերտ, իր արտայայտչական ձեւերով ու նիւթերով, որ բանաստեղծը կը սկսի չփոթուիլ ժողովրդական բանահիւսութեան անանուն ռահվիրաներուն հետ։ Ահա թէ ուր է գաղտնիքը այն սիրոյն՝ որ հայ ժողովուրդը կը տածէ բանաստեղծին հանդէպ։

Մտքի մանուածապատ հակակշռէն, ու արուեստի քմայքոտ պահանջքներէն խուսափող իր երգերը, վշտոտ հոգիներու ինքնաբուխ արտայայտութիւններ են լուսաւոր ու վճիռ հոսումով։

Իր քերթողութեան երաժշտականութիւնը ու հարստութիւնը, հայ երաժիշտներուն առիթ տուած է խահակեանի բանաստեղծութիւնները երգերու վերածելու ու տարածելու ժողովրդի լայն խաւերուն մէջ։ Բանաստեղծի մը համար մեծագոյն փառքն է այս, որուն կրնան հասնիլ միայն, իրաւ արուեստագէտներ։

ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ ԵՒ ՍԱՄՄԱՅ ՄՀԵՐ

Իր գործերուն մէջ առանձին ժայթք մըն է «Աբու լալա մահարի»ն նիւթով ու արուեստով. անկաշկանդ, ըմբոստ ու դառնացած հոգիի մը արտայայտութիւնն է ան, որ իր որոնումներու մէջ յուսախաբ կ'ուզէ հեռանալ ու կորսուիլ անապատի անսահման տարածութիւններու մէջ։

Բերթողական արուեստի թեքնիքով նպաստաւորուած անոր նիւթը, առանց խոր ընդհանրացումներու, կը մնայ մարդկային հոգիի դառնութեան և ընդվզումի բացառիկ պահերուն էն վաւերական մէկ արտայայտութիւնը։ Ահա բացատրութիւնը այն յաջողութեան զոր գտած է այս երկը միջազգային գրականութեան մէջ։ Ան թարգմանուած է ու հրատարակուած, քանէ աւելի լեզուներու։ Իտալերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն, Իտալերէն, Ճափոներէն, Գերմաներէն, Սպաներէն, Արաբերէն, Վրացերէն եւլն։

Աբու Լալա Մահարիի կոզքին, Սամայ Մհերը աղօտ լոյս մը ունի հակառակ երկար տարիներու աչխատանքի մը արդիւնքով ծնած ըլլալու հանգամանքին։ Թէզի մը ի խնդիր գրուած ըլլալու պարագան, գինք կը դարձնեն յաճախ բռնազբօսիկ ու անարուեստ։

Աւ. Իսահակեան, հաւանօրէն միակ հայ բանաստեղծն է, որ իր կենդանութեան իսկ կրցած է ըմբռչխնել սիրոյ ու յարգանքի տուրքը, մատուցուած՝ իր ժամանակակիցներէն։ Իր տածած անսահման սէրն ու գութգութրանքը հանդէպ հայ արուեստին ու անոր անդաստանին մէջ մըտնող գրիչներուն, գինք դարձուցած են կենդանի կուռք՝ ու վարպետ մը միանգամայն։

Պ. Պ.

ԷԼԵԳԻԱ, ԳՐՈՒԱԾ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

1

Տեսի երկիրը ես Իտալիոյ,
Եւ Վենետիկը, եւ կոնտոյներ...
Այնտեղ երջում էր պոետը մեր
Երազային իր, տարտամ խայտով:
Զլացած այն փարթամ փայլով,
Գեղեցկութեամբ այն հեթիաթային,
Նա օրորում էր երգով մի հին
Իր սիրտ սիրտը դեռ դայլայլող:
Այնտեղ արեւը ճնճուղ բոյրով
Ցողում էր ծովը այնպէ՛ս հեշտին,
Իսկ նա հիւանդ էր հին մի վշտից.
Հին մորմոքից՝ իր սիրտը այրող:
Նա իր սրտով հին, հին ճնարով
Եւ մատներով իր՝ արդէն աճուժ՝
Դեռ գուրգուրում էր հեռու մի յուշ —
Եւ այնպէ՛ս, այնպէ՛ս, այնպէ՛ս անուշ
Նա փաղաքշում էր յուշը այդ ուշ,
Եւ ի՞նչ էր յուշը — մշուշ ու մուժ:—

2

Նա երազում էր Արիաչայը
Եւ հին Գիւմրին իր հեռաւոր —
Եւ այն, ինչ հին էր, յուշ էր, այլ էր —
Նրան թւում էր առաւօս:

Նա ինձ ասում էր.— հեռուում հեռու,
Ուր դա՛շտն է, դա՛շտն է Շիրակի,
Կայ հին խրճիթ մի, մի տուն խարխուլ,
Որ ազատուել է կրակից:
Այնտեղ հոսում է մի հաշտ առու
Եւ բարդիները երկնասլաց
Հիմա յիշում են երգը իրա
Եւ գլուխները թափահարում:
Նրանք թափում են թերթերը չոր,
Ծածկում խրճիթը հնամեայ այն,
Ինչպէս երգերը մահամնա,
Որ հեծկլտում են համր լացով:
Այն իր խրճի՛թն է:— Այնտե՛ղ է նա
Հիւսել երգերն իր ու երազել:
Այնտեղ վարդե՜ր կան, թերթեր դեղնած,
Այնտեղ երազ կայ, ու երգ, ու սէր:—

1925

Եղիշէ Չարենց





Արարատ [illegible] [illegible],
[illegible] է [illegible]. [illegible] [illegible].
Ու այլն:

[illegible] [illegible] [illegible]
[illegible] է [illegible] [illegible].
Ու այլն:

[illegible] [illegible]
[illegible] է [illegible] [illegible]
Ու այլն:

[illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible].
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].
Ու այլն ...

Ա. [illegible]:



ԱՐԱՐԱՏԸ ԱՇՆԱՆԱՄՈՒՏԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դո՛ւ, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինաւուրց ի՛մ Հայաստան
Անմահ բանին սպասարկու, խորհուրդ խորին ի՛մ Հայաստան,
Դո՛ւ, ալեւոր տեսիլքների աստղազօծ ի՛մ Հայաստան,
Եւ նոր խօսքի աւետաբեր, հազարավերք ի՛մ Հայաստան:

Սաղաւարտներ դրած կանգնած քո լեռներըդ կուռ երկաթի,
Արօտներըդ արիւնազանգ արդարութեան ցորեն արտի,
Երդիքներում ծուխերն անուշ, նըւիրական Նաւասարդի
Հին օրերի երգ արբազան, սեղան զոհի ի՛մ Հայաստան:

Քո գետերըդ տէգ սուրացող, ազատատենչ, կամուրջ քանդող,
Քաղաքներիդ մոխիրներից ծըլած վարդերն արիւն բուրող,
Շառականներըդ՝ հոգեբուխ, շինականիդ երգը լացող,
Հին սերերի, նոր կարօտի, ոսկի բամբիռ ի՛մ Հայաստան:

Դստրիկներըդ քո փափկասուն՝ անապատի գայլերին կեր,
Որբուկներըդ՝ մերկ ու ծարաւ, սովալլուկ, մահի ընկեր,
Բախտիդ վըրայ՝ ծափ ու ծիծաղ, սփոփանքի ունայն խօսքեր,
Նոր յոյսերի, նոր երգերի երազաբոյր ի՛մ Հայաստան:

Բարեկամներից վաճառուած, անիրաւուած իմ հայրենիք,
Ոսոխներից կըրունկի տակ աւերակուած ո՛րբ հայրենիք,
Սարսափներով ու եղեռնով յաւերժացած իմ հայրենիք,
Արիւնիդ մէջ՝ սուրբ իրաւունք, հոգիդ արեւ ի՛մ Հայաստան:

Կըռունկներըդ համբաւ տանող պանդուխտներից աշխարհալած,
Նահատակուած տաճարներից գմբէթները երկնասըլաց,
Մագաղաթներդ արիւնաներկ, ձայն հեծութեան հառաչանաց,
Հընուց ուխտի վըկայարան, աւանդատուն ի՛մ Հայաստան։

Ծիրանաւոր Քաջ Մասիսըդ ըսպարապետ քեզ պահապան,
Ծերուկներըդ, ճակատագրից ճամբաների սուրբ օրհնաբան,
Նոյ նահապետ աստուածատես՝ ածուներից վեհ այգեպան,
Մանուկներից ու կոյսերից արեան հնձան ի՛մ Հայաստան։

Արդարախօս ու մեծասքանչ քո հին լեզուով օրհներգուած,
Լուսաւորչի լոյս կանթեղով երկինքներըդ լուսերանգուած,
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած
Հըրաշափառ քո յարութեամբ՝ նորամանուկ ի՛մ Հայաստան։

* * *

Յաւած սիրտըս երգեր հիւսեց,
Երգեց աճուճ ու տխուր,
Վիշտըս հալուեց, արցունքի հոսեց,
Վճիռ, ինչպես ջինջ աղբիւր:

Հաւքերի պես երգերս թռաց,
Հովերի հետ գնացին,
Արցունքներըս ցօղեր դառաց,
Վարդի ծոցում շողացին:

Անցաւ օրեր — եկաւ մահը,
Սառ հողի տակ խուճ մտայ.
Իմ արցունքով ջաղախ վարդը
Շեաֆ ձգեց իմ վրայ:

Հովերն եկաւ, ծիրմիս վրայ
Տխուր երգեր երգեցին,—
Ա՜խ, իմ աճուճ, իմ վաղուցուայ
Հիւսած երգերս երգեցին...

* * *

Արևն իջաւ սարի գըլխուն,
Դար ու դաշտում լոյս չը կայ.
Հաւք ու թըռչուն մըտան խոր քուն,—
Ա՜խ, ինձ համար քուն չը կայ:

Լուսնեակն ընկաւ երդկից ներս
Կըշեռքն ելաւ երկընքում,
Զով հովերն էլ մըթընջողէս
Աստղերի հետ են զըրցում:

Սի՛րուն աստղե՛ր, անուշ հովե՛ր,
Եարըս ո՞ւր է՝ էս գիշեր.
Պարզ երկընքի նըշխուն աչե՛ր,
Եարիս տեսա՞ք էս գիշեր:

Լոյսը բացուաւ, դուռը բացուաւ,
Ամպ ու զամպ է,— թոն կուգայ.
Ալ ծին եկաւ, անտէր եկաւ,
Ա՜խ, եարս ո՞ւր է, տուն չի գայ...

* * *

Ծաղիկ եի ճոռաբողբոջ,
Սարի յանջուր, երկնի տակ.
Ինձ կը դիւբեր առուի խոխոջ,
Ինձ կողջուներ արեգակ:

Գիշերներր՝ ասող ու յուսին
Վար կիջնեին երկնէեն,
Որ հեքիաթներ ինձ ասեին
Կախարդական, ոսկեղեն:

Գառներն հետ լուսածագին
Եկար սարը, ջա՛ն աղջիկ,
Ինձ ֆաղեցիր, դրիր աճգին
Կրծքիդ վրայ գեղեցիկ:

Այնտեղ ծեղ՝ ես ապրեցայ
Երազներով երջանիկ.
Սերդ դաւեց ինձ, սեւաչեայ,—
Ես չորացայ, ա՜խ, աղջիկ...

***

Կուզե՞ս լինիմ վշտի ցօղեր՝
Աչերիդ մէջ շող ցայեմ.
Լուռ գիշերուայ անուշ հովեր՝
Փունջ ծամերդ փայփայեմ:

Կուզե՞ս լինիմ վարդ-նազելի՝
Կրծքիդ վրայ վառվռիմ.
Արշալոյսի շողեր ոսկի
Դէմքիդ վրայ փայլփլիմ:

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝
Քեզ գրկումս նինջ սփռեմ.
Թալուկ ստուեր, թովիչ թռչնիկ,
Օրօր ասեմ, օրօրեմ:

Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծո՛վ, ժայռ, արեւ, լուսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր...

*
* *

Սի՛րտ իմ, սպասի՛ր, գուցէ արշալոյս
Ողջունէ երկինք, գուցէ մանուշակ
Ծա՛ղ տայ բիւրեղներ, գուցէ մի նոր լոյս
Հալածէ մութը, գուցէ յաղթանակ
Տանիս կռուի մէջ — մի՛ յուսահատուիր.
Ապրի՛ր մինչ կայ կեանք, մինչ նորոգ յոյսի
Կախարդ հորիզոն... Սի՛րտ իմ վշտակի՛ր
Ինչո՞ւ ես հեծում, մի՞թէ ամեհի
Օձն է ճնշում քեզ — կասկածը անյոյս,
Ձանձրոյթը դաժան... մի՞թէ խորտակուեց
Սէրը սրբազան — երկինքը հոգուս...
— Տանջուի՛ր, յուսա՛յ...

*
* *

Ամէն գիշեր իմ պարտէզում
Լալկան ուռին, հեզ ուռին
Վշտատոչոր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուռին։

Եւ սրբում է առաւօտու
Կոյս արեւը նազելի
Հուր ծամերով հէք ուռենու
Արցունքները բիւրեղի...

ԻՄ ՓԵՐԻՆ

Կես-գիշերին, գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է, եւ հոսանքին
Ես նայում եմ միալար:

— Ո՞վ է՝ անդորր, լուռ գիշերով
Մենութիւնըս խռովում.
Շուշան-կրծքով, լոյս թեւերով
Նիրհած գետը վրդովում:

Ո՞վ է հագած լուսնի շողեր՝
Շքեղ կանգնում առաջիս.
Սեւ մազերին գոհար-ցողեր՝
Հուր շշնջում ականջիս:

Ո՞վ է ծագող լոյսերի հետ
Ծաղիկները համբուրում.
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փրփուրում:

Նա փերին է զմրուխտ գետի,
Ցնորքներիս սիրելին.
Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազելին:

Եւ մինչեւ լոյս գետի ափին
Ես նստած եմ քարացած.
Գետն հոսում է, եւ հոսանքին
Ես նայում եմ շուարած...

* * *

Ես երգիչ եմ — երկնի բիբեռ,
Ես գանձ չունիմ — լե՛ռ ու բե՛ռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,—
Ծաղկի բուրմունք, կոյսի սեր.
Ես սիրում եմ մրմունջ — տրտունջ,
Տաճչուած սրտի երգ ու վերք:

* * *

— Սի՛րըս երկինք է...
Ամեն առաւած
Աստղ ունի այնտեղ —
Գահ ունի այնտեղ:

— Սի՛րըս երկինք է...
Բո՛յր կուտայ ծաղկին,
Սեր կուտայ կոյսին,
Կեանք կուտայ անկեանք,
Ջոր անապատին —
Ամայի սրտին...
— Սի՛րըս երկինք է...

* * *

Մի՞թէ պիտի թոռմին, թօշնին
Վարդ ու շուշան խնկաբոյր,
Անդորր լռեն թռչունների
Վառ մեղեդին,
Ակն — աղբիւր:

Մի՞թէ պիտի, չքնաղ ընկե՛ր,
Կեանքի անուշ յոյզերից
Կուրծքդ հանգչի,— լուռ դադարիս
Սառն ու անկեանք
Շիրմի տակ...

Մի՞թէ պիտի փոշի դառնան
Այդ աչերդ կենսավառ,
Ուր շողում են յոյս ու տենչեր —
Սիրոյ աստղեր
Ինձ համար:

Մի՞թէ պիտի վառ ժպիտդ
Եւ արցունքիդ ծիածան
Ինչպէս երազ անդարձ մարին
Խոնաւ հողում
Յաւիտեան:

Օ, ի՞նչ,— մի՞թէ, մի՞թէ, հոգեա՛կ,
Պիտի անհետ մոռացուիս,
Ձիւնի շերտեր վրադ դիզուին,
Փոշիդ տանի
Ցուրտ քամին...

* * *

Մանկալ ես, բեզարած ես,
Առը շուռ տո՛ւր, շո՛ւտ արի.
Ծովի պես քրտնած ես,
Եզներն արձկի՛, տուն արի՛։

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի.
Ալ զոգնոցս կապել եմ,
Արի թառլան, թը՛ռռ, արի։

Տեղ եմ քըցել շուաքում,
Քամին կուզայ, զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Զափ տո՛ւր, չափ ա՛ռ — շուտ արի՛։

Դաղրած, բեզարած եա՛ր ջան.
Ամպերն ելան, դե՛հ արի.
Բեզարած ջանիդ ղուրպան,
Ծըտից թեւ առ, թե՛զ արի...

* * *

Էս ճամբեն ոլոր-մոլոր,
Սեւ ծովի բոլոր կերթայ.—
Շուտաց եարըս ինձի բողել՝
Էն տղի հետ ո՞ւր կերթայ:

Ա՛խ, ճամբեն — մահի բերաց,
Օձի պես գալար կերթայ.
Ձոլերի մեջ, անգերեզմաց,
Ծովն է լալիս իմ վրայ:

Սեգ արծիւը աչխս է կտցում,
Աչխս կաոs՝ Շուտաճին.
Անգութ գայլը սիրտս է հանում,
Սիրտըս ծառաւ՝ Շուտաճին:

Ու ճամբեն, մութ-մոլորուն,
Սեւ ծովի բոլոր կերթայ.
Շուտաց եարս ձեռքերն արիւն՝
Էն տղի հետ հարս կերթայ:

* * *

Դա՛րդըս լացէք, սարի սըմբուլ,
Ալւան-ալւան ծաղիկներ.
Դա՛րդըս լացէք, բաղի բլբո՛ւլ,
Ամպոտ երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարա՛ն — ջանիս տարա՛ն,
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես...

Ա՛խ, եարս ինծի հանեց սըրտէն,
Անճար թողեց ու գընաց.
Սըրտիս սաւդէն — խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գընաց:

Դա՛րդըս լացէք, սարի սըմբո՛ւլ,
Ալւան-ալւան ծաղիկներ,
Դա՛րդըս լացէք, բաղի բլբուլ,
Ամպոտ երկնուց զով-հովե՛ր...

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքես հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ տուն չունիմ
Ազիզ մորես բաժանուել եմ,
Տըխուր-տըրտում, քուն չունիմ.

Սարեն կուգաք, նխշուն հաւքե՛ր,
Ա՜խ, իմ մորըս տեսել չէ՞ք.
Ծովեն կուգաք, մարմանդ հովե՛ր,
Ախըր բարեւ բերել չէ՞ք։

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձեն դիպան ու անցան.
Պապակ-սըրտիս, փափագ-սըրտիս
Անխօս դիպան ու անցա՜ն։

Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզուին
Կարօտցել եմ, մայրի՛կ ջան.
Երնէ՛կ, երնէ՛կ, երազ լինիմ,
Թըռնիմ մօտըդ, մայրի՛կ ջան։

Երբ քունըդ գայ, լուռ գիշերով
Հոգիդ գըրկեմ, համբոյր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարօտով,
Լա՛մ ու խընդա՛մ, մայրի՛կ ջան...

* * *

Գիշերն եկաւ, զով-հովն ընկաւ,
Աստղունք լուսնին ձայն տուին.
Լուսնեակն ելաւ, մով-ծովն ընկաւ,
Հաւքերն ինծի ձայն տուին:

Ես վեր ելայ ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց —
Եւ լարերը խզուեցին...

— Միայն սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամէն ծալքերում...

* * *

Կանգնել եմ մոլոր՝ քողիկկիդ առջեւ,
Շուաքիդ մատաղ, դուռդ բաց արա,
Մէկ շողքդ տեսնեմ, դուն իմ վառ արեւ
Աշխարհը սեւցաւ իմ գլխի վրայ:

Սիրտըս այրուած աչերիդ հրով,
Մի կաթիլ ջուր տո՛ւր պապակ շրթունքիս.
Սիրտս զարկըւած ունքերիդ թրով,
Մի կտոր դեղ տո՛ւր անդարման վէրքիս:

Երկնքի ամպը իր լեռը ունի,
Հանգստի մի այր՝ ճամբորդող քամին.
Ո՞ւր տանիմ, ասա՛, խեղճ սէրըս հիմի,
Դուռըդ բաց արա՛,—մեռնիմ քու շեմին...

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ

—«Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս,
Սարի մարալ կը փընտռես,
Ասա՛ եարաբ. դուն չը տեսա՞ր
Իմ մարալըս, իմ բալես:

«Դարդի ձեռքից սարերն ընկաւ
Իմ արեւըս, իմ բալես,
Գլուխն առաւ քարերն ընկաւ
Իմ ծաղիկըս, իմ լալես»...

—«Տեսայ. քուրի՛կ, նախշուն բալեդ
Կարմի՛ր կանաչ է կապեր,
Սիրած եարի համբոյրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր»:

—«Որսկան ախպե՛ր, ասա՛, եարաբ,
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գըրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս»:

—«Տեսայ քուրի՛կ, դարդոտ բալեդ
Քարն է դըրեր բարձի տեղ,
Անուշ քընով տաք գընդակն է
Կրծքում գրկեր եարի տեղ:

«Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վըրան սըգում
Ազիզ բալիդ, խե՛ղճ լալիդ»...

* * *

— Քընքուշ լուսնի շուշան-փոշին
Մաղեց հեզ գետի վըրայ.
Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն,
— Սիրտըս անդո՛րր կը ծըփայ։

Ուռիները նազա՛ն-ծածա՛ն,
Տերևները կը շընչեն,
Ծիտ ու ծիծեռ ճիւղքի վըրան
Վառ երազում կը ննջեն...

Լուռ կը ծորէ աստղը շողե՛ր
Ու ծըղրիդը կը ծըղրա.
Քամին կերգէ գաղտնի երգե՛ր,—
—Միտքս հեռո՛ւ կը սըլանայ...

Լուսնակն անցաւ,—մութը մըթին
Մաղեց հեզ գետի վըրայ...
Ծանըր խըշշաց լացող ուռին,
— Սիրտըս տըխո՛ւր կը հեւա...

* * *

Մութը գրկած գետ ու գետին
Հով ու ալիք կը շնչեն.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Արտերն անդորր կը ննջեն:

Սիրտս, սիրտս թոյլ կը զարկէ,
Սէր ու երգեր է՛լ չկան.
Նոր էր ծլել արեւ սիրեց,
Արեւ-աչեր է՛լ չկան:

Վառ աստղերը երկնից ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՜խ, իմ կեանքս, անուշ կեանքս,
Կտոր-կտոր փշրուեց...

Հովն ու ալիք կուգան, կերթան,
Ցաւած սիրտս կը շոյեն.
Ու իմ սիրուս մրմունջներից
Տխուր երգեր կը հիւսեն...

* * *

Հոլերց առաց սա՛ր ու դարե՛ր,
Ամպերց ելաց, մուրց ընկաւ,
— Անգին մերի՛կ, հերիք յուսաս,
Ձո ողջողուց ասղց ընկաւ:
Լաց, մերի՛կ ջաց, որ էլ չե՛մ գայ,
Վերը սրտիս՝ տուց չե՛մ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպց է ցողում
Սեւ ու պղտոր երկնքէց.
Մաղիկ-մաղիկ վերս է ծորում
Իմ աչգիւմաց, սե՛ւ արտէց:
Լաց, մերի՛կ ջաց, որ էլ չե՛մ գայ,
Վերըս խորց է, ճար չը կայ...

Անգութ կեանքում վերէ սպացայ
Արտաց սիրած ընկերս.
Անխիղճ կեանքում վերէ սպացայ
Անուշ սիրած ֆուրիկս:
Լաց, մերի՛կ ջաց, որ էլ չե՛մ գայ,
Ազիզ բալեդ էլ չը կա՛յ...

ՄԱՆԹԱՇԻՆ

Է՜յ Մանթաշի երազ֊հովի՛տ,
Դո՛ւն, զմրուխտէ օրօրո՛ց.
Ծաղիկներդ լուսափթիթ՝
Վրաս մետաքս — վառ ծածկոց։

Աղբիւրներդ՝ բիւրեղ զանգեր,
Հովերդ անուրջ կը բերեն,
Մոռացումի թովիչ երգեր,
Հովերդ անուշ կօրօրեն։

Հուր֊հաւքերդ՝ թեւերն արծաթ,
Կտուցները՝ լալ-մարջան,
Ինծ կը պատմեն ոսկի հէքեաթ
Աշխարհներէն դիւթական։

Ալմաստ առուն՝ մօր պէս անքուն՝
Նանիկ կասէ, օ՛ր, օ՛ր, օ՛ր.
Անուշ նանին զառ մանկութեան,
Նանի՜, նանի՜, օ՛ր, օ՛ր, օ՛ր...

* * *

Կենսական ծովի յոյզերի միջից
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վեհ ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Հողմ ու փոթորիկ շուրջս են յածում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Ինձնի՛ց բռնեցեք, խորտակուող մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
Ձեր խարիսխները ոսխիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

ԱՆՏՈՒՆ ԳԻՇԵՐՆԵԸ

Անտուն գիշերնե՜ր,
Անքուն գիշերնե՜ր,
Քոյրի՛կ, քեզ համար,
Այրուած քո սիրով,
Կարօտիդ հըրով,
Ես շա՛տ լացեցի,
Ես շա՛տ տանջուեցի —
Անտուն գիշերնե՜ր,
Անքուն գիշերնե՜ր...

* * *

Գիշերն եկաւ, աստղերն ելան,
Լուսնեակն անուշ ցոլցըլաց,
Ծաղկունքն ամէն նո՛ր քուն մտան՝
Ամպի ցօղով, լուսնի շողով
Հարհանդ-մարմանդ քուն մտան։

Դուք է՛լ քնէք, ոսկի աստղեր,
Վարդ ու բլբո՛ւլ, քուն եղէ՛ք,
Օրօր-ծովե՜ր, շորոր-հովե՜ր,
Անո՛ւշ-անո՛ւշ քուն եղէ՛ք։
— Իմ սար-դարդե՜ր, իմ ծով-ցաւե՜ր,
Դուք էլ մո՛ւշ-մո՛ւշ քուն եղէ՛ք։

*
* *

Սեւ աչերէն շա՛տ վախեցի՛ր,—
Էն մութ, անծեր գիշեր է·
Մութքըն ա՛ն է, չարքեր շա՛տ կան,—
Սեւ աչերը մի՛ սիրէ:

Տե՛ս իմ սիրտս — արուն-ծով է.
Էս չարքերը զարկեցին.
Էն օրուանէն դադար չունիմ,—
Սեւ աչերը մի՛ սիրէ...

*
* *

Ա՛խ, ալ-վարդի, սիրոյ վարդի
Ձո՛ր փշերը մնացին...
Էն փշերը մատաղ սիրտս
Քրքրեցին ու կերա՛ն.
Կարմիր-կանանչ իմ օրերս
Սիրոյ սգով սեւացան...
Ա՛խ, ափսո՛ս իմ գարուն կեանքիս
Սո՛ւր փշերը մընացին...

ԱՐԱԳԱԾԻՆ

Դու, Արագա՛ծ, ալմաստ վահան
Կայծակեղեն բերի,
Գագաթներդ՝ բիւրեղ վրան
Թափառական ամպերի:

Սեզ ժայռերդ՝ արծուի բոյն,
Լճակներդ՝ լոյս-փերուզ.
Առուներդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գօտիներ ոսկեհիւս:

Աղբիւրներդ գիտեր ու զօր
Խօսքի բռնուած իրար հետ,
Վտակներդ՝ զիլ ու գլոր
Աբրեշումէ փեշերիդ:

Թիթեռներդ՝ հուր-հրեղէն
Թռչող-ճախրող ծաղիկներ.
Ձառ ու զարմանք երազներէն
Պոկուած ծուէն — ծուիկներ:

Ծիրանավառ դո՛ւն թագուհի,
Բուրումների դո՛ւն աղբիւր,
Ծաղիկներդ հազար գոյնի,
Հազար անո՛ւն, հազար բոյր:



Ա Ր Ա Գ Ա Ծ

ՆԿ. Ց. ԱՍԱՏՐԵԱՆ Ի

* * *

Ա՜խ, իմ նամբես մոլոր գընաց,
Անցակ ծովին դեմ առա.
Վա՜խ, իմ սերըս անցա՜ւ գընա՜ց,
Ես կանչելու նար չը կայ։

Դումանն եկաւ, ծովը ծածկեց,
Էն խաս հաւքերն ի՞նչ եղան.
Դարդը եկաւ, սիրտըս ծակեց.
Էն ալ-վարդերս ի՞նչ եղան։

Ա՜խ, խաս հաւքերն ծովում խեղդուան,
Ազռաւն վըրես կը դռռայ,
Սիրուս զառ-վառ վարդերն թռռման,
Բլբուլս անթեւ կը սըգայ...

* * *

Եղնիկները լուսաբացին
Սուր ժեռերով անցկեցան
Փրփրած լճին մեղմ նայեցին,
Լռիկ-մնջիկ անցկեցան:

Ա՜խ, իմ սեր՝ կանանչ-կարմիր,
Դառաւ ինձի ցաւ ու ցեց.
Ա՜խ իմ կեանքս՝ զառ-վառ կարմիր,
Վիշտս կերաւ ու մաշեց:

Ես ի՞նչ անեմ, ես ո՞ւր չխուեմ —
Ընկնիմ չոլերն ամայի.—
Երնե՜կ մեռնիմ, ու սիրտս ուտեն
Գել ու գազան ամենի:

Ա՜խ, եղնիկներ, դադար չունեմ,
Սիրտս՝ կրակ վառ-վառուման,
Մարդիկ կուգան, ինձ կընայեն,
Լռիկ-մնջիկ կանցկենան...

«Ա՛խ, կանանչները, դուք արեւերես ելաք,
Եարաբ բալէս ե՞րբ կելնի բանդէն...»
Մօրս խօսքերը

* * *

Կրունկները շարա՛ն-շարա՛ն
«Կր՛ռռ, կր՛ռռ» կանչին ու եկան.
«Գարունն եկա՛ւ, գարունն է ա՛ւ»
Անուշ կանչին ու եկան...

—«Ձա՛ն, ջա՛ն, մեռնիմ ձեր ձեռիկին,
Ա՛յ կռունկներ, նըշխառներ,
Եարա՛բ տեսա՞ք իմ բալիկին,
Եարաբ խաբար չէ՞ք բերել:

Բալիս կապին, բանդը դրին,
Տարին եկաւ, բոլորաւ,
Խաբար չունիմ, դադար չունիմ,
Աչքս ճամբին ծով կըտրաւ:

Գարունն եկաւ,— արեւերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՛խ, եարաբ ե՞րբ ազիզ բալես
Կելնի բանդեն, կրռունկնե՛ր...

Կռունկներն շարա՛ն-շարա՛ն
«Կր՛ռռ, կր՛ռռ» կանչին ու եկան,
«Գարունն եկա՛ւ, գարունն եկա՛ւ»...
Անուշ կանչին ու անցան...

* * *

Սիրեցի, եարըս տարաճ.
Եարա տուիճ ու տարաճ.
— Էս ի՞նչ զուլում ափսարհ է,
Սիրըս պոկեցիճ, տարաճ:

Յաւըս խորճ է, ճար չը կայ.
Ճար կայ, ճար աճող չը կայ.
— Էս ի՞նչ զուլում ափսարհ է.
Որտացաւ ընկեր չը կայ:

Լա՛ւ օրերըս գնացի՛ճ,
Ափսո՛ս ասիճ, գնացի՛ճ.
— Էս ի՞նչ զուլում ափսարհ է,
Սեւ դարդերս մնացիճ...

* * *

Շառաչելով մի վառ ասղիկ
Երկրի կրծքիճ վայր ընկաւ.
Բայց երկիրը մնաց լռիկ,
Ասղճ էլ լռեց ու հանգաւ:

Իմ վառ սերս բոցով-երգով
Որսիս սուրաց, սիրտդ ընկաւ,
Սիրտդ մնաց մռնջ-անվրդով,
Սակայն... սերս չը հանգաւ...

* * *

Երազիս մէջ ծովը տեսայ,
Ծովը լազո՛ւր ու անդո՛ռր.
Մենակ, մենակ, ափի վրայ
Ընկած էի վիրաւոր...

Ծովն էր հեւում մեղմ ու քալուկ՝
Մտորմունքի մէջ անծայր:
Եւ խոսում էր վէրքս խորունկ,
Իսկ ես՝ անյոյս, ես՝ անճար:

Եւ հոգուս մէջ մի ձայն ծորեց,
Մի ձայն՝ էնթուզ, սուրբ ursից.—
Ա՜խ, այն մայրս էր, կանչում էր ինձ
Հայրենիքիս ափերից...

* * *

Ես որ մեռնիմ ու իմ վէրքից
Եթէ մի վարդ դուրս ծլեր,
Եւ բնկերքս հեռու տեղից
Գար՝ շիրիմքս այցելեր.

Եթէ նրա խոր աչերից
Մի ցօղ վարդիս մէջ ծորէր,—
Այն սուրբ ցօղը սիրտքս կերթար,
Վէրքս խորունկ՝ կը բուժէր:

* * *

Երազ տեսայ — ձեր տան առաջ
Զուլալ աղբիւր կը բղխէր.
Ձենը մեղմիկ, քաղցրակարկաչ
Չորս դին ծո՛ւփ-ծո՛ւփ ծաղկունք էր։

Ջուր խմելու դուռըդ եկայ,
Պապակ էի ու ծարաւ,
Ջինջ աղբիւրը, մէկ էլ տեսայ,
Ցամաք կտրաւ, քար դառաւ։

Քնից զարթնայ,— սիրտս էր տրտում։
Ա՜խ, էս ցա՜տ վատ երազ է.—
Ծարաւն՝ ես էմ, աղբիւրը՝ դուն.
Սէրդ ինձ համար ցամքել է։

* * *

Յոգնած ծովը՝ փրփուր բերնին՝
Ափին ընկած կը հեւայ,
Ժեռ ափերից մեգը մթին
Ծովի վրայ կը սողայ։

Վէրք սրտիս՝ աճխուճ-աճսուճ,
Կեանքից հեռու եմ փախել,
Կուզեմ ապրեմ վայրի ափում,
Ապրեմ մենակ, անբնկեր։

Աստղուճք մեկ-մեկ ելան-բազման
Երկնի փերուզ-աթոռում,
Աստղերի պես երգերս ելան
Հոգուս մռայլ խորհերում։

Սրտիս լարերն տրտում-տրտուճղ
Թօճած կեանքս երգեցին.
Հովը սուրաց մուճղ ու մրմուճղ,
Աստղուճք վրաս լուռ լացին։

* * *

Սեւ-մութ ամպեր ճակտիդ դիզուան,
Դուման հազար, Ալագեա՛զ,
Սրտումս արեւ էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման Ալագեա՛զ:

Ձառ փեշերըդ անցայ, տեսայ,
Առանց դարդի սիրտ չըկար,
Ա՛խ, իմանաս, ջա՛ն Ալագեա՛զ,
Իմ դարդիս պէս դարդ չըկար...

— Է՛յ Մանթաշի նըշխուն հաւքե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
Ձեր էդ զառ-վառ, խաս-փետուրներ
Կը սեւնային, քանց գիշեր:

— Է՛յ Մանթաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թոյն ու տօթի կը փոխուէր:

— Հէ՛յ վա՛խ... կոտրան իմ թեւերս.
Ընկայ գիրկըդ, Ալագեա՛զ,
Ա՛խ, մեծ սըրտիդ սըղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագեա՛զ...

* * *

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Որ ու արեւ չը տեսանք·
Վա՜խ, մեր կեանքը սեւով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կ'ուտեն-խմեն
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ տըղերքն ենք,
Մեզ փայ չը կայ աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ,
Քարից-հողից հաց քամէ.
Բեռով հացը հարըստին տայ.—
Հարուստն իշխէ, վայելէ։

Խեղճ աղքատը դառը դատի,—
Դատարկ նըստի... է՜յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քար-աշխարհ,

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Որ ու արեւ չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սեւով անցաւ.
Աշխարհից բան չիմացանք։

* * *

Անյա՛յտ անորոշ, անձե՛ւ տենչերով
Զգտում է հոգիս հեռո՛ւ, շատ հեռո՛ւ
Տխուր ու մռայլ, ինչպես մշուշ-ծով,
Խուլ հեծեծում է ափերի վրայ,
Եւ ինչպես երազ — ե՛ւ կայ, ե՛ւ չկայ...

* * *

Գիտե՛մ, երկիրը շա՜տ դարեր յետոյ
Եւ պիտի սառի, ճեղք-ճեղք պատառուի,
Եւ այն սառցի տակ, մութ վիհերի մէջ
Մարդկութիւնը ողջ՝ մեռնի ու թաղուի —
Ա՜խ, սիրտը գոնէ՛ տիեզերքի մէջ
Յաւերժ տրոփէ՜ր...

* * *

Առտուցն՝ ուսին, վարդը սրտին,
Դարուցն եկաւ, ջա՛ն գարուն,
Տուղտը՝ ծոցին, ասղը՝ ճակտին,
Գարուն եկաւ, ջա՛ն գարուն...

Առտուցն աղուէ երգում է սէր,
Սիրտըս լո՛ւռ է, բանց ձրմեռ,
Էս ի՞նչ կարմիր վառ արե՛ւ է,
Սիրտս մո՛ւթն է, բանց գիշեր:

* * *

Քեզ չը տեսնել՝ ուխտել էի,
Բայց, ա՛խ, ճորից հանդիպա.
— Քուրի՛կ, վերքըս յաւ է ճիմի,
Մի սեւ սպի տեղը կայ:

Էն սեւ սպին սեւ ամպի պես
Սեւցուց դէմքը արեւի.
Ու մանն կուգամ սեւ ծուխի պես
Սարե՛ր, ձորե՛ր ամայի...

*
* *

Լուռ գիշերին մտքիս դիմաց
Շա՜տ ստուերներ ժողուեցան.—
Ընկերներս՝ մեռած, կորած,
Հոգուս խորքով անց կացան։

Նրանց աչքերն՝ անյոյս, անսէր,
Սրտիս խորքը նայեցին,—
Խոր վէրքի պէս սիրտըս բաց էր,
Նրանք այնտեղ սուզուեցին...

*
* *

Մութ անտառով լուռ ման կուգամ,
Բուն ու ագռաւ ինձ կըսեն.
—«Ա՜խ, խեղճ տղայ, ի՞նչ տխուր ես.
Դուն հիւանդ ես...» ինձ կըսեն։

Մութ անտառով լուռ ման կուգամ,
Ցօղը կը շաղէ ծառերէն.
—«Ա՜յ խեղճ տըղայ, վէրքըդ խոր է,
Վըրադ կուլանք...» ինձ կըսեն։

Քամին փըչեց ու ծառերէն
Տերեւները վայր ընկան.
—«Ա՜յ խեղճ տըղա՛, տերեւներն են
Քու մահիճն ու գերեզման...»

* * *

Ես որ մեռնիմ՝ ինձ կը թաղեք
Ալագեազի լանջերում.
Որ Մանթաշից հովերը գան,
Վրաս հեւան ու երթան:

Գերեզմանիս չորս դին փուռին
Ցորեն արտերն ու ցոլաճ,
Եւ ուռիներն՝ մազերն արձակ,
Վրաս ընկնին, աճուռ լաճ...

* * *

Գերեզմանըս անյայտ լինի,
Վերաս խմին շառաչէ.
Վերաս խա՛չ, խա՛ր թող չը լինի,
Մենակ ուռին հառաչէ:

Ա՜խ, աշխարհում մարդկանց ձեռեն
Խաչեր շա՜տ եմ, շատ տարել.
Ու վաղո՜ւց էլ սրտիս վրեն
Կաճ շա՜տ ծաղըր, սեւ խարեր...

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՉԱՆԳ

...Եւ ես ապաւում եւ անապաւում
Լուռ թափառում եմ հոգիս ծանրացած
Անյոյժ խոհերով, վշտով անպատում
Եւ տենչաճիճերով տիեզերատարած:
Եւ յանկարծօրհն՝ պարզ ու աննսեմ,
Ես իսկ զգում եմ, տեսնում եմ ահա —
Տիեզերքը ողջ — մի մեծ, անհուն զանգ,
Եւ հոգիս — նրա լեզուակը վսեմ:

Եւ հրաճճերով, վեհ լռութեան մեջ
Տիեզերէն անծիր՝ ղողանջում է խոր
Երգն անհունութեան, եւ յաւերժութեան,
Եւ ճշմարտութեան եւ գեղեցկութեան:
Եւ ղողանջում է տիեզերքն ամեն —
Եւ իմ հոգուսմն է, իմ ոգին է այն,
Որ ղողանջում է — ես մարգարէ եմ...

Եւ ահա այնտեղ ամբոխն է ծփում
Ծանր ու թանձր՝ ովկիանի նման.
Եւ գո՛րշ, հարբ է նա — զանգուած մի հսկայ:
Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում —
Ղողանջը զանգի տիեզերական:
Եւ դեպի ամբոխն իջնում եմ ահա
Նո՛ր կտակներով, նո՛ր պատգամներով.
Ինչ նրա հոգին գահավիժում եմ՝
Նրան խայթելու, եւ խարոզելու,
Ե՛ւ արթնանելու, ե՛ւ այրուելու...

* * *

Է՜յ ջան հայրենիք, ի՜նչքան սիրուն ես,
Սարերըդ կորած երկնի մովի մէջ.
Ջրերըդ անո՛ւշ, հովերըդ անո՛ւշ,
Մենակ բալէքըդ արուն-ծովի մէջ:

Քու հողին մեռնե՛մ, անգի՛ն հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,
Երնէ՜կ ունենամ հազար ու մի կեանք,
Հազա՛րն էլ սրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,
Բալէքիդ մատաղ, մատա՛ղ քու սիրուն.
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,
Է՛ն էլ քու փառքի գովքը երգելու.

Որ արտուտի պէս վե՜ր ու վե՜ր ճախրեմ
Նոր օրուայ ծէգիդ ազի՛զ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զի՛լ գովեմ
Կանաչ արեւըդ, ազա՛տ հայրենիք...

1900

ՔՆՔՈՒՇ ՏԱՏՐԱԿՍ

Քնքո՛ւշ տատրակըս, դու անծանօթի,
Դու օտարի պես մօտովըս անցար,
Ինչ եղաւ քեզի, որ վառ կարօտի,
Ծով-արցունքներըդ այդպես շուտ մոռացար։

Գընա՛ մոռացի՛ր, եւ բաղդը քեզ հետ,
Ո՛ւմ հետ որ կ'ուզես, թըռի՛ր ու գընա՛,
Շինիր քո բոյնը, ում հետ որ կ'ուզես,
Թող տունըս մնայ տըխուր, վերանա։

Թո՛ղ օճախիս մէջ կըրակ չը շողայ,
Մարած տանըս մէջ թո՛ղ ոռնայ քամին,
Թո՛ղ վայէ քամին չոր գլխիս վերայ,
Ես չե՛մ հաւատում կընոջ երդումին...

* * *

Ձայնըս հնչում է խաւարի խորքից,—
Գըթա՛, յայտնուի՛ր, սուրբ ճշմարտութիւն.
Ես քեզ եմ փնտռել իմ կեանքի շեմքից,
Եւ տե՛ս, քարացայ անհուն տանջանքում:

Թիւր ուղիներով ես դիմեցի քեզ,
Քո հետքն ու շուքը նոյնիսկ չը գըտայ.
Տե՛ս, սըտութեան մէջ, մոլորութեան մէջ
Ջախջախուեց կեանքս... ու դու չե՞ս գըթա...

Յոգնած եմ հիմա, անուժ ու հիւանդ,
Բայց հաւատում եմ — ունիս գոյութիւն.
Բայց էլ չը մնաց մի ուղի անյայտ.—
Ա՜խ, երեւացի՛ր, մեծ ճշմարտութի՛ւն...

Եւ ես ուժ կ'առնեմ, կը զօտեպընդուիմ,
Ցուպըս կը վերցնեմ եւ ճամբայ կ'երթամ,
Լոյսըդ կ'աւետեմ խաւար աշխարհին,
Մոլոր մարդկութեան վե՛հ կեանքդ կուտամ.

* * *

Է՛յ դու մահուան անմահ ափսարհ,
Գերեզմանի պես տխուր
Թախս ես կրել մարդուս համար,
Ձնդան ամուր, ամրակուռ:

Է՛յ զուլում բախս, դու առիւծ ես,
Խեղճ եղնիկ եմ ճանկիդ մէջ.
Ինձ խարեխար հերիք զարնես,
Սիրտս խամես ճանկիդ մէջ:

Ո՞ւմ գանգատուիմ, դիւան կանչեմ,
Ջո ճանկերէն ազատուիմ.
Ձեռ ու ոտս անտես օղթայ,—
Ու ելէ չունիմ, յոյս չունիմ:

Ինչքա՜ն կանչեմ ու աղաչեմ,
Վերջ էլ պիտի, փուչ-ափսարհ,
Մի բուռ հողով բերանս ծեփես,
Ցաւի, մահի սեւ-ափսարհ...

ԾՈՎԸ

Ծովը յոգնած, փըրփուր բերնին,
Ափին ընկած կը հեւայ,
Ժէռ ափերից մէգը մըթին
Ծովի վըրայ կը սողայ:

Վէրքը սըրտիս անքուն-անտուն,
Կեանքից հեռու եմ փախեր,
Կ'ուզեմ ապրեմ վայրի ափում,
Ապրեմ մենակ. անընկեր:

Աստղունք մէկ-մէկ ելան բազման
Երկնի փերուզ աթոռքում,
Աստղերի պէս երգերս ելան
Հոգուս մըռայլ խորքերում:

Սըրտիս լարերն տրտում-տրտունչ
Կեանքըս թօշնած երգեցին,
Հովը հեւաց մունչ ու մըրմունչ,
Աստղունք վըրաս լուռ լացին:

Ամպերն ընկան ծովի վըրէն
Հազար բերնով ջուր խըմին,
Թըռաւ որորն խոլոր ծովէն,
Ծըւաց, նըստաւ թուխ քարին.

— Ես է'լ քեզ պէս. մենիկ ոլո'ր.
Աչերս՝ արցունք ու տըրտում,
Կը թափառիմ ոլո՛ր-մոլո՛ր,
Կեանքի հեռո՛ւ ափերում...

* * *

Իրիկունն եկաւ, տնէ-տուն մտաւ,
Վառեց ճրագներ՝ կարմիր ու պայծառ.
Բարի երեկոն, ա՜խ, ինձ տես չեկաւ,
Ու տունս մնաց սրտիս պէս խաւար:

Տուն դարձան հանդից հարեւան, դրկից,
Ուրախ բոլորան հացի սեղանին.
Դուն ո՞ւր մնացիր, իմ ազիզ կտրին,
Աչքս ծով դարձաւ քու անուշ ճամբին:

Գիշերն էլ եկաւ, ու քնածներուն
Բերեց երազներ՝ նշխուն ու զառ-վառ.
Ա՜խ, ես մնացի մենակ ու անքուն,
Երազս դուն ես, ու դուն էլ չեկար...

* * *

Իմ այրող վշտից սիրտըս է մաշուել.
Կեանքըս է մաշուել, էլ ի՞նչս մնաց.
Լամ ու արցունքըս աղի-ծով դառնայ,—
Միայն թէ մայրըս վիշտս չիմանայ:

Ա՜խ, գլուխս առնեմ, ընկնիմ սարերը,
Զարկե՜մ քարէ-քար, զարկեմ քարէ-քար.
Սիրտս գայլերին թող բաժին դառնայ,
Միայն թէ մայրըս մահս չիմանայ:

⁂

Տարիներ յետոյ քեզ տեսայ նորից,
Սիրտս արտասուեց, բայց ժպտացի ես,
Նոյն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից,
Հոգուս մտերիմ, հարազատ այնպէ՛ս:

Աչքերդ մեղմով հանգչեցին վրաս,
Ես հպարտ ու վես անցայ քո մօտով.
Շուրջս ծածանուեց յուսեղէն երազ,
Եւ ես նայեցի անզուսպ կարօտով:

Սուտ է, նազելիս, չի զատել երբէք,
Երբէք չի զատել մեզ կեանքը դաժան.
Քո՛յր իմ, ամոքիր սիրտս վշտաբեկ,
Տե՛ս, քոնն եմ ես միշտ, քո՛նն եմ յաւիտ-
եան:

⁂

Այսօր ձեր տուն մեծ խնճոյք կայ.
Դու կը բուրես վարդի պէս.
Չորս բոլորդ հարուստ տղայ,
Դու կը փայլես աստղի պէս.

Ձեր տան առաջ՝ ձիւն ու գիշեր,
Ա՛խ, ես կանգնել կը դողամ.
Դու դահճի պէս ա՛լ ես հագել,—
Ալըդ շողքն է իմ արեան...

* * *

Ժեռ սեւ ֆարը սրտիս վրայ
Գերեզմանիս մութ խորխում,
Դարդի սարը սրտիս վրայ՝
Քնել էի հողի ֆուճ:

Գարուճն եկաւ, Շուշանս եկաւ
Տատրակի հետ ձայն տուաւ,
Տատրակս եկաւ, ֆարիս նստաւ,
Ինձի աճուռ ձայն տուաւ:

«Ե՛լ, ազիզ ջան, Արփաչայի
Ուռիներբ ծաղկում են.
Ուռիներեն նիւղէ եմ բերել՝
Քեզի իրենց կանչում են:

—«Ե՛լ, ազիզ ջան, գարուճն եկաւ,
Ալ-բալ հագան սար ու ձոր.
Քեզի շաղաղ վարդ եմ բերել,
Երթանք, մանք գանք սար ու ձոր:

«Ե՛լ, ազիզ ջան, հովն է բուրում,
Գառն ու ոչխար սարն ելան.
Ալագեազը սիրտն է բացել.
Ալագեազին տես երթանք»...

Ա՜խ, ժեռ-ֆարը սրտիս վրայ,
Խոր, հին վէրքը սրտիս մէջ.
Ու վեր ելնել ես չը կրցայ,—
Սէրն էլ մեռել սրտիս մէջ:

* * *

Այս ուռու տակ մենք երգեցինք
Սիրոյ չքնաղ երգերից.
Մենք երգեցինք ու ընչեցինք
Բուրմունք, ժպիս ու թախիծ:

Այս ուռու տակ, ընկե՛ր անգին,
Դու ինձ սիրել խոսացար.
Անցան տարիք,—չորցաւ ուռին,
Ու դու էլ ինձ մոռացար...

* * *

Երազիս տեսայ. որ ծովի ափին
Ես ընկած էի խոր վերը ուրիս.
Եւ ալիքներր մեղմ ծփում էին՝
Անուշ օրորով ինձ անդորր տալիս:

Երազիս տեսայ, որ ընկերներս
Ուրախ երգելով անցան ծովափով.
Սակայն... ոչ մեկը ինձ ձայն չը տուեց.
Իսկ ես լուռ էի մաճուռան խոր վշտով...

* * *

Ա՜խ, ես սիրու ճամբի ափում
Մեծակ բուսած վայրի վարդ եմ.
Ացց ու դարձի փոշին ծփուց
Վերաս իջած, կորած վարդ եմ:

Սիրուհիներր պարտեզներին
Ջնիուշ պահած վարդն են սիրում.
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝
Սերս հասած արեւներում:

Ացն ու դարձող ինձ չի ճայում,
Իսկ ես սիրու ծով-ծարաւ եմ.
Ծարաւ սիրս փշեր բուսցուց,
Հիմայ չար եմ ու ճախաճձ եմ...

* * *

Դեպի ամապատ հողմը կը սուրայ,
Խոր լուռթեան մէջ կանցնի, կը մարի.
Դեղին ֆարերէ իմ շիրմին վրայ
Կը բուսնի մեծակ տատասկը վայրի:

Եւ ամապատում, եւ յաւերժական
Անուրջում հոգիս կը լսէ, կըզգայ
Ղօղանջը զանգի տիեզերական
Եւ մեղմ կը գգուէ տատասկին դժնեայ...

* * *

Անցուն բոչնակս, իմ խեղճ, տխուր երգ,
Դու ի զուր թռար իմ սիրող սրտես.
Գլուխ դնելու մեկ տեղ դու երբեք,
Գիտեմ, չես գտնի, ինչքան թափառես:

Այս փուշ աշխարհում քար-սրտերի մեջ,
Երգ ի՛մ, քեզ համար վայել վայր չը կայ.
Դու՝ օսար բոչուն, ժեռ քարերի մեջ,
Դու՝ կեանք, դու՝ տանջանք — շուրջդ անգթայ...

* * *

Եւ վաղո՜ւց, վաղո՜ւց խո՜ր ցուն է մըտած
Կեանքի տաղտուկից յոգնած իմ հոգին.
Սակայն տեսնում է մի մե՛ծ, վեհ երազ
Իմ չի՛նչ ու մաքուր, իմ խորունկ հոգին:

Տեսնում եմ ահա՛, որ բարձունքներից
Իջնում է մի կոյս լազո՜ւր թեւերով.
Որ զարթնեցրնէ, թրոցնէ հոգիս
Երկնի համբոյրով, աստղերի բոյրով:

Եւ տիւ, եւ գիշեր ես սպասում եմ,
Թէ ահա կը գայ կոյսը դիւթական,
Որ զարթնած հոգով երգեմ վեհորեն
Երազըս չքնաղ, մարգարէական...

* * *

Արագի ափին բոստանըս լինի,
Սա վի ուռ տընկեմ, վարդեր ու լալա.
Հով ուռենու տակ քողտիկս լինի,—
Օջախիս միջին կրակ բոցկըլտայ:

Ու սրտով սիրած Նուշանըս լինի,
Օջախիս կողքին գուրգուրենք իրար.—
Արագի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Նուշիկիս համար:

* * *

Ծամերդ հիւսել՝
Կանգնել ես կալը.
Օրս սեւ արել՝
Կապել ես այլը:

Փշերն ինձ թողնիր,
Դու քաղիր վարդը,
Դու սիրտս քցիր
Էս դժար դարդը:

Սարէ սար արիր,
Ու ղադար չունիմ,
Դարդամահ արիր,
Անունիդ մեռնիմ...

* * *

Հոգիս մըռայլ էր մրըրկի նըման,
Եւ ծանր էր վիշտըս. Եւ ես քուն մտայ,
— Ինձ տանում էին դէպի կախաղան,
Եւ խոժոռ ճակտիս պըսակ տատասկեայ։

Եւ խօսքըս մուրճ էր, եւ խօսքըս՝ հըրդեհ.
Ես փշրում էի սըրտերը մարդկանց.
Եւ խօսքըս մուրճ էր, եւ խօսքըս հըրդեհ.
Ես այրում էի սըրտերը մարդկանց։

Ինձ տանում էին դէպի կախաղան
Սըւինների տակ զինավառ զօրքի.
Եւ հետեւում էր ամբոխն ինձ անձայն,
Ամբոխը հոգու եւ նանիր խօսքի...

Ինձ բարձրացրին դէպի կախաղան.—
Եւ ճակտիս՝ ցորք եւ վսեմ պսակ,
Ամբոխը սակայն թշուառ եւ ունայն
Խուռըն սողում էր իմ ոտների տակ...

* * *

Ձմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սառերու ծուն.
Ճամբայ բացուաւ դարիբներուն:
Իմ դարիբին խաբար չի գայ.
Աչխս ճամբին՝ դադար չըկայ:

Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
Իմ դարիբի սիրտն է բնիշուշ,
Ոտ կը փոխէ՝ բրտայ ու փուշ...
Հերիւ մնա՛ս, դարձի վաթան.
Իմ ախպե՛ր ջան, ազիզ յա՛ր ջան:

Ջուրն է պրծել՝ կուգայ սարէն,
Սարէն. ձորէն... իմ աչերէն...
Մի՛ նորոգիր սրտիս եարէն:
Դարձի վաթան, հողն անուշ է,
Հողն անո՛ւշ է, ջուրն անո՛ւշ է...

ԴՈՒ ՉԵՍ ՀԱՄԿԱՆԱՑ

Չեմ տեսնում ջեղ զարդերը գարնան,
Վշտից խաւարեց գոհարն աչերիս.
Ծաղրացաւ ափսարհն ուսերիս վրայ,
Չուր ես հարցընում պատճառը վշտիս:

Ես՝ զաւակ ճնշուած ու դժբախտ ազգի,
Որ արիւնով է իր ուղին թրջում.
Որ դարե՛ր, դարե՛ր թափը իր բազկի
Շղթան է կրծում ժանգոտ, շառաչուն:

Շղթան շառաչուն, ծանրր ու ժանգոտ,
Ինձ տապալել է, կաշկանդել գետնին.
Ինձ տրորում են անցնող ու դարձող.
Դո՛ւ մի կարեկցիր իմ անհուն վշտին:

Իմ մօր սուրբ խօսքը — ծաղրի ճշաւակ.
Իմ հայրենիքը — սիրտս ու հոգիս —
Ու յօտոում են, պղծում ոտնատակ,
Դու չես ըմբռնի անդունդը վշտիս...

Ես՝ զաւակ ճնշուած ու փոքրիկ ազգի,
Սրտիս արիւնով մեծ վիշտս եմ գրում.
Վէրքը անդարմանի իմ հայրենիքի
Իմ բիւր խոցոտուած սրտումս եմ կրում:

Սիրե՛լ, երազե՛լ, թռչել եմ ուզում.
Բայց օդքաց ինձ պինդ գամել է գետին,
Կուռ լուծը ազգիս՝ ուսերս է փշրում,
Չես կարող հասնել իմ աճապ վշտին.

Տիեզերական զայրոյթով, թոյնով
Արդ՝ ես ինքս ինձ խայթում եմ ահա՛.
Թո՛ղ մեռնիմ. կորչիմ աննեռս, անանուն,
Իմ անյոյս վիշտը դու չես հասկանայ...

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Դարդը՝ սրտիս, աղէաս ու խեղճ,
ցուպը ձեռիս, գլխակոր.
Շատ տարիներ պանդուխտ եկած՝
նորեն դարձայ հայրենիք.
Կեանքի բեռով մէջս ծռած,
միտքս շուար ու մոլո՛ր.
Ծօթը սարեն, ծօթը ծովեն
դարձայ նորեն հայրենիք։

Իմ հայրենի գեղի հանդում
տեսայ մանկութ ընկերիս.—
Ա՛խ, ընկեր իմ, կարօտ սրտով
նրա առաջ վազեցի,
Ասի.— «բարո՛վ, անգին ընկե՛ր,
չե՞ս ճանաչում դուն իննի».
— Ախըր ես շա՛տ փոխուեր էի...
չը ճանաչեց նա իննի։

Ցուպը ձեռիս գեղը մտայ,
անցայ եարիս տան ճամբով.
Տեսայ եարս վարդը ձեռին՝
մենակ կանգնած դրուան մօտ.
Ասի — «բուրի՛կ, ազիզ տեսիդ
արժանացայ ես բարով...»
Նա էլ իննի չը ճանաչեց...
Աղէաս էի ու փոշոտ...

Դարդը սրտիս հասայ մեր տուն,
տեսայ ծերուկ, խեղճ մօրըս.
Ասի — «Նանի՛, ճամբուդ մարդ եմ,
գիշերս ինձ հիւր կ'ընդունե՞ս»:
Ա՜խ, մերի՛կ ջան... վզովս ընկաւ.
Սրտին գրկեց ու յացեց·
«Ա՜խ, բալա՛յ ջան, դարիբ բալա՛յ,
էդ դո՞ւն ես...».

* * *

Ես ձեզ ասում եմ՝ կը գայ ոգու սով,
Եւ դուք կը բաղցէք ճոխ սեղանի մօտ,
Կընկնէք մուրալու հափրած որկորով՝
Հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ:

Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեղմուցք—միտք ու երազանք,
Նիւթի տաճարում արբած ապրեցիք՝
Մոռացած անմահ, անհուն տենչանք:

Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր ցիւրի հանդէպ կը գայ ոգու սով.
Եւ մուրացկի պէս փշրանքի համար
Ծարաւ ու ցօրի կանցնէք ծովէ ծով:

* * *

Օսա՛ր, ամայի՛ ճամբէի վերայ
Իմ խարաւանըս մեղմ կը ղօղանջէ.
Կանգնի՛ր, խարաւանս, ինծի կը թուայ,
Թէ հայրենիէս ինձ մարդ կը կանչէ:

Բայց լո՛ւռ է շուրջըս ու շըշուկ չը կայ
Աւեվա՛ռ, անդո՛րր այս անապատում.
Ա՛խ, հայրենիքըս ինձ խորթ է հիմա,
Ու ճնճուղ սիրըս ուրիշի գրկում:

Կրնոջ համբոյրին ե՛լ չեմ հաւատայ,
Շուտ կը մոռանայ նա վառ արցունքներ.
Շարժուի՛ր, խարաւանս, ինձ ո՞վ ձայն կը տայ
Գիտցի՛ր, լուսնի տակ չըկայ ուխտ եւ սէր:

Գրնա՛, խարաւանս, ինձ հետդ խո՛շ տուր
Օսար ամայի ճամբէի վրայ.
Ուրտեղ կը յոգնիս՝ գլուխըս դիր վար —
Ժեռ-խարերի մէջ, փըշերի վրայ...

ԸՆԿԵՐԻՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա՜խ, նորից եկաւ լալազար գարուն,
Թաւշեայ գալարով շնչեցին արտեր.
Նորից ծաղկեցին աղբըրաց-առուն,
Հազար բուրմունքով հազարան վարդեր․
Աւա՜ղ, նա, որին շա՜տ էր նըմանում
Գարունը սիրուն, նա չկայ հիմա.
Նրա հետ մեռաւ սէր ու խնդութիւն,
Նրա հետ մեռաւ երգը գարունքուայ:

Եւ քար-արցունքով կուրծքըս եմ ծեծում
Ու չեմ հասկանում, մի՞թէ մեռար դու.
Դո՛ւ, որ երգ էիր, աշխոյժ ու կըրակ,
Ի՞նչպէս ես մնում սառ հողերի տակ,
Ի՞նչպէս չես ելնում, արեւը երգում.
Այդպէս լո՛ւռ, անշարժ մինչեւ ե՞րբ մնաս
Գարնան զարդերին համր, անտարբեր,
Դո՛ւ կեանք, դո՛ւ երազ, իմ անո՛ւշ ընկեր:

* * *

Մենակ մանկութեան օրերն են անո՛ւշ,
Գողտրիկ ու բուրեան, չքնա՛ղ ոսկեփա՜յլ.
Եւ այնուհետեւ մեր կեանքն անյոյս
Գահավիժում է անդունդը մըռայլ:

Ու մէկիկ-մէկիկ մեր կեանքի ծառից
Եւ վայր են ընկնում, քշւում հողմավար
Մեր լաւ տենչերը, սէրը ծաղկալից,
Վառ համբոյրների գարունը պայծառ:

Եւ ո՞վ սիրտ ունի մերկ ծառ ի նըման՝
Կանգնել աշխարհի հողմերին պատուար—
Կեանքի ձանձրոյթին, ծաղրանքին մարդկան
Իշխող բըռունցքին՝ չոր հացի համար...

Աւա՜ղ, լուսնի տակ եւ վեհ բան չը կայ,
Ամէն ի՛նչ կոպիտ, քիրտ, անասնական.
Անհիւթ, անմարմին, անկիրք սէր չը կայ.
Ա՜խ, մաքուր սէրը երազ է միայն:

Ես շա՜տ եմ լացել սուրբ սիրու համար
Եւ ես լաւ գիտեմ գինը ամէնքի —
Սէրն է անկումը մեր աստուածութեան,
Ցըրջմոլիկ հուրը կրքերի ճահճի:

Եւ ո՞վ կարող է օտարից սիրել
Կամ մերձաւորից՝ աճիւն, աճսահմաճ.
Ուրիշից սիրել իրենից աւել.
Ընկերից սիրել — պատրաճք է միայն.

Եւ ո՞վ կարող է ուրիշից ըզգալ,
Որպես իր եսը, հասկացալ ցրաճ.
Ա՛խ, մենք ապրում ենք աճձաճօք իրար,
Օտա՛ր ու հեռո՛ւ՝ աստղերի նըմաճ:

Բայց բիւր երաճի, ով երազ ուճի
Իր հոգու աճիւն սրբութեաճ խորհուրդ.—
Մի օբեղ երազ, որով ճա կապրի
Աշխարհից հեռո՛ւ, բիւրեղ բարձուճքում:

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՁԱՆԳ

Ազատութեան Զա՛նգ, դու վե՛հ ղօղանջէ՛
Կովկասեան վսե՛մ, վէ՛ս բարձունքներից,
Ինչպէս մրրիկ՝ շաչէ՛, շառաչէ՛,
Մինչեւ սիգապանծ ազատ Մասիս:

Անյագ վրէժի ե՛ւ ըմբոստացման,
Ե՛ւ բուռն ցասման բարբառը հնչէ՛,
Ժողովուրդների անկա՛խ, ինքնիշխա՛ն՝
Դաշն ազատական խռովս ղօղանջէ՛:

Լեռներից խրնիք, եւ ձորերից-ձոր,
Եւ սրտերից սիրտ ձայնդ բո՛ղ բռչի,
Եւ ըղդվըզումի պատգամդ հզօր
Ցաւիտեան անդուռ երբէք բո՛ղ չը հանգչի:

Ըմբոստ ոգիներ՛, թեւ առէ՛ք, հասէ՛ք,
Եւ զանգահարեցէք ամո՛ւր, միհամո՛ւռ.
Զանգն ազատութեան զանգահարեցէ՛ք
Կովկասի համար հանո՛ւր, ընդհանո՛ւր:

Եւ որոտա՛, Զա՛նգ, եւ արթնացըրու
Դարեւոր ցիրհից Մասիսն ու Կազբէկ,
Թափ տո՛ւր թեւերդ. արծի՛ւ լեռներո՛ւ,
Քրնած առիւծնե՛ր, բաշերդ թոթռէ՛ք:

Եւ բաւական է՝ անարգ լծի տակ
Մենք տրտում մնանք՝ ձեռներս ծըղքայ.
Կապանք փշրելու մեզ քո՛յն ու կրակ,
Մեզ ուժ եւ կորով. վըրէժ որոտա՛.

Եւ մեզ ամէնքիս մռընչա՛, կոչէ՛
Մահուան ու փառքի դաշտը պայքարի.
Սրբազան ռազմի շեփորը գոչէ՛
Ընդդէմ բռնութեան, ամբարիշտ Չարի։

Եւ ազատութեան նորոգ արեւի
Ոսկի ներբողը, Զա՜նգ զուարթ հընչէ՛.
Բիւր գագաթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրութեան տօնին մեզ կանչէ՛։

* * *

Աղբիւրի մէջ մի մարալ
Շուրճ է տեսել եղնիկին —
Ու մաճ կուգայ միալար
Մուրիկ-մուրիկ եղնիկին:

Այն եղնիկն էլ երազին
Մարալի ձայնն է լսել.—
Ու մաճ կուգայ մարալին
Մուրիկ-մուրիկ զոր-գիշեր...

* * *

Անտուն համու պէս փակ դուռըդ, գիտե՞ս,
Ես շատ եմ ծեծել ու դու չես բացել.
Սարերն եմ ընկել վշտից խելագար
Ժայռերին զարկուել ու շատ եմ լացել:

Սարերն են վկայ, որ օրից մի օր
Վատ չեմ խօսացել, գանգատուել էեզնից.
Աւա՜ղ, լցրել եմ լացով սար ու ձոր,
Բայց չեմ գանգատուել, բամբասել էեզնից:

* * *

Անապատում, միրաժի մեջ մի բեդուին
Շողից է տեսել մի աղջկայ գեղեցիկ.
Եւ փրնտռում է հոգեսքյա՛ց տենչագին
Ծով-կարոսով ա՛յն աղջկան գեղեցիկ։

Եւ ծարաւուս անապատում հըրավառ,
Տատասկներում, արեւի տակ բոցափայլ
Փնտռում է նա նրան անվե՛րջ, անդադա՛ր
Եւ մեռնում է վեհ սիրոյ մեջ հոգեվարյլ։

Եւ էքնի մեջ — աննիւթական, անվախճան,
Տեսնում է նա այնպե՛ս էնէռ՛ւը ու սիրուն
Շողքը չքնաղ այն նազելի աղջկան
Եւ փրնտռում է նրան յաւերժ հրազում...

* * *

Վարդի շրթունքդ, աղջի՛կ աչագեղ,
Համբոյրի համար հասել է ահա.
Օ՛, մի՛ արձակիր մազերդ շեղ
Ցոգնած, ջարդուած իմ կրծքի վրայ։

Գարունը վաղուց գնաց իմ սրտեն,
Եւ սիրտս հիմա՝ ծաղըր, վըշտահար,—
Վարդի շրթունքդ հասել է արդեն
Հնչուն համբոյրի, բայց ո՛չ ինձ համար...

* * *

Մէկը չեղաւ, որ իմանար վշտերս,
Քնքուշ ձեռքով դարման անէր վէրքերիս.
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերս,
Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս։

Կեանքս կը տամ սրտից բղխած համբոյրին,
Ա՜խ, թէ մէկը ինձ հասկնա՜ր ու սիրէ՜ր։
Ի՞նչ կայ երկրում ե՛ւ սրբազան, ե՛ւ անգին.
Քան թէ զոհուել, քան թէ լինել անձնուէր։

Բայց ես կեանքում շա՜տ սիրեցի ու լացի,—
Մէկը չեղաւ, որ ամոքէր վշտերս,
Սիրող սրտի ծարաւ, ծարաւ մնացի,
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերս...

* * *

Նրանք իմ կեանքը երազ դարձուցին —
Կուսական մաքուր աչերը անո՛ւշ.
Ցամաքած սիրտս նորից լացուցին.

Հոգիս վառեցին երգերով քնքո՛ւշ,
Շուրջըս փռեցին աստղիկ ու ծաղիկ —
Կուսական մաքուր աչերը անո՛ւշ...

*
* *

Ֆո՛յր իմ ճազելի, ճայիր ես դիմաց՝
Վիրաւոր, աւեր սիրտս եմ բացել.
Ա՜խ, ըրևիրական իճն ես գիրկը բաց
Եւ գուրգուրիր իճն, ես շա՜տ եմ լացել...

Ֆճիուշ ձեռճերով աչերըս սրբիր,
Մի՛ թող իճն լալու — ես շա՜տ եմ լացել,
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր,
Եւ գուրգուրիր իճն, ես շա՜տ. եմ լացել...

*
* *

Եւ սերըդ սիրտըս կարեվեր խոցեց,
Վերիս այս, ֆո՜յր իմ, դեղ-դարմաճ չը կայ.
Սիրուս արցունճով ափսարհ թաթախուեց,
Բայց դո՛ւ մճացիր օսա՛ր, աճրզգայ...

Եւ ո՛ւր լինում եմ. ես սերճ եմ երգում,
Սիրտըս դեպի ֆեզ թռչում է յաւերժ.
Ուրիշին գրկած՝ ես ֆեզ եմ զգում,
Ուրիշի գրկում,— բայց ֆոճճ եմ յաւե՜րժ...

Եւ դու յաւիտեան աճհաս ասղի պես
Իճճից հեռո՜ւ ես, իճճից հեռո՜ւ ես...

* * *

Դու անցորդի պէս քեզ միայն ըզգա՛յ,
Եւ որպէս ճամբորդ այս երկրի վըրայ.
Ազատ հայեացքով նայի՛ր ամէնին.
Եւ անվերջ քայլիր քո անյայտ ուղին։
Սիրտըդ արքազան վըշտով թաթախի՛ր,
Հեռաւոր ափեր գընա՛, թափառի՛ր.
Անյագ որոնի՛ր մի վեհ ընկերի,
Սիրի՛ր, բայց սիրուն մի լինիր գերի.
Սիրի՛ր, բայց եւ թո՛ղ, եւ նորից գընա՛յ
Ազատ ու մենակ — աշխարհիս վըրայ։
Եւ երազ մի վա՛ռ, շքեղ, սուրբ եւ վեհ
Այս հողի-երկրից հոգիդ թըռցնէ.—
Կարօտով ձըգտիր աստղերին անշէջ
Եւ մեռի՛ր աստղէ-ոլորտների մէջ...

* * *

Ա՜խ, իմ սիրուս վառ գարունը թօշնեցաւ
Զառ վարդերս կոկոններում մընացին,
Դալար արտիս սուրբ արցունքը քարացաւ
Ու ծանրացաւ արտիս վրայ դառնագին։

Մեռի՛ր, գընա՛... առանց քեզ էլ կեանքը կայ,
Ուրիշ վարդեր կը շողշողան գարունքին.
Ուրիշ շըրթներ գուցէ վաղը կամ հիմայ
Կը համբուրեն քո սիրածին կաթոգին...

* * *

Երկինք հիասքանչ, շքեղ, լուսալից,
Հոգիս արթնացուց լըռութեան երգով.
Եւ այս տաղտուկից, կեանքի անձուկից
Թափ առաւ հոգիս երազ-թեւերով։

Եւ տիեզերական խորութիւնների
Անճառ վայրերում հոգիս սաւառնեց.
Եւ խորախորհուրդ, վեհ գաղտնիքների
Անխօս բարբառին լուռ ունկընդրեց։

Եւ տեսաւ նրա ափերը անծիր,
Անսահմանութեան սարսափն ահաւոր.
Աստղի քարւաններ, բոյլեր ցանուցիր,
Ուժերի յախուռն յորձանքը հզօր։

Եւ երկիւղածին հոգիս հաղորդուեց
Յաւիտենութեան խոհերին վսեմ,
Անմահ էութեան հալուեց ու ձուլուեց,
Ինչպէս մի հընչիւն, հիւլէ մի նըսեմ…

* * *

Զմրուխտեայ երգեր, երազներ ճեղ,
Գարնան վարդի հետ եկան գնացին.
Համբոյր ծաղկաբոյր եւ սէր հրաշագեղ
Գարնան հովի հետ եկան, գնացին:

Ուրիշ նման բոյն չըշինեցիր,
Կեանքի մրրկով զարկըւած բոյնի,
Ու հիմա մենակ ու որբ մնացիր,
Եւ քաղց տարիներդ եկան, գնացին:

Անտուն մնացիր ու թափառական,
Ընկեր, բարեկամ եկան, գնացին,
Մոլոր ճամբէներում մնացիր մոլոր,
Բարաւան, երամ եկան, գնացին:

Ու հիմա աճեան մեգի մէջ խաւար,
Ականջըդ յառած սրտիդ լուռ լացին,
Օտար ափերում կանգնել ես շուար,
Ինչ որ ունէիր. անդարձ գնացին...

* * *

Նման գայլերի խրմբին ամեհի,
Ձմրան գիշերին ոռնում է քամին.
Եւ իմ պարտիզում — մռա՛յլ, ամա՛յի,
Խեղճ ուռիներիս ջարդում է քամին:

Ա՛խ, մանկուց լացեց ես սիրը, սի՛րտ իմ,
Ոչ ո՛ք չհասկացաւ երազդ աղուոր.
Զուր մի՛ որոնիր սիրտ մի մտերիմ,—
Ծնուել է հոգին յաւերժ մենաւոր:

Հանի՛ր ես սիրտ սրտիցդդ անյոյս,
Այդ խորթ, ապօրեն զաւակն աշխարհի.—
Չգի՛ր այս դաժա՛ն, մո՛ւթ գիշերին դո՛ւռ՝
Յուրտ քամու բերան...քո՛ղ երթայ սառի...

Քո՛ղ յայ, հեծեծայ սիրտս՝ որբ, անմա՛յր,
Եւ քամին լացը նրա քո՛ղ տանի
Ալեկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդո՛ւ մոս... երբեք չը տանի...

Ոռնում է քամին, վայում դժընդակ
Մռայլ գիշերին ձիւն-ձմեռայնի.
Եւ սիրտս ջարդուած ուռիների տակ
Մեռնում է մենակ.— քո՛ղ երթա՛յ մեռնի...

* * *

Մռայլ ամպերից, հըզօր կայծակով
Սիրտը շանթահար մի մըրըկահաւ
Ծովափի խոժոռ ժայռերին ընկաւ։
Եւ ընկաւ, ծածկուեց հողով ու քարով,
Թաւ մամուռ պատեց նրա շիրիմին,
Եւ տարիք անցան համըր շարքերով։

Բայց երբ երկնքում իրար դէմ ու դէմ
Ամպերն են խառնւում եւ որոտում են՝
Յուզուած սրտերում կըրակ ու կայծակ,—
Նա յուռ յիշում է, որ տարիք առաջ
Իրեն սրտումն էլ տենչ կար ու կրակ,
Որոտ ու գայրոյթ եւ սէր ու շառաչ...

*
* *

Եւ անապատից, հեռո՜ւ ծովերից
Եւ դարբասներից, թէ խուլ բանտերից
Լըսում եմ անվե՛րջ, գիշեր ու ցերեկ
Ողբ ու հեծեծանք մի՛շտ, ամենուրէք.
Տեսնում եմ արցունք՝ ժըպտի հետ հիւսուած,
Հացի հետ՝ արիւն — վի՛շտ համատարած...
Եւ ծով-արցունքներն անծայր աշխարհի
Ամէն խորշերից, ամէն սըրտերից
Կաթիլ ու կաթիլ հաւաքւում, գալիս,
Թափւում են վըշտոտ, խոցուած սրտիս մէջ...

*
* *

Եւ արծիւ մը սեւ իջաւ սըրարշաւ,
Իջաւ երկնից եւ կուրծքըս փըշրեց
Եւ սիրտըս կըտցեց, եւ սիրտս տարաւ
Դէպի վե՜հ լեռներ, ժայռեր բարձրաբերձ։

Եւ նետեց սիրտըս վառ լազուրի մէջ,
Խրոխտ բարձունքին հզօր լեռների,
Եւ շուրջս այն օրից լըսում եմ անշէջ,
Շառաչումները արծուի թեւերի...

* * *

Կեանքի կռւում ամէնքը դէմ ամէնքին՝
Սուր են սրում ամէնքը դէմ ամէնքին:

Սուրն իմ ձեռքից՝ կուի հանած՝ ընկաւ վար,
Ես չեմ կարող մտնել պայքար անարդար —
Խլել բերնից արնոտ հացը աղքատի,
Վատ էրտիկը ծրծել տանջուած ճակատի...

Սուրն իմ ձեռքից՝ կրուի հանած ընկաւ վար,
Ես չեմ կարող մրտնել պայքար ինձ համար...

* * *

Առաւօտուն ծով ճաճանչում
Արեւուն ուրախ ճախրում է վեր.
Ցաւ ու խաւար չի ճանաչում՝
Երգում է լոյս, երգում է սէր:

Իսկ իմ սիրտը տխուր ու սե՛ւ,
Շուրջըս՝ աւեր ու ցաւեր.
Եւ իմ վշտոտ գլխի վերեւ
Արեւուն ուրախ երգում է սէր...

* * *

Հիմա հեռաւոր, վեհ Հիմալաեաց
Այն երկնասքլաց, վէս բարձունքներում,
Ցախուռըն, ինչպէս ալեկոծ ովկիան,
Հոծ, սոսկավիթխար ամպերն են եռում:

Եւ մրրկայոյզ ամպրոպն է պայթում
Ժայռերին խոժոռ, ահեղադղորդ,
Բուռըն, խօլական կայծակն է ճայթում.
— Եւ Հիմալայը կաճգճած է խրոխս...

Եւ պայխարի մէջ այդ որոտընդոստ
Այնտեղ է այժըմ եւ հոգիս ըմբոստ...

* * *

Միտս զգում եմ ես, որ մի հեռաւոր,
Օտար աշխարհում ինձ պէս վշտահար
Մի սիրտ է այրում՝ անյայտ, մեհաւո՜ր
Եւ երազում է թախծում ինձ համար:

Եւ թւում է ինձ, որ սուրբ համբոյրով
Ես փայփայում եմ ձեռներդ նրա.
Եւ գուրգուրում եմ, գրգռում կարօտով՝
Քնքուշ գլուխը իմ կրծքի վրայ...

* * *

Լուռ պարտիզում սըրտատըրոփ, սիրատենչ
Իմ նազելուն սպասում եմ այս գիշեր.
... Շըշուկ ընկաւ ահա վարդի, ծաղկանց մէջ,
Ծըփծփացին շուրջս մետաքս զառ փեշեր.
Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց,
Կարօտավառ հպարտ կրծքին փարուեցի.
Ծով-մազերի բոյրը անո՛ւշ ծաւալուեց,
Աստղ-աչերին համբոյրներս վառեցի.
Շրթներիցըս ալ-արիւնը կաթկաթեց
Եւ բախտաւոր, եւ երջանիկ լացեցի...

— Վա՛յ քեզ, թըշուառ, ցընորքների խեղճ տղայ,
Ոչ ոք չունիս, ոչ ոք չի կայ՝ քեզ մօտ գայ...

* * *

Կնոջն ուզեցի հաւատալ նորից,
Լալ ու երազել առաջուայ նըման.
Բայց արիւնոտուեց խեղճ սիրտըս նորից,
Եւ որբ մնացի եւ թափառական։

Սէ՛ր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բաղխի դուռըդ ունայն քամու պէս,—
Բայց կ՚ուզենայի յաւիտեան լայի,
Եւ չը ցամաքէր արցունքը սրտէս։

* * *

Իմ հոգին տարագիր մի թռչուն՝
Մրրկով զարնուած, թեւաթափ.
Հողմերն են հեգ գլխիս շառաչում,
եւ ուղիս աննահատում եւ անափ:

Դու բիւրեղ բարձունքում մի երազ՝
Լուսազարդ, եւ ճմուռ, եւ գողտրիկ,
Մի երազ արբափայլ եւ անհաս,
Յաւիտեան հեռաւոր մի աստղիկ:

Ա՛խ, ցայիր մի անգամ ինձ վրայ
Քո անդորր եւ ոո խոր աչերով.
Հայեացքիդ ծովի մէջ գէթ մի պահ
Թող հանգչեմ արեիս հուր-տենչերով:

Իմ հոգին վիրաւոր մի թռչուն,
Զուգի բոյն, չուգի ոուն ու անդորր.
Հողմերն են հեգ գլխիս շառաչում,
եւ ուղիս սեւ ու մութ եւ մոլոր...

* * *

Բադերը վայրի թռաց շուարած.—
Ո՞վ է արշաւում մռայլ գիշերով.
Մրրկի նման ցժոյգին նսաց —
Ես եմ սլանում ցիրուած դաշտերով:

Թռցիմ խոր երկինք, դեպ աստղերն աճեչ
Եւ սիրտս բանամ անհունութեան դեմ,
Ես սուզուել կ'ուզեմ գոռ ամպերի մէջ
Եւ կայծակներով զարկըւել կ'ուզեմ:

Գրծո՛ւծ ու նաճիր մարդկացից հեռո՛ւ,
Վախկո՛տ, նենգամի՛տ, կեղծ ու դաւաճան
Ստոր ու ստրուկ աշխարհից հեռո՛ւ,
Նիւթից միշտ գերի, ագա՛հ ստութեան:

Աշխարհը շարժէ ֆո արտասուէին,
Եւ կինն ու ընկեր՝ զգուանքիդ այդ ծով,—
Անապատ գնա՛ — սիրի՛ր վագրերին,
Եւ այրուիր անմահ արեւի սիրով...

* * *

Անհուն վրէժի եւ ատելութեան
Դըժոխքն է այրում թունոտ իմ հոգին.
Եւ ես չեմ բերում խօսքը հաշտութեան,
Որ ծանր է նստում զրկուածի ուսին:
Անհուն վրէժի եւ ատելութեան
Պատգամն եմ վառում ես ձեր սըրտերում.
Եւ ձեզ ասում եմ՝ ո՛վ դու ցնցոտի,
Դո՛ւ որ թշուառ ես, անտուն, անօթի,
Դո՛ւ որ քու ձեռքին կռել ես շղթայ,
Դո՛ւ որ քրտինքդ՝ դառն ծովացած
Նզովք ես շինել, եւ լուծ քո վրայ —
Ես քո ժանիքը սրում եմ հիմա:

Կանգնեցընում եմ բազուկըդ ահա,
Ինչպէս ոխակալ օձն անապատի,
Եւ քո քարացած բըռունցքում հիմա
Եւ սուրն եմ դնում ահեղ ճըշմարտի:

Եւ քո սրտի մէջ վառում եմ ահա
Հուրն ազատութեան եւ իրաւունքի.—
Կանգնեցընում եմ բազուկըդ ահա՛,
Ինչպէս ոխակալ օձն անապատի...

* * *

Է՛յ դու, ջահել, հպարտ հասակ,
Անցար ոսկի ամպի պես.
Քեզ հետ տարար երգեր ու սեր,
Տարար գարուն իմ արտես:

Քար կը սեղմեմ արտիս հիմա,
Կ'ելնեմ սարերը լալու.—
Ա՛խ, լաց՝ ի՛նչ֊ի՛նչ կ'ուզես.
Անցածն էլ ետ չի գալու...

* * *

Մեր կեանքի ամէն վայրկեանը անցնող
Թէթեւ, բայց անբոյժ վէրք է տալիս մեզ,
Իսկ վերջին, վերջին վայրկեանը աճեղ
Մի կուռ հարուածով սպանում է մեզ:

* * *

Լեռների լանջում, ծաղր հողի տակ
Ես թաղված էի՝ մեռա՜ծ, մոռացուա՜ծ.
Ու վաղո՛ւց, վաղո՛ւց, անյա՛յտ, լո՛ւռ, մենա՛կ
Ես ընկջում էի հոգուս մեջ սուզուած:
Եւ յանկարծ մի օր լսեցի հեռուից
Մարտաճիրաւոր վեհ ազատութեան,
Ըմբոստ ամբոխի ձայնը մռռկալից,
Երգե՜ր մարտական, ջեփո՜ր ռազմական,
Վառ դրօշակի խռոխռ ծածանում,
Զենքի շառաչի՛ւն, ձիերի դոփիւն,
Քայլե՛ր առնական
Հողիս մօտեցան,
Եւ դողաց ահա՛,
Եւ թեթեւացաւ
Հողը իմ վրայ.
Եւ սիրտս լըցուեց այրուող արիւնով,
Ուզեցի ելնել, ճժոյգն ամենի
Խրթանե՛լ, բըռնե՛լ, շառաչե՛լ զենքով,
Կռուե՛լ ու մեռնե՛լ դաշտերում ռազմի...

* * *

Ես կ'ուզէի արեւավառ
Անապատը ամայի,—
Ուր մեն-մենակ եւ վըշտահար
Թափառէի ու լայի:

Աչխարհից դուրս ու ուրաքաց —
Անապատում ամայի
Տաք ժայռերը ամուր գրկած՝
Համբուրէի ու լայի...

* * *

Գիշերն երազով, զորը կարօտով
Նազելի տեսքիդ մընացի անհաս.
Աշխարհը հարբեց քո անուշ հոտով,
Մենակ ես քեզնից մընացի անմաս:

Ա՜խ, գոնէ տեղըդ վարդեր ուղարկի՛ր,
Համբուրեմ, դընեմ մարած աչերիս.
Գոնէ վարդերիդ փշերն ուղարկիր.—
Համբուրեմ, զըգուեմ սիրավառ սրտիս...

* * *

Գագաթներին մով սարերի
Թափառեցի սէրըս լալով.
Լացըս քամին զով սարերի
Լսեց, տարաւ թեւին տալով:

Ու լըսում եմ լուռ գիշերին
Լացըս հիմա ամենուրեք.
Միշտ ծեծում է դուռըդ քամին,
Բայց չես լըսում նրան երբեք...

* * *

Եա՛ր աչերըդ արեգական
 շողքով վառուած ծովի նըման,
Աբրեշումէ մազերդ արձակ
 ծո՛ւփ-ծուփ կը տան հովի նըման,
Վար կը նայես խղճուկ գերուդ՝
 պարզ երկընքի մովի նըման,
Սիրտըս կ'այրես քնքուշ շնչով՝
 անմարելի բովի նըման:

Եա՛ր աչերիս լուսը մարաւ
 քո կարօտով-սիրով լալէն,
Ողջ աշխարհի մալը կը տամ,
 չեմ զրկըւի անգին լալէն,
Եա՛ր, գութ արա, կեանքիս գընով
 թող մի քաղեմ թըշիդ լալէն,
Շեմքըդ եմ ընկած, եա՛ր, խիղճ արա,
 հողդ եմ լիզում սովի նըման:

Եա՛ր, թէ մեռնիմ ոտներիդ տակ,
 Շահին-շահի թախտ է ինձի.
Փէշըդ քսուի գերեզմանիս՝
 փափաքելի բախտ է ինձի.
Վըրաս թէ լաս, արտասունքդ
 անմահական դեղ է ինձի,
Սիրտըս նորէն կալեկոծի
 Հնդստանու ծովի նման...

* * *

Երազիս տեսայ՝ օրո՛ր ու շորո՛ր
Քարւանն էր անցնում զնգալով անո՛ւշ.
Սարերի փեշով ոլո՛ր ու մոլո՛ր
Քարւանն էր անցնում զնգալով անո՛ւշ:

Նազելիս տեսայ ուրախ, շողշողուն,
Հարսի հոլերով, ոսկի շորերով.
Ու ոտներն ընկայ կարոտով վառւոան,
Ա՛խ, քարւանն անցաւ սրտիս վրայով:

Ձամբու փոշու մեջ անտերունչ, անտէր,
Ընկած էի ես չարդուած ու անյոյս.
Ու հեռուներից լսում էի դեռ
Անցած քարւանի ղօղանջը անո՛ւշ...

* * *

Շափա՛ղ կուտաս բաղի մէջին,
Ա՛յ կարմիր վա՛րդ, շաղի մէջին.
Բուրմունքի պես հիւսւում ես վեր
Իմ զառ ու լալ խաղի մէջին:

Խելքս է տարուել ես ալ-վարդին
Ձար չես անում իմ ծով-դարդին.
Բլբուլի պես թռնիմ էզ մօս,
Կարօտել եմ ծոցիդ զարդին:

* * *

Ո՞ւմ սիրտն է հեծում մռայլ գիշերին
Զըմրան հողմերից ծեծուա՛ծ, տառապա՛ծ.—
Այս գայլն է թըշուառ՝ լերան լանջերին
Դառըն հեծեծում ցըրտահա՛ր, քաղցա՛ծ...

Մենաւո՛ր, խըղճո՛ւկ, դու վիրաւոր սի՛րտ,
Ես էլ քե՛զ նման մենակ եմ ու խե՛ղճ,
Մարդն էլ քեզ պէս է, ո՛վ խոշտանգած սի՛րտ,
Այս ցաւի, մահի սեւ աշխարհի մէջ:

Այս ցաւի, մահի դաժան աշխարհում
Մեր բախտը մէկ է՝ անյոյս ու թըշուառ,
Իմ սիրտն էլ քեզ հետ կեանքն է անիծում,
Արի՛, լանք մէկտեղ, իմ խե՛ղճ գայլ-եղբայր...

* * *

Հեռաւոր ծովի լռիկ ափերում
Խոր վէրքը սրտիս ընկած էի ես.
Անգըղն էր ժայռին կտուցը սրում,
Շուրջս ամայի՝ գերեզմանի պէս:

Եւ տեսնում էի զմրուխտ ջրերով
Մի նաւ էր սահում օրօր ու շորոր.
Բախտի հովերով, ծուփ-ծուփ թեւերով
Գըգուելով նիրհած ալիքներն անդորր:

Եւ երգում էին ոսկեղէն նաւում.
Երբեմն ուրախ՝ անունըս տալիս,
Բայց մէկը տխուր ինձ էր երազում,
Անուշ աչերով վրաս էր լալիս...

* * *

Երազիս տեսայ, որ մայրըս՝ թշուառ,
Շէն պատերի տակ, մեծ փողոցներում,
Այնպէ՛ս դողդողում, հիւանդ ու անճար.
Անց ու դարձողին ձեռն էր կարկառում։

Երազիս տեսայ, որ իմ մայրը՝ ծեր,
Ցնցոտիներով պատած մուրացկան,
Եւ մարդիկ՝ անգութ, անտարբեր, անսէր,
Զբօսնում էին եւ հրում նրան։

Եւ երազիս մէջ ես դառըն լացի,
Ու ցաւից զարթնած՝ լաց եղայ անքուն.—
Ա՛խ, որքա՛ն մայրեր՝ խեղճ, առանց հացի,
Մեր շուրջն են դողում ու մենք չենք զգում։

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

Մի մայր ունէր չորս հատ որդի։
Մեկը՝ ուսած, հռչակաւոր,
Ունէր պաշտօն վարժապետի,
Եւ միւսը կըրօնաւոր,
Մի քահանայ 'սըրբակենցաղ.
Իսկ երրորդը վաճառական,
Լայն ձեռնարկներ, մեծ առ ու ծախ։
Բայց վերջինը... թափառական,
Աստանդական, աղքատ ու խեղճ...

Երբ մահն եկաւ, մայրն Աստըծուն
Շնորհ խնդրեց տեսնել շիրմից՝
Թէ ի՛նչպիսի վերաբերում
Պիտ՝ ընդունէր որդիներից։
Վարժապետը գըրեց ներբող,
Աղօթք կարդաց սուրբ քահանան,
Եւ հարուստը նըւիրեց փող.
Իսկ հէք որդին թափառական՝
Բեկւած սիրտը մօր բերեց...։

ՄՕՐ ՍԻՐՏԸ

(Հայկական աւանդավէպ)

Կայ հինաւուրց մի զրոյց,
Թէ մի տղայ,
Միամօրիկ,
Սիրուած էր մի աղջկայ։

Աղջիկն ասաւ — «Ինձ բնաւ
Դու չես սիրում,
Թէ չէ գնա՛,
Գնա՛ մօրդ սի՛րտը բեր»։

Տղան մոլոր, գլխիկոր
Գայլ առաւ,
Լացից, լացից,
Աղջկայ մօս եռ դառաւ։

Երբ նա տեսաւ, զայրացաւ.
— Է՛լ չերեւես
Շէմքիս, ասաւ,
Մինչեւ սիրտը չը բերես։

Տղան գնաց եւ որսաց
Սարի այծեամ,
Սիրտը հանեց,
Բերեց տուեց աղջկան։

Երբ ճա տեսաւ, զայրացաւ.
— Կորի՛ր աչքես,
Թէ հարազատ
Մօրդ սիրտը չը բերես:

Տղան գնաց՝ մօրն սպաննեց.
Երբ վազ կը տար
Սիրտը՝ ձեռքին,
Ոտը սահեց, ընկաւ վար:

Եւ սիրտը մօր ասաւ տխուր.
Լացակումած,—
«Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չը ցաւա՞ց...»

* * *

Ո՛չ իշխանութիւն, ո՛չ կռիւ, ո՛չ կիր
Չեն յափշտակում հիւանդ իմ հոգին:
Ղօղանջն է միայն ձիգ խաւարի
Հեռաւոր, անյայտ ճանապարհների
Հրապոյրներով դիւթում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին...

* * *

Ապրած իմ կեանքից
Մի սուրբ երազի
Բուրմունքը մնաց
Սրտումս անմոռաց —
Այն որ՝ ջերմ լացի
Առանց տանջանքի,
Խորունկ սիրեցի
Առանց տենչանքի...

*
* *

Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անհուն
Աշխարհի վէրքին չըկայ դեղ-դարման.
Ի՞նչ է մեր կեանքը — բոց մի փայլփլուն՝
Հողմերի առջեւ անհեղ բնութեան։

Ե՛ւ սէր ու երգեր, ե՛ւ փառք ու հանճար
Մին պատրանքներ են մահը մոռնալու.
Եւ մարդը՝ դժբախտ, անզօր ու անճար՝
Ծնուած է մահին պատառ դառնալու։

Յաւիտենական, անծիր, անսահման
Խաւարների մէջ, կեա՛նք, դու ես մի լոյս,
Որ մի պահ շողաս, մարիս յաւիտեան,—
Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անյոյս։

Իմ սիրտը նման բացուած խոր վէրքի,
Որ տիեզերական կսկիծն է լալիս.
Լալիս է դարեր առանց արցունքի,—
Ա՜խ, հեգ գլուխըդ դի՛ր վշտոտ կրծքիս։

Դի՛ր անյոյս սրտիս գլուխըդ ու լաց,
Ամէնքի բախտը լա՛ց, իմ նազելի՛ս.
Լա՛ց,— եւ արցունքդ դեռ չը ցամաքած՝
Դուռդ կը բաղխէ մահը, նազելի՛ս...

* * *

Անմահ արեւի վառ գգուանքի տակ
Փռուած հոլանի՝ ծովն է ողողում.
Լեռների գլխին բիւրեղեայ պսակ,
Շուրջը ամպերի երամն է լողում:

Ու կռունկների խաւաքը ճորից
Անուշ կարկաջով գարուն են բերում.
Ջերմ շունչն է ելնում տա՛ք, փխրուն հողից
Ժայռի ծերպերից մեխակն է բուրում

Եւ ղողանջում է անտառը դալար,
Քաղցր դայլայլում թռից մի թռչուն.—
Սիրտս ցնծում է, հազար ու հազար
Երգով ու ողոքով գարնան դեմ թռչում:

Թռչում եմ արագ թեթեւ հովի հետ,
Հզօր կաղնու մէջ անում եմ հպարտ.
Ծաղկի, եղնիկի, թիթեռնիկի հետ
Ծաղկում եմ, ծնչում, ոսոսում ազատ:

Ծովն է արտիս մէջ ծփում երազով,
Զգում եմ ես իմն աւուր, ժայռի հետ.
Տիեզերքը մեծ՝ լցուում է իմնով,
Մէկ եմ զգում իմն երկրի երկնի հետ:

Անհուն հիացմով սիրտըս է զարկում,
Խորին ցնծութեամբ ողջունում եմ ես
Եւ օրհներգում եմ եւ գրկախառնուում
Մեծ եւ անսահման բնութեանն յաւերժ...

* * *

Անգիր, ե՛ւ անյայտ, ե՛ւ անյիշատակ՝
Ամայի դաշտում մի գերեզման կայ.—
Ո՞վ է հող դառնում այդ լուռ հարի տակ,
Ո՞վ է լաց եղել այդ հարի վրայ:

Համբր հայերով դարերն են անցնում.
Արտոյտն երգում է իր գովքը գարնան,
Շուրջը ոսկեղեն արտերն են ծփում.—
Ո՞վ է երազել եւ սիրել նրան...

* * *

Ի՞նչ օրի հասայ, սեւ օրի հասայ,
Որ ստոր մարդուն գլուխ ծռեցի.
Գլուխս չըլներ ուսերիս վրայ,
Քան թէ տմարդին գլուխ ծռէի:

Ինչ էլ որ լինեմ, ինչ էլ որ լինեմ,
Անտուն էլ լինեմ, — մարդ եմ ճորից ես.
Ինչո՞ւ ուրիշին գլուխ խոնարհեմ՝
Ով որ լինի նա, ով որ լինեմ ես·

Ինչ էլ որ լինի, մարդ պիտի հոգով
Ազատ ու հպարտ միշտ պիտի լինի.
Ճակատը բարձրից պարզ ու բաց նայէ
Ինչ էլ որ լինի, ինչ էլ որ լինի...

* * *

Ծովը ալեկոծ, սանձակոտոր,
Իր ֆար օրթերն է կրծում.
Ա՜խ, իմ վիշտը — մի չար ուրուր,
Սիրտս է անդուլ էրցէրցում:

Գնա՛մ, գնա՛մ, կորչեմ անդարձ,
Փոթորիկի մէջն ընկնեմ,
Անդունդներից խեղճ սիրտս տամ,
Չար ուրուրից ազատուեմ:

Եւ թող ծովը ինձ նետէ ափին,
Ափին հեռո՛ւ, հեռաւո՛ր,
Սիրտըս անվիշտ՝ անզարթ էնիմ
Ափին մենա՛կ, մենաւո՛ր...

* * *

Ո՞րտեղ է ընկած
Այն ֆարը հիմի,
Որ հողիս վրայ
Շիրիմ պիտ լինի:

Իմ թափառ կեանքում,
Մարդ ի՞նչ իմանայ,
Չե՞մ նստել, թախծել
Այդ ֆարի վրայ...

* * *

Մի երեխայ ճնից զարթնել
Լաց եր լինում աղիողորմ:
Սրտի ուզած բաներն ամեն
Տեսել եր նա պերճ երազում
Եւ զարթնելով բոլորը մեկ
Կորցրել եր, ու սրտաբեկ
Հիմա նստել, լաց եր լինում:

Լաց մի լինիր տղաս զուր տեղ
Երիտասարդ կեանքդ ամբողջ —
Այդ երազը հրաշագեղ—
Դեռ առաջդ է լուսաբողբոջ:
Ապա ես ի՞նչ անեմ. տղաս,
Որ կորցրել եմ անվերադարձ
Ամեն, ամեն բան աշխարհում.
Եւ չունեմ էլ ոչ մի երազ
Իմ մթնացող օրուայ առաջ:

* * *

Մշուշը ծածկեց դաշտերը անծիր.—
Դալուկ ճակատս դիր այրող բարձին.
Եւ թո՛ղ ինձ մենակ, եւ դուռս գոցի՛ր,
Ես չեմ կարօտնայ քո վերադարձին։

Իմ երազների աստղերը գոհար
Մի պայծառ երկինք շուրջս են տարածում,
Իմ ոգու հանդէպ մահը յաղթահար.
Իմ ոգին յաւերժ՝ չունի մահացում։

Եւ անարգում եմ աշխարհը համայն,
Ուր ամէն մի մարդ — մի ձեւ անցաւոր,
Ուր ամէն մի կեանք՝ թշուառ եւ ունայն,
Գաղափարն՝ անզօր, եւ նիւթը հզօր։

Մշո՛ւշ, դու ծածկի՛ր աշխարհը անծիր.—
Թո՛ղ, դարման մի՛ դիր իմ խորունկ խոցին
Եւ թո՛ղ ինձ մենակ, գնա՛, հեռացի՛ր,—
Ես չեմ հաւատում քո լաց ու կոծին...

* * *

Չգիտեմ, թէ ո՞ւր
Անյայտ, հեռաւոր
Մի սիրտ կայ տխուր,
Մենակ, մենաւոր։

Նա է՝ ուշ գիշեր
Իմ դուռը ծեծում,
Նա է՝ միշտ անտես,
Կրծքիս հեծեծում...

* * *

Վտարուած եմ ես
Հայրենի երկրից.
Մի անյայտ ուղի
Լուռ տանում է ինձ:

Ո՞ւր եմ գնում ես,
Ո՞ւր պիտի հանգչիմ,
Ո՞ւր պիտի լինի
Կայանըս վերջին:

Ձիւնն եկաւ, ծածկեց
Ուղի ու կածան.
Որոնց սիրել եմ,
Ինձ օտար դարձան:

Ա՜խ, չար բախտիս դեմ
Իմ խաւար հեռուում
Մի աղօս ճրագ
Արդեօք չի՞ վառւում:

Վայում է քամին,
Խիստ բուք է հիմի.
Թող իմ բնաւին
Անցուն չը լինի...

* * *

Կը տեսնեմ ահա,— լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օճախեն.
Եւ ուրիշներս մարմանդ կ'օրորուին,
Ծղրիդը կերգէ անտես խորշերէն...

Մեղմ ճրագի տակ նստել է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիկս գրկին.—
Մուշ-մուշ էնել է մանկիկս՝ անդորր.
Ու աղօթք կանէ մայրիկս՝ լուին.—

«Ամենեն առաջ բո'ղ ինձը հասնի
Ամէն հիւանդի, հեռու'ն ճամբորդի.
Ամենեն յետոյ բո'ղ ինձը հասնի
Քե'զ, իմ խեղճ որդի', իմ պանդուխտ որդի»:

Անո՜ւշ ծուխ կելնի իմ հոր օճախեն,
Մայրս կաղօթէ՝ մանկիկս գրկին.
Ծղրիդը կերգէ անտես խորշերէն
Եւ ուրիշներս մարմանդ կ'օրորուին...

* * *

Դուրս ափ առած՝ կը ծեծէ քամին
Ու ջուխխս վրայ տխուր կը հառաչէ,
Բայց ես մենակ չեմ. մի ձայն մտերիմ
Ինձ աջո՜ւս, աջո՜ւս, աջո՜ւս կը կանչէ: —
Այդ՝ ձեր մոմուցչի է, հայրենի ջրե՜ր,
Այդ՝ թոթովաւիճն է, իմ սիրուն մանկի՛կ.
Իմ վառ, զմրուխտեայ հայրենի ջրե՜ր,
Իմ պայծառ, սիրուն, իմ աւգին մանկի՛կ...

* * *

Ո՞ւմ հետ եմ աւյոյս
Լալիս, հառաչում,
Ո՞ւմ ճակտի վրայ
Իմ ձեռքն է հանգչում:

Աշխարհն՝ յաւիտեան
Մահուան բերանում,
Եւ մահը նրան
Ծամում է, ծամում:

Լալիս է աշխարհն
Իմ սիրող գրկում.
Համայն աշխարհի
Թախտն եմ ես սգում:

* * *

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Մանուկ ականջիս բարձր կը կանչեր,—
«Դուրս արի խաղանք, ծաղիկ եմ բերել»:

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Պատանի սրտիս բարձր կը կանչեր,—
«Դուրս արի՝ բռչինք, երազ եմ բերել»:

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջնի մեր ծառին.
Ու ցորեն կերբայ, ու ցորեն կուգայ,
Բայց, ա՛խ, ինձ համար էլ երազ չկայ...

* * *

Ոսկի բիբեռնե՛ր — ոսկեհուր աստղե՛ր.
Ծով Մարմարայի — լուսեղեն ացո՛ւրջ.
Գիշով գիշերնե՛ր, լուսնի վառ ողեր,
Մոյկ նոճիները դիւթական մրմունջ...

Յուշերը նորից սիրտըս են տանջում,
Լուսեղեն երա՛զ, որ հիմա չկայ.
Հոգիս մեղաւոր, վաստակած թոչուն,
Խաւար ու խորին ծովերի վրայ...

Մի երգ գիտեի՝ ացո՛ւս. ոսկեռունչ,
Լուսեղեն երազ՝ հեռո՛ւ, հեռաւո՛ր.
Ա՛խ, նոճիների դիւթական մրմունջ,
Օրորե՛ք մեղմիկ հոգիս վիրաւոր...

* * *

Քո ունքերդ, իմ սիրեկան,
Կեռ են դահնի բրի նման:

Աչքարիր՝ սուս երազ ու սիր,
Թող որ խմեմ, իմ սիրեկան,
Շրթունքներիդ կարմիր գինին,—
Գլուխս զարկ դահնի նման...

Քո ունքերդ, իմ սիրեկան,
Կեռ են դահնի բրի նման:

* * *

Ո՞րտեղ պիտի հանգչի մի օր
Գլուխս անտուն, թափառական.
— Անապատո՞ւմ՝ չոր ու տոչոր,
Թէ ծովափին ալեծածան:

Վըրաս պիտի ձըգէ՞ համին
Անուշ հողը մեր դաշտերի,
Պիտի բերէ՞ արցունքիդ անգին,
Ի՛մ հեռաւոր, ի՛մ սիրելի...

* * *

Ծաղկունքը գարնան
Ինձ վառ սէր բերին

Ծաղկունքը գարնան
Սիրուս հետ թօշնան:

Ու ջրմխս վըրէն
Կը բացուին նորէն

Ծաղկունքը գարնան...

* * *

Բախտը ինձնից բրուաւ, գնաց
Վերջալոյսի ծողերի պես.
Ցոյսը միայն մօրքս մնաց,
Մօրքս մնաց աճուռ մօր պես:

Եկէք, փռուէք դաշտ ու հովիտ.
Արշալոյսի վառ ճաճանչներ.
Հարցնեմ՝ ասէք,— ո՞ւր եմ, չքնաղ
Մեր բնկերներ ու ճաճանչներ:

Ո՞ւր գնացիք, օրեր ջերմ,
Սէր ու խնդում, երգ ու երազ.
Մահն է հիմա իր նեռն աչեղ
Ամէն կողմից լարել վերաս:

Ո՞ւր գնացիք աշնան խամռու
Բերանն ընկած տերեւի պես.
Միթէ՞ նորից չէ՞ք դառնալու
Գարնան զուարթ ջրերի պես:

* * *

Կարծես՝ երեկ էր.
Ես մանուկ պայծառ,
Թռվռում էի դալար ծառն ի վեր:
Եւ սակայն այսօր մռայլ է հոգիս.
Ճնշում է մի ձեռ յոգնած ուսերիս:

Բայց դեռ երեկ էր՝
Սրտով սիրավառ
Ես փնջում էի երազ ու երգեր:
Եւ այսօր արդեն անցել եմ ուղիս.
Ձերմակն է հիւսւում իմ սեւ մազերիս:

Երեկ գարուն էր,
Ասուն է այսօր.
Ե՞րբ դեղին դարձաք,
Կանա՛չ տերեւներ...

* * *

Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կքել մենաւոր.
Ա՜խ, ես հեռաւոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր։

Շաչում է անհեղ՝ իմ գլխի վրայ
Աշնան ցուրտ քամին այս մութ գիշերին.—
Վառո՞ւմ է արդեօք օջախս հիմա
Հայրենի գետի զմրուխտ ափերին...

* * *

Հայրենի աղբի՛ւր,
Երգերս վըճիտ
Հիւսել կուզայի
Բիւրեղ կարկաչիդ։

Ես հիմա այնպէ՜ս
Յոգնած եմ ու լուռ,—
Դո՛ւ յաւերժ կերգես,
Հայրենի աղբի՛ւր...

* * *

Աշո՛ւն է, քամի...
Տերեւները մի-մի,
Արցունքի նման
Դողացին, ընկան...

Փչում է, ասես,
Ունայնութեան պես,
Քամին ամենի
Ճամբում ամայի։

Սմքել է հոգիս
Մռայլ գիշերիս,—
Չգիտեմ մահից,
Թէ՝ կեանքի ահից...

Եւ դեղին փոշին
Ելնում է իմ հին
Ապրած օրերից,
Եւ ծածկում է ինձ...

* * *

Ձիւն է գալիս, ու թախծալիր
Ծածկում դաշտերն ամայի.—
Քնքո՛ւշ քնքուշ ինձ սիրեիր,
Ու նոր մեռած լինէի...

Հեկեկայի սրտիս սրտում
Անունդ անո՛ւշ ու աղուոր.
Ու ձիւնը գար մե՛ղմ ու տրտո՛ւմ,
Ծածկէր շիրիմս հեռաւոր...

* * *

Առաւօս պահիկ
Դալար դաշտերում
Իմ մանկացս հետ
Պտոյտ եմ անում:

Ծաղիկների հետ
խօսում է տղաս,
Որոնց հետ էլ ես
Զրոյց եմ արած:

Վայրկեանը՝ ծանր,
Օրերը՝ թեթեւ,
Տարիներն անցան
Իրարու հետեւ:

Ու աշխարհն աչքիս
Դառնում է երազ.
Երէկ ես էի,
Այսօր՝ երեխաս:

Եւ վաղը, ասես,
Մի աչք մթագնած
Լուռ գերեզմանից
Ծառել է վրաս...

* * *

Լորիցների տակ
Մտորում եմ լուռ.
Հեռուց մի ջուրակ
Հեծում է տխուր:

Մութի մեջ, ասես,
Իմ բախտի վրայ
Անուրիկ մեր պես
Արտասուում է ցա:

Անողոք մի ձեռ
Ծաղրացաւ վրաս,
Փշրեց սեր ու երգ,
Գարուն ու երազ...

Լորիցների տակ
Մորմոքում եմ լուռ.
Հեռս մի ջուրակ
Լալիս է տխուր...

* * *

Կեռասենին ծաղկեց կրկին,
Ծաւալուեց բոյր ու զեփիւռ.
Բլբուլն երգեց վարդի գրկին,
Կարկաչեցին ակն-աղբիւր:

Իր յարն ունի թուփ ու թռչուն,
Ամէն մի ծիլ ու ծաղիկ,
Բիւր բիւր յարով գարնան լեզուն
Նորից խօսեց գեղեցիկ:

Ես լսում եմ ու հաւատում
Նորից գարնան հէքիաթին.
—Ո՞վ էր՝ ինչեց իմ հին սրտում
Սիրոյ զմրուխտ մեղեդին...

* * *

Գիշեր է, խամի.
Բաց լուսամուտս
Փոշի կը մաղուի
Մութ սենեկիս մէջ...

Հիւանդ ու մենակ
Պառկած եմ մահճում,
Բարձս գլխիս տակ —
Կրակ վառվռուն:

Դուրսը, չգիտեմ,
Ացձրեւ է գալիս,
Թէ՞ գլխիս վերեւ
Խեղճ մայրս է լալիս...

Ու դողդոջ մի ձեռ,
Ինձ կը թուայ թէ՝
Դալուկ երեսիս
Հող կը թափթփէ...

ԵՐԱ.Զ

Օտար երկիր էր գնացել որդին,
Եւ անցել էին տարիներ տրտում.
Մայրն սպասում էր տեղչալի դարձին,
Եւ այսօր, որդին ուրախ դարձաւ տուն:

Իրար գիրկ ընկան անհուն կարոտալ
Եւ համբուրուեցին երկար ու երկար.
Լաց եղան մեռած հորը յիշելով
Եւ ցնծութեան մէջ մոռացան աշխարհ:

Վառեցին նորից օճախն հայրենի.
Խրճիթը լցուեց խնդութեամբ անդորր.
Խօսեցին անցած օրերի մասին,
Ապա խուն մտան անհոգ, բախտաւոր:

* * *

Երբ մայրը զարթնեց, սոսկումով տեսաւ—
Օճախը՝ յանգած. խրճիթն՝ ամայի.
Եւ որդի՛ն, որդի՛ն, կաթոգին որդի՛ն
Նորից բանդի մէջ՝ զարկուած օղթայի...

* * *

Ա՛խ, ասացին ինձ, թէ մեռել ես դու,
Մեռել ես վաղուց, մայրի՛կ. իմ հոգիս...
Մեռել ես, չըկաս... Ծածկել է յաւէս
Աննուն խաւարը դէմքդ թախծանուշ.
Ու հող ես դառնում... Աւա՛ղ, այսուհետ
Քեզ չեմ տեսնելու, մայրի՛կ իմ ճնճուղ...

Սակայն հանապազ, ինձ հետ անբաժան՝
Մի անյայտ տեղից, ինձ այնպէս մօտիկ,
Գիշեր ու ցերեկ, ու ամեն մի ժամ,
Ամեն մի վայրկեան անծայր կարօտով,
Աչերդ լեցուն սիրով ու գթով՝
Անթարթ, աննիթիթ յառել ես վրաս,
Սրտով սրտակից,
Մի՛շտ նայում ես ինձ, մի՛շտ նայում ես ինձ
Մայրի՛կ, իմ հոգիս...



Գետակի վրայ
Թեքուել է ուռին.
Ու նայում է լուռ
Վազող ջրերին։—

...Երազ-աշխարհում
Ամէն բան յաւէտ
Գալիս է, գնում
Ու ցնդում անհետ։

Եւ գլուխը կախ՝
Նա լաց է լինում.—
Ջրերը ուրախ՝
Գալիս են գնում...



Երբօրս որդու՝
Իսահակ Իսահակեանի
յիշատակին

Ա.

Ծառիս վրայ մի զոյգ թռչուն՝
Կտուցն առած թելի տակ՝
Կուչ է եկել ու հառաչում,
Այնպէ՛ս տխուր ու անյոյս,
Ասես՝ առել բերել է ինձ
Վերջին խօսքը սիրելուս...

Ու լսում եմ խօսքը տրտում,
Սրտիցս արիւն է կաթում...

Բ.

Միշտ երկրէ երկիր,
Ինձանից հեռու,
Թափառում էիր,
երբ ողջ էիր դու:

Բայց մօտըս եկար
Քո մեռած օրեդ.
Հիմա անբաժան
Շրջում ես ինձ հետ:

Գ.

Մաղում է աճձրեւ՝
Սրտամա՛ծ, տրտո՛ւմ.
Աճձրե՛ւ ու աճձրե՛ւ,
Դանդա՛ղ, աճդադրո՛ւմ:

Ա՜խ, հիմի, հիմի
Ի՜նչ ցուրտ է ու թաց
Մութում ֆո ջիրմի,
Իմ սրտիս սիրա՛ծ:

Հոգուս մեջ դարձար
Դու մի այրող վհրէ.
Ես ֆեզ մոռանալ
Չեմ կարող երբէ՛ք:

Ու աշնաճ մեզում
Կանգնել եմ անյոյս,
Անյոյս հեկեկում
Անուրդ աճո՛ւշ...

Դ.

Աչէս ճամբիդ ծովացած՝
Կարոտդ սիրտս էր այրում.
Այցի եկար դու յանկարծ
Ինձ այս օսար աշխարհում:

Դեմդ էճէուշ ժպիտով,
Ինչպէս մանուկ երեկուայ,
Գիրկս ընկար կարոտով,
Իմ անուշիկ երեխա՛յ...

Այդ ի՞նչքան ես մեծացել,
Պարթևական ի՞նչ հասակ.
Ի՞նչ շքեղ ես, գեղեցիկ,
Գարնան կանանչ արեգակ...

Յաղթանակից ես եկել,
Ոսկեզրահ, քաջաձի.
Ա՜խ, քեզ շա՜տ եմ կարոտցել,
Մոտս կեցի՛, մի դարձի...

Սո՞ւտ է, հոգի՛ս, թե հիմի,
Մարմարե ձիւնն է ծածկում
Հողաթումբը քո շիրմի.—
Դու իմ մոտս ես, իմ գրկում:

Ճակտիդ վրայ, աստղի պես,
Պզտի՛կ, պզտի՛կ մի վերք կայ,
Թո՛ղ համբուրեմ՝ լուանայ,
Դու, իմ կտրին երեխայ...

* * *

Քո կարօտած հայրենիքի
Սօսեաու պես սլացիկ.
Մազեր ուներ ոսկի հասկի,
Ու աչերդ մեղեսիկ:

Դու կը սիրես մարգարիտներ,
Եւ ադամանդը կ'ատես.
Պարանոցիդ ինչ է վայել,
Թէեւ մանուկ, լաւ գիտես...

Երբ շրթունքով եռազաբոյր
Մեղմ կը հպուիս շրթունքիս,
Ա՜խ, ասես թէ՝ մի կոշ ու կուռ
Ջեռ կը դպչի բաց վէրքիս:

Ու մի թախիծ խոժոռադէմ
Ինձ կը պատմէ սեւ ու մութ,—
Ես յոգնած եմ, ես հիւանդ եմ,
Դու՝ ոսկեղէն մի արտուտ...

* * *

Մարգարիտնե՜ր վըզիդ շուրջ
Տրտում փայլով ու ճնճո՛ւղ.
Մարմարեղէն վըզիդ շուրջ
Մարգարիտնե՜ր թախծանո՛ւշ:

Արցունքներս են իմ սիրուս՝
Տխո՜ւր, տխո՛ւր, դալկահար.
Արցունքնե՜րս իմ աչյոյս՝ —
Վըզիդ բոլոր շարհշար...

* * *

Ամէն անգամ, երբ նայում եմ
երեխայիս խաղերին,
Թէ ինչ սիրով փարուել է նա
քարին, ջրին ու հողին.—

Խօսք եմ խօսում իմ սրտի հետ
— է՜յ իմաստուն մանկութիւն,
Ունայն բան է խելքը մարդուս
եւ գործերը մեծանուն:

Դատարկ ձայն է քաջի համբաւ,
գանձ ու պատիւ հանապազ,
Դո՛ւ ես ոսկին, ո՜վ մանկութիւն,
դո՛ւ իսկական լոյս-երազ:

Ա՜խ, երնեկ թէ մանկութիւնըս
յանկարծ դառնար զար նորէն,
Գլխիս վառուէր մանկութ օրուայ
արեգակըս ոսկեղէն:

Անուշ մօրըս ոտների տակ
թռուըռայի, խաղայի,
Փառք ու հանճար չարժեն խաղին
մի ծաղկաբոյր տղային:

Իմ սո՛ւրբ մանկիկ, թո՛ղ համբուրեմ
թաթիկներդ ցեխոտած,
Դու՝ կեանք ու սէ՛ր ծափ ու ծիծա՛ղ,
Ուրախութեան դո՛ւ աստուած...

* * *

Նա մի փոքրիկ աղջիկ է՝
Լուսափթիթ աղաւնի,
Կը հաճդիպեմ ամեն օր,
Ելլէս գլխուս կը տանի:

Ո՞ւրկից կը գայ, չգիտեմ,
Ո՞վ է. ի՞նչ է, ո՞ւր կերթայ. —
Կուզեմ ըսկսեմ հետեւիլ,
Երթամ, ուր որ նա կերթայ:

* * *

Մեր բաղի խաս բլբուլից
Տըւի կարօսս՝ տանի,
Որ երգով տանի, տանի
Սրտով սիրած իմ եարից:

Մեր ձորի զուլալ առուից
Տըւի արցունքս՝ տանի,
Որ լացով տանի, տանի
Անգութ, անսէր իմ եարից:

Մեր սարի բարակ հովից
Տըւի յոյսերս ծուփ-ծուփ,
Որ տանի՛, տանի՛, տանի՛
Հեռո՛ւ, հեռո՛ւ իմ եարից:

* * *

Գրկիր ինձ մեղմիկ,—
Քո կախարդ գրկում
Ես զգում եմ ինձ
Իմ հայրենիքում:

Ծիծաղում ես դու՝
Ուրախ ու անմեղ,
Մեր դրռաճ, ասես,
Աղբիւրն է բիւրեղ:

Շշնջո՞ւմ ես դու
Այնպէ՞ս հեզ, անուշ,
Ասես, մեր դաշտի
Հովիկն է ճոխուշ:

Ու երբ խաղում ես
Իմ մազերի հետ,—
Վառ մանկութիւնս
Ինձ դառնում է ետ:

* * *

Հայրենիքից հեռու, մի օր,
Եթե մահը զարկե ինձ,
Միեւնոյն է՝ թաղուեմ ուր որ,—
Մեր մօր գրկումն եմ ծորից:

Սակայն, խղդր է ննջել դաշտում.
Խնձորենու շուքի տակ,
Որ գարունքին շիրմիս ծուփ գան
Ծաղիկները սպիտակ:

Եւ ամառը՝ աղջիկները
Վրաս կանգնեն երգելով.
Բաղեն, լեցնեն գոգն ու ծոցը
Կարմի՛ր, կարմի՛ր խնձորով:

Եւ աշունքին՝ սիրուս նման
Մեռած, լացած մի երազ՝
Տերեւները դալուկ, դեղին,
Իջնին, մեռնին իմ վերաս...

Երբ ձմեռ գայ՝ լուիկ ու հեզ՝
Բիւրեղները ճիւղերէն
Շիրմիս կաթին արցունքի պէս
Մեղմութեան մէջ ձիւնեղէն:

* * *

Թռչուններն ուրախ՝
Նորեկ գարունից
Սիրով, սրտագին,
Խօսում են կրկին:

Ա՛խ, կար ժամանակ,
Ես այնպէս ներհուն
Իմանում էի
Հաւերի լեզուն:

Բայց սին ու դժնեայ
Խաղերից կեանքիս
Օր-օրի վրայ
Ծանրացաւ հոգիս:

Եւ հիմա նրանց
Լեզուն իմաստուն,
Լեզուն երազի,
Էլ չեմ հասկանում...

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

Կեռասենու ճիւղերին երկու թռչուն գարուցին
Կը խօսէին անուշիկ, ու մէկն ասաց այն մէկին.
— Ծի՛ւ-ծի՛ւ, սիրուն սիրունիկ՝ ես քեզ տեսայ, երբ դու ըո՛ր
Մայրիկիդ հետ թեւ ելած՝ կը թռչէիր սար ու ձոր.
Այն օրուանէն իմ սիրտը քնքուշ թեւիդ հետ տարար...
— Ծի՛ւ-ծի՛ւ, խօսեց միւսը, սակայն ես քեզ չեմ ճանչցար.
Միայն ձայնդ ծանօթ է, վաղուց ծանօթ, բարեկամ,
Լսած լինիմ, ասես թէ՝ երազիս մէջ մանկական:
— Ծի՛ւ-ծի՛ւ, ասաց մէկելը, այդ խեղճ սիրտս է, իմ անո՛ւշ,
Որ ջհմիդ տակ կուչ եկած՝ սէրըս կ'երգէ մինչեւ լոյս...
— Ծի՛ւ-ծի՛ւ, ճչեց միւսը, ու պատասխան չտալով՝
Քնքուշ կտցեց մի կեռաս թելիկ-մելիկ նազանքով:
— Ծի՛ւ-ծի՛ւ, խօսեց մէկելը, ես քեզ վաղուց կը սիրեմ,
Թո՛ղ որ թռչիմ մօտիկդ, տոտիկներդ համբուրեմ.
Թեւդ ձգէ իմ թեւիս, թռչինք, երթանք հեռուներ.
Ես տեսել եմ, ես գիտեմ հեռուն ոսկի աշխարհներ,
Ուր ո՛չ մարդ կայ, ո՛չ ուրուր, - տարի բոլոր վառ գարուն,
Լոյս-աղբիւրներ ողողուն, զառ պարտէզներ դալարուն.
Այնտեղ ջինջիմ մեր բոյնը, երգենք մեր սէրն ու կարօտ...
Ու իր տեղէն թռա առաւ նոսաւ նրա մօտ:
Իսկ միւսը լուռ ու մունջ, թելիկ-մելիկ նազանքով
Քնքուշ կտցեց մի կեռաս, աչքի ծայրով նայելով...
Մէկ էլ... Իրար թե-թեւի, անո՛ւշ-անո՛ւշ ծլլան՝
Ծափիկ տուին ու բռա՛ն, ծափիկ տուին ու բռա՛ն...

ԿՏՄԿ

Սիրուն մանկի՛կ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ.
Ճշմարիտն ես փորձով գիտեմ ու խօսքերս մի՛ մոռնար:
Կեանքն է ամպի փախչող սուտեր, վայրկեանն է միշտ իրական.
Բախտի կռանը կամքն է թեու, բայց դիպուածն է տիրական:

Զգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան.
Բայց դո՛ւ խելքդ վրադ պահի՛ր, ինչպես պողպատ կուռ վահան:
Մի՛ հաւատար սուտերներին, հեռուի՛ր միայն ճշ վրայ,
Ատելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լաւութիւն միշտ արա:

Եւ լայն օրում թէ՛ ընկերներ, թէ՛ բարեկամ ճանաչի՛ր.
Իսկ նեղ օրում ընկերներին ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:
Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթէ տանուլ տաս,
Զուարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրայ կը խնդաս:

Անվախ ու վեհ դեկդ վարէ աննաւոթին դէմ-դէմի.
Անզղջալի առաջ գնա՛, ինչ. որ լինի՛, թո՛ղ լինի:
Լսի՛ր, տղա՛ս, ինձ կը թողես անյայտ մի տեղ, աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս խարը գողանան:

* * *

Այցի եմ գալիս ձեզ մօս ես յաճախ,
Նստում եմ դեմդդ՝ հանգիստ ու խաղաղ.
Ջրոյց եմ անում երկա՜ր, միասին,
Հազար նիւթերի, հարցերի մասին:

Եւ սիրոյ մասին խօսում եմ նոյնպէս,
Բայց խիստ անտարբեր ձեւանում եմ ես,
Վրադ չեմ նայում, չեմ լսում ոտիդ,
Որպէս թէ անյոյզ, սառն եմ ես հանդէպ:

Բայց հալւում եմ ես սիրուց բոցակէզ.
Ուզում եմ գրկել ու համբուրել ձեզ.
Հազիւ զսպում եմ մըրրիկը սրտիս.
Ա՜խ, սակայն հոգիս բերանս է գալիս...

* * *

Ես հովիկ լինէի,
Դու՝ ցազուկ ցարասի.
Գգուէի կարօտով
Վարսերդ սնդուսի:

Ես եղնիկ լինէի,
Դու՝ աղբիւր պաղպաջուն.
Խմէի համբոյրդ
Շրթներով տոչորուն:

Ես թիթեռ լինէի,
Դու՝ կարմիր բոց-կրակ,
Կիզուէի գրկիդ մէջ,
Մեռնէի ոտիդ տակ:

*
* *

Թարթիչներդ շուք կըտան
Դէմքիդ վրայ թաւիշէ.
Սիրտս շուքի տակ անուշ՝
Ծուար մտած կ'երազէ·

Թաթիկներդ յուսեղէն —
Լոյս թռչնիկներ հէքիաթին.—
Ճաճանչներով ոսկեղէն
Բոյն կը հիւսեն նոր բախտի:

Զմրուխտ թասով գինի ես,
Բոյրդ աշխարհ է առել,
Շուրթս վառուեց շրթներից,
Աշխարհիս տէրն եմ դառել:

*
* *

Աշնան ծաղիկնե՛ր,
Դալո՛ւկ ու տխո՛ւր,
Դողդողում էք հեզ
Դաշտերում թափուր:

Ձեր աչքերի մէջ
Արցունք կայ տրտում,
Ուշացած երազ
Ձեր քնքուշ սրտում:

Շուտով կը շաչէ
Հողմը բքաբեր,
Կը թոշնիք չապրած,
Աշնան ծաղիկնե՛ր...

* * *

Մեղեդիներով զարունն է փռթել,
Անհուն հայեացքով ժպտում է արեւ.
Կարծես՝ դաշտերը բուլխպը չի պատել,
Չի կախուել ծառից մահազոյն տերեւ:

Պառկել է մէջքին ծովը անդորրիկ,
Լայն-լայն բացել է աչքերը ծաւի,
Կարծես՝ չի պայթել այնտեղ փոթորիկ,
Եւ հետքն իսկ չը կայ բեկուած մի նաւի:

Մանուկներն ուրախ՝ դալար մարգերում
Երգում են պարում՝ գիրկ գրկի փառած.
Կարծես՝ աշխարհում չի թափուել արիւն,
Չի եղել երբէք լաց ու կոտորած...

ՊՈՄՊԷՅԻ ՄԷՋ

Ինչպէս իմ հոգին՝ անյոյս ու խաւար,
Անհունութեան մէջ՝ մռայլ, անսահման,
Գունդն այս հողեղէն — երկիրը թշուառ,
Եւ աննպատակ, անդուլ, անկայան,
Ի՞նչ է թափառում, ո՞ւր է թռչում նա,
Որպէս կոյր թռչուն անդունդի վրայ...

Դո՛ւ, արեան անօթ, սարսափի հովի՛տ,
Ուր կեանքն է կեանքին սնունդ հանապազ
Ատում եմ ես քո խորհուրդը դժմիտ:
Եւ գիտեմ՝ մի օր պիտի չքանաս,
Ինչպէս մի երազ՝ չծնուած բնաւ,
Բեկուի՛ր իսկ այսօր, ո՛վ ոճրաբեռ նաւ:

Ո՛վ ունայն գաղտնիք, ստեղծո՛ղ անգութ,
Որ շինում ես միտս՝ քանդելու նորից
Ծիր-կաթիններ, անհուններ մութ,—
Դու չե՛ս գերազանց իմ խեղճ հիւլէից:

Ես՝ սիրտ զգացող, ես՝ խորհող ոգի:
Դու մինչդեռ՝ յորձանք անմիտ տարերքի:
Եւ հիմա ծանր վրէժովդ հսկայ
Իջել ես, կքել ուսերիս վրայ...

* * *

Ասում եմ, թէ՝ դու այնպէս
Մոռացել ես ինձ այնպէս,
Որ երբ աճուրդս եմ տալիս,
Հազիւ միտդ եմ գալիս:

Բայց, ցազելի՛ս, ձեր բակում
Այն լորիմ է դեռ ծաղկում,
Որի ճիճուը բոյրի մէջ
Քեզ գրկեցի սիրատենչ:

Ու գրկիս մէջ այսօր դեռ
Կիզող կրակ է վառուել,
Իսկ երբ աճուրդդ եմ տալիս,
Սիրտս արիւն է լալիս:

Ա՛խ, իրա՞ւ, է՝ դու այնպէս
Մոռացել ես ինձ այնպէս,
Որ երբ աճուրդս եմ տալիս,
Հազիւ միտդ եմ գալիս...

* * *

Մի մրահոն աղջիկ տեսայ
Ռիալտոյի կամուրջին,
Յորդ մազերը — գետ գիշերուայ,
Եւ յակինթներ՝ ականջին։

Աչքերը սեւ — արեւներ սեւ,
Արեւների պէս անշէջ,
Գալարում էր մէջքը թեթեւ
Ծաղկանկար շալի մէջ։

Աչքս դիպաւ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի,
Ժպտաց ժպտով առեղծուածի,
Յաւերժական կանացի։

Միամիտ չեմ՝ հաւատամ քեզ,
Տառապանքս փորձ ունի.—
Մի մրահոն կոյս էր քեզ պէս,
Կոտրեց սիրտս պատանի…

* * *

Ծո՛վ, եկաւ ազգեր եւ ես շառաչիւն
Խառնեցիւն իրենց երգերը չնչին։

Եւ հիմա ցրաւիլ յաւիտեան լռել,
Անցել են անդարձ, դարձել առասպել։

Բայց դու, անտարբեր, երգում ես կրկին
Իւր դարեր երգած ես երգերը հին։

Կը գան նոր երգով ազգեր նորանոր,
Կ'երգեն ու կանցնեն ազգեր բիւրաւոր։

Եւ կ'անհետանան անտապանագիր,
Եւ ցրանց յիշող չի մնայ մեկ իր։

Բայց դու, անփոփոխ, կ'երգես վերսին
Իւր դարեր երգած ես երգերը հին։

Եւ սակայն մի օր, նման մարդկութեան,
Կը լռես եւ դու, անդարձ, յաւիտեան։

* * *

Ինչո՞ւ, ինչո՞ւ հիմա այսպես
Չար ես այսպէ՛ս, չար ինձ հետ,
Որ ճամակներս ու պատկերդս
Ուղարկեցիր ողջը ետ:

Խստապահանջ խնդրում ես ինձ
Նամակներդ ես դարձնել.
Կատարում եմ ասպետօրեն
Քմայքներիդ այս խաղն էլ:

Բայց համբոյրներն այն սրտադող,
Որ ինձ տուիր ու առար,
Բնաւ երբեք դու չես կարող
Ո՛չ սաճալ, ո՛չ ետ տալ:

Նրանք պիտի վառուեն աննէջ,
Պիտի կիզեն ֆո հոգին,
Ինչպես որ միշտ այրում են ինձ
Նրջանկութեամբ ցաւագին:

ՀԱՅՐԵՆԻ ԾՈՒԽԸ

Հայրենի հողի վրայ եմ ծորից,
Նորից մանկական աչքով տեսնում եմ՝
Ցաւերժից դիտող աստղերն հրեղեն,
Հրաբխ է դառնում ափսարհն իմ ծորից:

Ուրախ էրիջով վազում է կայտառ
Իմ հին խաղընկեր գետակը փայլուն,
Տեսնում եմ նրա զմրուխտ հայելում
Ծաղկի պես ցնծուն՝ պատկերս պայծառ:

Կապոյտ երեկոն ա՛յնքան է խաղաղ,
Երգում է ծառից մի հաւէ սրտագոհ.
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Ծանօթ շաւիղով՝ գայլում է դանդաղ:

Ինձ տուն է կանչում ձայնը մայրենի,
Խաղըս թողնում եմ, երեկոյ է ուշ.
Գլուխ է մայրս, ժպտում է ճնճուղ,
Մի արեւի պես, որ նման չունի:

Վառուել է ծորից օճախն հինաւուրց,
Ելնում է ծուխը անուշ խրճկի պես,
Խօսում են մեռոնք... բայց ննջում եմ ես,
Հոգիս պարուրած հեքիաթ ու անուրջ:

Ոչինչ չեմ ցնչում այս ծխից աւել,
Ոչինչ, դասարկուած այս մերկ աշխարհում.
Ո՛չ կին եռազած, պանծալի անուն.
Ո՛չ գանձ աշխարհի — այս ծուխից աւել:

Կ՚ուզեի նստել այս սուրբ ծխի տակ
Ու տեսնել նորից հոգով մանկական
Հարազատներս, որ հիմա չկան,
Եւ հրաբխ նորից — աշխարհ բովանդակ...

Ա Ն Ի

Այսեղ երկնել են նախնիները իմ,
Դարձել է այսեղ նիւթը գաղափար.
Հագել է այսեղ երազը մարմին,
Չէնաղ երազը, որ չունի կոպար:

Անի՛, դու չես լոկ հողեղէն մի գաղձ,
Դո՛ւ ինձի ես ոգին – մի ողջ ժողովուրդ,
Ամէն ձեւ այսեղ ոճ է գերազանց,
Ամէն ինչ այսեղ – իմաստ ու խորհուրդ:

Ես հոգուս աչքով՝ անցած ու ներկայ
Վիճակդ եմ տեսնում՝ յեղուած մի սիւնի,
Որ մարտնչելով դարեր ոտընկայ,
Մեռնում է կանգնած, եթէ մահ ունի:

Սաղաւարտակիր, ձեռքիս տէգ ու նետ,
Կանգնել եմ բարձր բուրգիդ կատարին,
Ոստանիկներիդ, ռամիկներիդ հետ
Լսում եմ վառուած սէգ զօրավարին:

Տափաստաններից, խուժանը վայրագ
Յորդել է, եկել – հեղեղ զայրագին,
Ուզում է, Անի՛, ընկճել լուծի տակ
Քո սեղծագործ, թեւաւոր ոգին:

Խաժամուժ, խուժան՝ անծայր, անհամբակ,
Դարեր խուժում են – խժդուժ, խօլարշաւ,
Ճըչում խժանձայն, դնում են բանակ,
Քո ցորենադաշտ դաշտերում անբաւ:

Եւ որոտում է շեփորը ռազմի,
Կռւում ենք մտած արիւն ու քրտինք,
Դարեր կռւում ենք ատամ ատամի,
Մեռնում ենք կանգնած, երբ մահ ունինք...

Քո հին թշնամին, Անի՛, չե՞ս տեսնում,
Խուժել է նորից քո դաշտերի մէջ,
Բայց վառւում է դեռ մեր ակութներում
Հինաւուրց ուխտի կրակը անշէջ:

Դո՛ւ, հին դրօշակ, դո՛ւ, բագին փառքի,
Յենուել եմ նորից քո անմահ սիւնին.
Եւ սպասում եմ, եւ դարեր ոտքի
Քո իրաւաբեր շեփորիդ ձայնին...

* * *

Վերջին յորձաճիճ իմ ցնորքի,
Գրոհ տուիր կեանքիս վերջին,
Ձեռիդ աճիուն բաժակ ոսկի՝
Արբեցումի հրով վերջին:

Սեգ մազերդ օձախուխ
Խճճեցին ուղիս վերջին.
Անհոգ հոգիս լցուեց յրիւ
Մահասարսուռ սիրով վերջին:

Արիւնս հիմի աչքս առած՝
Դեմդ եմ կանգնել դողդոջ վերջին.
Սիրտս փոռած՝ սիրուդ առաջ,
Մահ խոցեցիր սրով վերջին...

* * *

Աչերդ՝ սեւ-հուր,
Հոգիս են կիզում,
Մազերդ՝ սեւ-սուր,
Սիրտս են բրտում:

Վիշտս է ծփում
Սիրուս պես վարար,
Քո ուղին ծածկում՝
Դաւաճան ու չար, –

Ուղիդ արիւնոտ,
Որ տանում է ինձ
Ուրիշների մոտ,
Ուրիշների մոտ...

* * *

Ծաղկավառ ուղին գնում է կրկին,
Ուր լոյս-թեւերով ճախրում էի ես՝
Երազելով ֆեզ, յաւերժական կին:

Ծաղկավառ ուղին գնում է կրկին,
Եւ նրա ափին կանգնել եմ մոլոր
Եւ բեկուած կեանքով, տխուր-տխրագին:

Ծաղկավառ ուղին գնում է կրկին,
Եւ լոյս-թեւերով ճախրում են նրանք,
Երազելով ֆեզ, յաւերժական կին...

* * *

Երկու մանուկ՝ տղա-աղջիկ,
Խաղում էին դաշտերում:
Երկու ընկեր՝ տղա-աղջիկ՝
Դպրոց էին ըստապում:

Երկու սրտեր հանդիպեցին
Շտուկի մէջ ծառուղու.
Երազեցին եւ թախծեցին,
Եւ սիրեցին իրարու:

Երկու օիրիմ իրար մօտիկ
Նոճիների ստուերում:
Երկու մանուկ՝ տղա-աղջիկ,
Խաղ են անում դաշտերում...

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ցորեցի ծլփուց արտերի եզրին
Կանգնել խորհում եմ արտիս մէջ լռին.—

Մի՞թե դու չէիր, հայրեցի՛ք իմ հեզ,
Որ տայգաներից, մթին եուրդերից,
Ցորդացող-եկող եյուզակներին
Բիւր ճիզակ ու տեգ
Սրտիդ մէջ մխուած՝ ընկել էիր խեղճ
Քաւութու վրայ բախուող ազգերի,
Դաժան դարերի մղձաւանջի մէջ,
Սմբակներին տակ խօլ ճժոյգներին.
Եւ արում էին ճիչով խնդագին
Անգղներն իրենց կտուցներր վէս
Քո արեւակեզ ժայռերի վրայ՝
Ցօտոտելու էեզ...
Եւ սակայն հիմա
Դու ցորից ծաղկել, ցնծում ես ցորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրըս անուշ օրորել է ինձ,
Իմաստաւորել մանուկ իմ հոգին
Քո հզօր լեզուով, երկի՛ր կաթոգին:
Այնքա՛ն ժամանակ, որ պիտի հերկէ
Սեւահողը հին՝ էո կտրին որդին,
Եւ գուսանըդ վառ՝ սերդ պիտի երգէ,
Դու պիտի ծաղկի՛ս, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով եւ բարձրագլուխ,
Դու պիտի հնչե՛ս, հնչե՛ս յաղթական,
Իմ հին հայ լեզու՝ էաղցր ու արտաբուխ:

ՄԱՆԿՈՒԹԻՆ

Հուրիրում էր արեւն ուրախ,
Գետն էր գնում ճաղցրակարկաչ.
Զորս դիս՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ:

ԵՒրտոյտն երգով ճախրում էր վեր.
ԵՒրօրհներում՝ խրխինջ ու կանչ.
Զորս դիս՝ գարնան կանանչ թեւեր,
Կանանչ հովեր, ծովեր կանանչ:

Մեր մանկական հիչն էր քնդում
Դաշտերի մեջ ցօղաթաթախ.
Նայում էինք գմրուխտ գետում,—
Եւ գնգում էր արեւն ուրախ...

* * *

Տիզբրճն այս անսահման
Իր ծանրութեամբ անագին
Կախուած է սոսկ մի մազից,—
Եւ այդ մազն է իմ հոգին

* * *

— Ինչ պիտ լինեմ կեանքից յետոյ,
Հարցում արի ես բնութեան,
— Ինչ որ էիր կեանքից առաջ,—
Այսպէս տուեց ինձ պատասխան:

* * *

Սաւառնում ես ցնծութեամբ վառ՝
Քո սիրոյ հետ պուրակի մէջ:

Ցաւերժական զգում ես ինձ
Եւ ձո հուրը յաւերժ աճեջ:

Սգաւորներ՝ ծաղր ու դաղդաղ՝
Տանում են լուռ մի սեւ դագաղ:

Մի օր էլ ինձ պիտի տանեն
Այսպես լրիվ ու տրտմասուգ:

Եւ ինձ նման այս պուրակում
Պիտ՝ հուրհրայ մի անմահ զոյգ...

* * *

Վերջալոյսին ոսկեծող,
Դաշտերում ծաղկած
Շրջում էի մենաւոր,
Հոգիս անդորրած:

Մոռացուած մի երգ հին
Լսեցի յանկարծ,
Այնքա՜ն, այնքա՜ն մտերիմ՝
Սիրած ու ապրած:

Աղջիկ, տղա՝ քեւ քեւի՝
Անցան ծաղկազարդ,
Ամբողջ սլացք, տենչ ու բոց,
Երգելով զուարթ:

Այդ երգը, սի՛րտ, գիտես դո՛ւ,
Երգել եմ եւ ես,
Երբ որ պատանի էի՝
Հրավառ ու վէս:

Վերադարձան հոգուս մէջ
Սիրելի դէմքեր,
Այս աշխարհից հեռացած
Եւ մեռած սիրեր:

Միանչեւ խոտից ուշ գիշեր
Դաշտերում թափուր
Ուրուներին հետ անքուն
Շրջում եմ տխուր...

ՀԱՑՐԵՆԻՔԻՍ

Պիտի փարուիմ չքնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծո՛ւց.
Եւ մայրական աննուն շնչիդ՝
Յորեց արտով ծրփո՛ւց:

Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրազեղ կոչով՝
Դիմիդ եմ տեսնում՝ նոր ու պայծառ,
Քո ինքագեղ ոճով:

Վա՛ռ ու հզօ՛ր ես ապագաց
Կայծակում է իմ դէմ.
Դո՛ւ, յաւերժող իմ Հայաստաց,
Անուն ֆա՛ղցր ու վսե՛մ:

* * *

Երբ մանուկ էի, բնկերներիս հետ
Դիւղի կալերում, պատերում ծաղկած,
Ճիպոտներս, իբրեւ ցժոյգներ հեծած,
Մրակում էինք եւ սլանում խենթ
Դէ՛պ հեխիաթային ափսարհներ հետու,
Եւ երջում էինք կախարդ, հմայուն
Այն վայրերի մէջ՝ անյայտ, անանուն:
Երբ հասակ առա, ուսերցի յաճախ
Երկաթուղիներ եւ շոգենաւեր,
Անցայ երկրներ, կտրեցի ծովեր,
Տեսայ պերճ վայրեր, քաղաքներ չքնաղ,
Բայց, աւա՛ղ, երբէք — երբէք չըհասայ
Իմ ճիպոտ-ձիով ոտք դրած երեղ
Ափսարհներս հետու եւ հեխիաթագեղ:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՑ ԱՌԱՎՕՏԵԱՆ

Այս նոր տարուայ առաւօս,
երբ որ էնից զարթնեցի,
Աւա՛ղ, մերոնք միտս ընկաց,
եւ սուրբ պահեր յիշեցի։—

Տեսայ գիւղի տունը մեր...
Ջրաղացի ձայնն աննո՛ւշ.
Մեր մեծ թոնիրը վառ էր...
Նորահացի հոտն աննո՛ւշ։

Հայրս եկել էաղաքից՝
Քոյրիկիս ու ինձ համար
Բերել էր թանգ նուէրներ —
Նոր զգեստներ ծաղկավառ։

Բռնած հօրս ձեռներից՝
Քոյրիկս ու ես թռվռուն
Շրջում էինք բերկրալի
Արփաչայի ափերում։

Ա՛խ, այն օրը յիշեցի,—
Յաւերժական տխուր պահ,—
Օսար երկիր գնացի,
Էլ մայրիկիս չը տեսայ։

Մայրըս սեղմած ինձ կրծքին՝
Լաց էր լինում սրտաքամ,
Համբուրում էր կարոտով,
Ու չէր թողնում, որ գնամ:

Ձիս քայլում էր գլխահակ
Մտքերիս հետ թախծալից,
Ու տանում էր ինձ հեռու
Մանկութեան սուրբ վայրերից:

Եւ քայլ առ քայլ՝ մարում էր
Ջրաղացիս ձայնն անուշ,
Բայց ես լսում էի դեռ
Խեղճ մայրիկիս լացն անյոյս:

Այս նոր տարուայ առաւօտ,
Երբ որ քնից՝ զարթնեցի,
Աւա՛ղ, մերոնք միտս ընկան,
Եւ սրտիս մէջ լացեցի...

ՈՂՋՈՅՆ ԱՄԷՆԲԻՆ

Ամսավերջին ապրիլի
Միտս խոցուց՝ ելայ դաշտ,
Բնութիւնը գրկեց ինձ,
Ինչպես մի մայր սիրաշատ:

Շուրջս փռուել էր հրաշք,
Առաւօտն էր բողբոջում,
Նժոյգի պես ոսկեբաշ
Արեգակն էր վրնջում:

Հաւերն ուրախ երգեցին,
Ինձ ժպտացին ծիլ ու սեզ,
Որ իրենց պես արտագոհ,
Զուարթ լինեմ իրենց պես:

Ի՜նչպես խայտում եմ, խնդում,
Ծփծփում եմ թեւաբախ,
Ուլեր, գառներ լուսագեղմ
Եւ թռչուններդ չքնաղ:

Եւ ծաղիկներ, թիթեռներ,
Եւ զեփիւռներ հաղցրաբոյր.
Ծիծեռնակներ սրաթեւ,
Եւ դայլայլող ակն-աղբիւր:

Ու սրտիս մեջ մեկը ինձ
Խօսք է ասում մտերիմ,—
«Կանգնի՛ր, ո՛վ մարդ, եւ սիրով
Ողջագուրիր ամէնքին:

Գլուխդ բաց, ողջունի՛ր
Եղնիկներին, ծառերին,
Թռչուններին, թիւերին,
Առուակներին, գառներին:

Նրանք յաւերժ հարազատ
Եղբայրներն են ու խոնարհ,
Ծնած-սնած մի մօրից
Բոյրիկներ ու բարի:

Ծուըր իջի՛ր երկիւղած
Եւ այս մամռոտ ժայռը մեծ
Խոնարհ սրտով համբուրիր-
Նա եղբայրն է ու երեց»:

* * *

Ամառուայ կապոյտ, անդորր գիշերին,
Ժայռի կատարին նստել եմ մենակ՝
Հայեացքս յառած ցիրուն մտած ծովին:

Լո՜ւռ է ամէն ինչ եւ ամենուրեք.
Ժամանակն՝ անշարժ, եւ ողջ տիեզերք
Լցուած խորագգաց, խորին լռութեամբ:

Պա՛ն երանաւէտ եւ նուիրական,
Անհուն լռութեան տիեզերական:

Ե՛ս տեսնում եմ ինձ, ես լսում եմ ինձ,
Ե՛ս զգում եմ ինձ, ճանաչում եմ ինձ:

ՊԻՆԿԷՕԼ

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբիւրները Պինկէօլի.
Տարուէ տարան անցան զուգուած ուղտերը,
Եարս էլ գնաց եայլաները Պինկէօլի։

Անգին եարիս լոյս երեսին կարօտ եմ,
Նազուկ մէջքին, ծով-ծամերին կարօտ եմ,
Քաղցր լեզուին, անուշ հոտին կարօտ եմ,
Սեւ աչքերով էն եղնիկին Պինկէօլի։

Պա՛ղ-պա՛ղ ջրեր, պապուկ շուրթըս չի բացուի,
Ծուփ-ծուփ ծաղկունք, լացող աչքս չի բացուի,
Դեռ չտեսած եարիս,— սիրտըս չի բացուի,
Ինձ ի՛նչ, աւա՛ղ, բլբուլները Պինկէօլի։

Մոլորուել եմ. ճամբաներին ծանօթ չեմ.
Բիւր լճերին, գետ ու քարին ծանօթ չեմ.
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանօթ չեմ,
Քուրիկ, սաա, ո՞րն է ճամբան Պինկէօլի։

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՐԳԸ

Թռչնիկները գեղեցիկ՝
Լուսաբացին ծողծողուց
Իրենց յոյզերը մաքուր
Երգում էին, գեղգեղում:

Ա՜խ, ինչ բարի խաղցրութեամբ
Ձեր խօսքերը արտագին
Ամոքեցին, զգուեցին
Վշտի ճովից իմ ճոգին:

Ա՛ն բազուկը, որ կամի
Ձեզ հարուածել, սպանել՝
Թո՛ղ յաւիտեան կարկամի,
Նուիրական գուսաններ:

* * *

Նօր-ուր տարեկան մի փոքրիկ աղջիկ
Մի անգամ մեծնակ խաղում էր դաշտում,
Ոսկի մի թիթեռ ծաղկից ծաղիկ
Նրա առաջին թռչում էր, խայտում:

Աղջիկն ուզում էր թիթեռին բռնել.
Ա՜խ, այնպես, այնպե՜ս թռչում էր մօտիկ.
Հենց բաւական էր, որ ձեռքը մեկներ,
Ի՜նչ գրաւիչ էր, ի՜նչ գեղեցիկ:

Բայց մեկ էլ տեսար, մատների միջից
Փախչում է արագ՝ թիթեռը կայտառ.
Ընկերների պես խաղալով նորից
Նրանք վազեցին ու մտան անտառ:

Ծառից ծառ անվերջ, ծառերի եռեւ
Թիքեռը կախարդ թռչում էր, թափչում.
Կրկին վազում էր աղջիկն ինչ ի ինչ.
Միևչեւ որ խաւարն իջաւ անտառում:

Աղջիկը յոգնած՝ մի փչակի մեջ
Կուչ եկաւ, ննջեց միևչեւ լուսաբաց.
Գիւղը դառնալու ճամբայ որոնեց,
Բայց դարձեալ ծառեր՝անտառ անթափանց:

Երեք օր մնաց անտառում մենակ,
Ուտում էր բիեր, պտուղներ վայրի.
Փնտռում էր դարձի ուղի շարունակ,
Գիշերը գնում փչակում ծառի:

Դրկիցների ներս հայրը մտատանջ,
Ցերեկներն՝ անդուլ, գիշերներն՝ անքուն,
Որոնումներով գտան աղջկան,
Դրկից գիրկ տալով ուրախ դարձան տուն:

Մայրը խելայեղ, լացաւ խնդագին
Դրկեց համբուրեց կորած աղջկան.
«Ասա՛, հոգեակ իմ, անտառում մթին,
Շատ չվախցա՞ր» — հարցրեց նրան:

«Ո՛չ, անգի՛ն մայրիկ, ես բոլորովին
Չեի վախենում, հենց այն պատճառով,
Որ թռչուններըմիշտ երգում էին»,
Ասաց աղջիկը ճշմարիտ սրտով:

* * *

Էս գիշե՛ր, ամպիով գիշե՛ր.
Կարոս աչէիս ֆուճ չի գայ.
Էս վըշեր, մըրմուռ-յուշեր,
Իմ սեւ սըրտիս վազ չեն գայ...

Շա՜տ եմ յացել,— իմ աչերիճ
Ֆուճը վաղուց է թրուել.
Շա՜տ եմ յացել, եար, ֆու սերիճ,
Սնրտըս խոր վերք է դառել:

Իմ չոր գըլո՛ւխ, ֆուճ չուճիս,
Խարդոս գըլո՛ւխ, տուճ չուճիս,
Առար-աշխարհ մաճ կուգաս,
Սիրած գըրկում բուճ չուճիս...

* * *

Եւ ուշ գիշերիճ,
Յոգնած մի ալիք,
Լացով, հառաչով,
Եկաւ ու ինկաւ
Գիրկը մայր երկրի,
Ա՜խ, ճակատս յոգնած
Ո՞վ պիտի շոյէ,
Եւ ո՞ւմ սիրտճ է բաց
Այս հեռու օսար
Ափում ինձ համար:

***

Արեւի պես սիրում Զարօս,
Ծափաղ տալով տուն կուգաս,
Էն մութ ձորին, իմ խոր սրտին
Շողեր տալով տուն կուգաս:

Ալ-վարդերը՝ կրծքիդ վրան,
Լոյս ցօղերը՝ ոտներիդ,
Հովերի հետ ծամերդ թռա՛ն,
Մեռնիմ թուխ-թուխ ունքերիդ:

Արի՛ մօտըս, եղնիկ աղջի՛կ,
Արար-աշխարհ թող արի.
Նազ մի՛ անի, նազիդ մասաղ,
Անսէր սրտէն վազն արի:

***

Գարունն եկաւ կարմիր կանաչ,
Արօալոյսով ծիածանով,
Գարունն հագած օրհ ու նանանչ,
Գոգն ու ծոցը ծաղիկներով:

Ականջներուն բլոչուններու,
Հազար բոյրով սէ՜ր շշնջաց,
Աշխա՜րհ քնդաց երգով սիրու,
Աւա՛ղ գարունն ինձ բան չասաց:

Սիրտըս բացի գարնան դիմաց,
Շողքի, ոսկի, անո՜ւշ գարնան,
Աւա՜ղ, աւա՜ղ, սիրտս դատարկ մնաց,
Մուրացկանի ափի նըման:

ՈՒԶՄԱԿՈՉ

Գիշեր է մռայլ ամպամած գիշեր,
Հողմեր են փչում, շաչում են հողմեր,
Դաւաճան երկրից մեր ցեղ բռնամու՝
Մեր նուիրական դաշտերի վրայ:
Գոռ ալիքներն են լեռնացում ընդոստ
Մեր խռովայոյզ ծովերի վրայ:

Է՛յ ազատ Մասիս, երկնասոյզ գահեր,
Է՛յ երկաթակուռ խորխոտ գագաթներ,
Շանթե՞ր էք զօդում, սուրե՞ր էք կռում,
Հրեղէն ցասում ընդդէմ բռնամուն:
Էյ հե՛յ լսեցէք, վեհ հայրենիքի
Կտրիճ զաւակներ, ժողովուրդներ քաջ,
Ելէ՛ք, զարթնեցէ՛ք, կանգնեցէ՛ք արթուն.
Գիտցէք՝ ընում են գետերն ու քամին,
Սակայն չի ընում երբէք բռնամին:
Ահա ոճրամիտ մեր ոսոխը չար
Շղթայ է բերում, լուծ ու կապանքներ
Ընկճելու ազատ մեր եղբայրներին
Եւ անարգելու հայրենիքը մեր:

Էյ հե՛յ, լսեցէք, ձայն տուէք իրար,
Ամե՞նքդ էք ոտքի, մարդ ընած չկա՞յ.
Շուտ հագէք-կապէք զենքեր ու զրահ.
Գօտեպնդուեցէ՛ք ատելութեամբ վառ.
Գօտեպնդուեցէ՛ք անձնազոհ կամքով,

Գօսեպցդուեցէ՛ք ահեղ վրէժով,
Շառաչէ՛ք ուժգին, կաղնիներ հզօր,
Խօլ վրնջացէ՛ք, ցժոյգներ խիզախ,
Մրրիկի նման զարկեցէք ետիւր,
Դէպի՛ ռազմի դաշտ, դէպ հերոսացում,
Դէպի՛ ռազմի դաշտ, սուրբ դրօշի տակ,
Դէպի՛ բարձունքը մահի ու փառքի.
Վանեցէ՛ք հեռու բռնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցէ՛ք հեռու:
Ցաւերժ պիտ մնայ հայրենիքը մեր,
Հզօր եւ ազատ եւ յաւերժ կանգուն
Մեր իտեալների սուրբ արեւի տակ:
Դէպի ռազմի դաշտ դէպ հերոսացում,
Դէպի բարձունքը մեծ յաղթանակի:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Մեծ ճարտարապետ Թ. Թորամանեանի յիշատակին

Հայրենի դաշտում քայլում եմ մենակ.
Աշուն է արդէն, եւ ձիւնը նորեկ
Ծածկել է լանջը սեգ Արարատի.
Հողմը սաստկացունչ՝ հսկայ մի բարդի
Կորաթեքել է աղեղի նման
Հայկ նահապետի:

Սակայն իմ առաջ՝ կանգնել են ահա՝
Պատմութեան ահեղ հողմերին ընկած,
Սիւներն հոյակապ հին աւերակի:

Դո՛ւք, դարերի մէջ՝ դժար ու դաժան,
Երբ ամենայն ինչ ընկած էր տապաս,
Դո՛ւք, ով երկնախոհ գմբէթներ ու վէմ
Մնացիք ըմբոստ, մնացիք անսաստ
Բռնակալների չարութեան ընդդէմ,
Իմ ժողովուրդը՝ զարկուած շղթայի,
Նշխարներըդ սուրբ, քարերդ մամռոտ
Պաշտեց, գուրգուրեց հաւատով անշէջ,
Դո՛ւք, հզօր որմեր, կամարնե՛ր խրոխտ,
Նրա հոգու հետ խօսեցիք հոգով
Մեր քաջակորով նախահայրերի.
Խօսեցիք լեզուով անհուն գեղեցկի,
Եւ ներդաշնակի, եւ բացարձակի:

Գօսեպցդուեցէ՛ք աճեղ վրէժով,
Շառաչէ՛ք ուժգին, կաղնիներ հզօր,
Խօլ վրնջացէ՛ք, ձժոյգներ խիզախ,
Մրրիկի նման զարկեցէք ետիւր,
Դէպի՛ ռազմի դաշտ, դէպ հերոսացում,
Դէպի՛ ռազմի դաշտ, սուրբ դրօշի տակ,
Դէպի՛ բարձունքը մահի ու փառքի.
Վանեցէ՛ք հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցէ՛ք հեռու:
Ցաւերժ պիտ մնայ հայրենիքը մեր,
Հզօր եւ ազատ եւ յաւերժ կանգուն
Մեր իտեալների սուրբ արեւի տակ:
Դէպի ռազմի դաշտ դէպ հերոսացում,
Դէպի բարձունքը մեծ յաղթանակի:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Մեծ ճարտարապետ Թ. Թորամանեանի յիշատակին

Հայրենի դաշտում քայլում եմ մենակ.
Աշուն է արդէն, եւ ձիւնը նորեկ
Ծածկել է լանջը սեգ Արարատի.
Հողմը սաստկաշունչ՝ հսկայ մի բարդի
Կորաթեքել է աղեղի նման
Հայկ նահապետի:

Սակայն իմ առաջ՝ կանգնել են ահա՝
Պատմութեան ահեղ հողմերին ընկնած,
Սիւներն հոյակապ հին աւերակի:

Դո՛ւք, դարերի մէջ՝ դժար ու դաժան,
Երբ ամենայն ինչ ընկած էր տապաստ,
Դո՛ւք, ով երկնախոհ գմբէթներ ու վէմ
Մնացիք ըմբոստ, մնացիք անսաստ
Բռնակալների չարութեան ընդդէմ,
Իմ ժողովուրդը՝ զարկուած շղթայի,
Նշխարներըդ սուրբ, քարերդ մամռոտ
Պաշտեց, գուրգուրեց հաւատով անշէջ,
Դո՛ւք, հզօր որմեր, կամարնե՛ր խրոխտ,
Նրա հոգու հետ խօսեցիք հոգով
Մեր քաջակորով նախահայրերի.
Խօսեցիք լեզուով անհուն գեղեցկի,
Եւ ներդաշնակի, եւ բացարձակի:

Դո՛ւք, վեհ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ ոգու, հանճարի.
Բեկորների մեջ ձեր նուիրական
Ինչպես մանուկը՝ աշխարհից լքուած,
Մայրական գրկում տեսաւ նա իրեն
Պաշտպանուած ամուր, պարիսպներով
կուռ:
Ոգով ներշնչուած սուրբ քարերիդ մեջ
Իմ ժողովուրդը՝ հիացքով արդար,
Մարմինը տեսաւ իր երկնասլաց
Վսեմ խոհերի, վեհ գաղափարի,
Եւ իրեն բարձր զգաց ոտոխից,
Հպարտ եւ հզօր, եւ զօտեպնդուեց
Իր անպարտելի, յուսաբաղձ հոգու
Ցաւերժի համար անհաշտ պայքարի:

ՍԻՐԵԼԻ ՀԵՐՈՍ Ս. Գ. ՋՈՒԲԻԵՆԻ ԱՆՄԱՀ ԹԻՇԱՏԱԿԻՆ

Հերոսական ընկերներով միասին
Կայծակի պես դու ահաբեկիր թշնամուն,
Իտալներին վեհ դրոշը ձեռին
Բաջի մահով ընկար պատուի սուրբ դաշտում:

Քո սիրելի հայրենիքում ցորագաս,
Որ ճեզ տուեց դիւցազնի կամք ու կորով,
Ամեն մի սիրտ մորմոքում է ճեզ համար,
Եւ գլուխներն խոնարհում են յարգանքով:

Քո ճակատը յաղթանակով պսակուած,
Մեր պատմութեան մէջ ճայլում ես դու փառով,
Եւ ահա մեր ճակատները խոնարհած
Գործիդ հանդէպ բարձրանում են պարծանքով:

Մեր ցասումը, մեր վրէժը, ո՛վ հերոս,
Քո երկաթէ բազուկիդ մէջ դու տարար,
Եւ զարկեցիր ննջգ թշնամուն բարբարոս,
Ոսոխի դէմ դարձար վահան ու պատսար:

Քեզ յաւերժ փառք... հանգչի՛ր խաղաղ ու անդորր,
Նոր հերոսներ կը կայծակեն ցո հետով,
Հայաստանը կը բողբոջի ցորից ցոր,
Կը զարդարէ ցո շիրիմը վարդերով:

ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՒ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նուէր մեր ժողովրդական վէպի՝
«Սասունցի Դաւիթ»-ի հազարամեակին։

1

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենութեան մէջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լոյսով անշէջ,
Մի նշխարով, մի կում ջրով եւ ճգնութեամբ գիշերն անքուն,
Պատմութիւնը մեր գրեցին մագաղաթի վրայ տժգոյն—
Եղեռնները նախնիների յորդաների արիւնըռուշտ,
Փլուզումը հայրենիքի եւ ոսոխի սուրը անկուշտ։
Եւ ողբացին յալահառաչ դշխեմ բախտը Հայաստանի
Եւ յուսացին արդարութեան մի խուլ աստծու դատաստանի։

2

Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օճախի շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդավառ, առջեւները գինի եւ հաց,
Վիպերգեցին յաղթանակը դիւցազների մեր մեծազօր
Եւ ծաղրեցին պարտութիւնը ոսոխների մեր բիւրաւոր։
Եւ հիւսեցին պատմութիւնը յաւերժացող ժողովուրդի,
Վառ հաւատով փառքերը մեր աւանդեցին որդոց որդի.
Տեսան շքեղ մեր ապագան, անընկնելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրոյ համար միշտ բարձրացած Թուր-Կայծակին։



ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ

Նկ. Գ ԽԱՆՃԵԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ

Սիւնեաց բարձր լեռներում այդ շանթե՞րն են բոցկլտում,
Հանդ ու ձորեր թնդում են որոտալից շաչիւնով,
Դաւիթ-Բէկի քաջերի վառ թրերն են կայծակում,
Ամէն մի սիրտ թնդում է նժոյգների դոփիւնով:

Մեր դարաւոր ցասումի, մեր վրէժի օրն արդար
Դաւիթ-Բէկը մեզ բերեց ազատութեան պատգամով.
Մեր գետերը փրփրաբաշ, մեր դաշտերը ծաղկավառ
Կարմրեցին, ցնծացին մեր թշնամու արիւնով,

Դաւիթ-Բէկի քաջերի սուրն ու թուրը հրեղէն
Կոտորեցին, ջարդեցին մեր թշնամուն չարաղէտ.
Դրօշները թո՛ղ ծփան, զանգերը թո՛ղ ղօղանջեն,
Թող քուն մտնեն աներկիւղ մեր մանուկներն այսուհետ:

Դաւիթ-Բէկը ծունր իջաւ, երբ որ եկաւ Հայաստան,
Ուխտեց փշրել մեզ գերող կապանքներն ու կուռ շղթան,
Ուխտեց ջնջել թշնամուն, փրկել աշխարհն Հայաստան,
Ու կատարեց ուխտը սուրբ.. Հազա՛ր, հազա՛ր փառք նրան:

Թո՛ղ անձնուրաց ուխտ կապեն մեր թոռները քաջածին,
Դաւիթ-Բէկի թուրը վեհ չժանգոտի յաւիտեան,
Շողայ, շաչէ, երբ խուժէ մեր սուրբ հողը թշնամին,
Ու ծուխն անուշ բարձրանայ մեր տներից յաւիտեան:

ՄԵԾ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ

(9 *Մայիսի* 1945)

Մեր սուրը փառքով դրեցինք պատեան, —
Մեծ յաղթանակի օրն է ցնծալից.
Պարտուեց մահաւուչ ոսոխը դաժան,
Երգեր են յորդում զուարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,
Լցրել բասերը ոսկեփայլ գինով:

Եւ անցորդներին կանչում է, խնդրում, —
«Ընէքայրնե՛ր, որդուս կենացը խմե՛ք,
Հերոս է որդիս, յաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմեք»:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եւ զարկում նորից գաւաթներն իրար:
Նրանց մէջ մի հայր ասում է մեղմիկ, —
«Է՛ս էլ իմ որդուս հանգստեան համար»:

Գլխարկներն իսկոյն հանում են գլուխ,
Նոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անձայն զոհուածի համար
Եւ հեռում գինին սուրբ հացի վրայ:

ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Երբ Եահուէն մարդուն ստեղծեց հողից,
Հաւաքեց հողը երկրի չորս կողմից —
Առաւ ինսիսից, հարաւից առաւ
Եւ արեւելքից, եւ արեւմուտքից,
Որպէսզի մարդը, ուր որ դեգերէ,
Ամէն տեղ իրան ըզգայ իր երկրում.
Եւ երբ որ յոգնի եւ մահը բերէ
Նրա աճիւնադուրդ տեղչաճքներին վերջ,
Ամէն տեղ լսէ ձայնը մայրական,—
«Արի, որդեակ իմ, հանգչիր գրկիս մէջ»:

ՍՈԿՐԱՏԷՍԸ

Սոկրատեսը դատապարտուած էր մահուան
Աթենական ամբոխավար ատեանից։
Նա ձաղկել էր չար կարգերը պետութեան
Եւ հաւայնքի բարեերց յոռի, մեղսալից։

Նա փոխարէն օրէնքների մարդադաւ՝
Բարձրացրեց իմաստութեան կատարին –
Խղճի ձայնը, ազատ միտքը, սէրն անբաւ,
Գեղեցիկը, ճշմարիտը եւ բարին։

Եւ ահա նա շղթայակապ, բանտի մէջ,
Սպասում էր մահուան ժամին անվրդով։
Բայց մի հմուտ երաժիշտ թախանձեց,
Որ մօտը գար մի կարեւոր խորհրդով։

Նկաւ շուտով երաժիշտը անուանի.
— Ողջո՜յն, ասաց, ով իմաստուն Սոկրատես,
Ինչո՞վ եղայ ես էն կոչին արժանի,
Ասա, խնդրեմ, ես պատրաստ եմ եղբօր պես։

— Շատ եմ խնդրում, եղբա՛յր անգին, որ հանիս՝
Էութիւնը երաժշտութեան մեկնել ինձ.
Կեանքը կարճ է, գիտութիւնը՝ երկար,
Սակայն լաւ է՝ չհրաժարուել առիթից։

— Բայց չէ՞ որ դու... ոհ, պաշտելի բարեկամ...
Եւ կարկամեց երաժիշտը ապշահար:
— Այո՛, սակայն մահից առաջ կը ցանկամ
Լուծիւնը այդ առուեստի իմանալ:

Երբ մեկնում էր երաժիշտը երկիւղած
Գաղտնիքները, խորհուրդները առուեստի,—
Իմաստութեան անմահ լոյսով ճաճանչուած՝
Հրճւում էր անյաղթ ոգին Սոկրատի:

ԱԹԹԻԼԱՆ ԵՒ ԻՐ ՍՈՒՐԸ

(Առասպել)

1

Կայ մի հզօր, մի աւեղ սուր
Ողուզների ժամանակից,
Խորունկ թաղուած մի կաղնու տակ
Վրկանայ բորբ տափաստանում:

Հորդաները խուժ հոների
Ակօսել են ափերն անծիր.
Եւ չեն գտել սուրը հզօր
Ժամանակի սկիզբներից:

Եւ Աբբիլան երազ տեսաւ,
Երազի մէջ — տեղը սուրի.
Խլեց կաղնին խոր արմատից,
Հանեց սուրը հին պապերի:

Վրկանայ մուր ծովի վրայ
Կայծակն աւեղ փայլատակեց,
Երբ Աբբիլան ճօճեց սուրը
Արեւմտեան ափսարի դէմ:

Եւ Վոսփորի, Հռենոսի,
Եւ Դանուբի եւ Տիբերի
Ալիքները մթագնեցին,
Երբ Վրկանայ ծովը օղաց:

— «Արդ, դողացե՛ք, սասանեցե՛ք,
Արեւմուտքի խարդախ ցեղեր,
Դո՛ւք, հեսս Հռոմ, մեղկ Բիւզանդիոն
Բերում եմ ժանտ վախճանը ձեր:

Պիտի փշրեմ, կրակի տամ
Ոստաններդ, գահերդ ձեր,
Քաղաքներդ, դղեակներդ,
Դպրոցներդ, վանքերդ ձեր:

Օրհներդ շղթայ եմ ձեր,
Ձեր բարերդ՝ կնամարդի.
Ձեր գրերդ սուտ եմ ու սին,
Ձեր աստուածդ՝ շահ ու բաժին:

Պիտի կըխփեմ իմ սուրի տակ
Արեայ, իշխան եւ հահանայ,
Եւ պիտի ձեր հաղաքներում
Վրկանայ գոռ գայլը ոռնայ:

Ձիուս կոխած ամբակի տակ
Եւ իմ անցած ուղիներով
Էլ չպիտի ծաղկի մի ծիլ
Ձեր հայրենի պիղծ հողերում»:

Ասաց. հեծաւ խօլական ձիւն
Առանց սանձի, վարավանդի,
Ոտներով պիրկ՝ խրտանեց ձիւն
Եւ մխրճեց սուրն արեւմուտք:

Մռմռացին, մռնչացին
Հորդաները հեղեղ-հեղեղ,

Եւ խաժամուժ ծով կապեցին
Վրկանայ գոռ ծովի բոլոր:

Եւ խթանեց ձին Աքիլաս,
Վրկանայ գայլն առջեւն առած,
Եւ մխրճեց սուրն արեւմուտք,
Վրկանայ գայլն ոռնաց վայրագ...

Ցորդաները մրրկուեցին,
Եւ ճեղքելով ծով ու կապաց՝
Անցառները տապաս ընկան,
Գիւղ ու քաղաք մահի աւար.
Ամպերն ելան խարոյկների
Եւ ծածկեցին նեղգ Եւրոպան:

2

Երբ Աքիլաս խուժ հոսերի
Վրկանայ բորբ տափաստանում
Կաղնու խորին ճիրաններից
Կորզեց սուրը ոդուզների,—
Վաղուց ծարաւ լեզուի նման
Պապակում էր սուրն արիւնի,
Եւ օձի պես գալարւում էր
Կուռ ափի մէջ Աքիլայի
Ընդվզում էր պատեան մտնել,
Եւ չէր հանգչում պատեանի մէջ.
Եւ մղւում էր պատեանից դուրս
Դեպի արեան արբեցումի:

Եւ Աքիլաս՝ սուրը ձեռին,
Անցաւ յուրքի դաշտերն անծիր

Ըսկիւթիայի եւ Դակիայի,
Թաճայիսից մինչեւ Դանուբ,
Սրի ֆաբեց հովիւներից,
Ռամիկներից, ազատներից,
Սրի ֆաբեց գեղջուկներից,
Արեամբ ներկեց գետ ու գետին,
Եւ չյագեցաւ սուրը սակայն:

Արդեն ծփում էր արեան մէջ
Հէմ Եւրոպան մինչ Գալլիա,
Ուր Աբբիլան վարեց արով
Ազգեր, ցեղեր իրարու դէմ:

Եւ կատաղեան ռազմադաշտում
Հազար ու բիւր ընկան տապատ,
Ուր դեռ օդի ոյտներում
Ուրուները ռազմիկների
Մարտնչում են կատաղաբար
Իրար անհատ ու ոխերիմ:
Բայց Աբբիլան եւ ոչ մի պահ
Դադար չառած խուժեց դէպի
Ջենաղ ափերը Վենետի.
Արիւնախանձ սրին մատնեց
Ամվիլեան հրաբակերտ.
Եւ չյագեցաւ սուրը սակայն:

Արեան անյագ արբեցումի
Տենչով վառուած սուրն անաւոր
Տանջում էր յոյժ Աբբիլային
Նրազներում եւ արբշմնի:
Ընդվզում էր մտնել պատեան,

Չէր դադարում պատեանի մէջ
Եւ մղում էր պատեանից դուրս
Եւ օձի պէս գալարում էր
Կուռ ափի մէջ Աբբիլայի:

Պաճոճայի արձակ դաշտում
Վէս Աբբիլաճ՝ կուրծքը բացած,
Կանգնեց մի օր առաւօտեան:
Սուրը երկինք նետեց բախով,
Սուրը իջաւ շառաչումով.
Պատռեց կուրծքը Աբբիլայի,
Մբխուեց արտում Աբբիլայի,
Ընկաւ մեռած՝ Աբբիլաճ վար,—
Եւ խաղաղուեց սուրը վայրագ,
Արեան ծարաւը յագեցաւ:

ԾԱԽԵՐԺԱԿԱՆ ՍԷՐԸ

1

Լուսակերտ է ապարանքը Թադմորի.
Անապատում, որպես երազ ոսկեհիւս.
Ծօթն հարիւր սիւնի վրայ մարմարի
Սլանում է ասպարակը երկնասոյզ:

Շուրջը նազուկ արմաւենու պուրակներ,
Ուր երգում են հրաբխ-հաւքեր կարօսով,
Շատրուանները հուրհրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով:

Գահի վրայ երիտասարդ էլ-Սամաճ
Մեղմ գրկել է հրաշագեղ բամբիճին.
Կրծքի վրայ հիւսքը նրա-ծփծփաց,
Հանց նուճուճար լոյս-աղբիւրի երեսին:

Փերուզ ծովը, որ փարում է մօտաքոր
Սեպ ժայռերը Լիբանանի փէշերի՝
Զունի այնպէ՛ս, այնպէ՛ս փրփուր ձիւնաքիւր,
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիճի:

Արքայական գահի շուրջը զուարթուն
Մանկլաւիկներ եւ նաժիշտներ ոսկեհեր
Նուագում են, կախաւում են ու երգում
Գիշերները, առաւօտուց մինչ գիշեր:

2

Երբ հանգչում են ապարանքի ջահերը,
Եւ արծաթեայ կարապի պես լուսընկաց
Փայփայում է աւազանի ջրերը,
Շշնջում է սիգի նման Էլ-Սաման:

Շշնջում է լուսաթաթախ բամբիռի
Ականջը ի վար այնպես ճնճուղ, հեզասահ,
Ինչպես լուսնի շողակաթը թաւիշի
Այն հոյակապ սիւներն ի վար մարմարեայ:

— «Բարձր են երկնի ձեղունները, նազելի՛ս,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից:

Արուսեակը, որ ներկում է ծիրանի
Շրթունքները գառնուկների Տիւրոսի,
Ա՛յնքան կարմիր, ա՛յնքան կարմիր բոց չունի,
Ինչքան որ էն համբոյրներդ սնդուսի:

Կը խորտակուի ապարանքդս գեղանի,
Եւ կը ծածկուի անապատի շնչի տակ.
Կը բարձրանայ անհուն ծովը Սիդոնի
Եւ կը գերէ անապատը ծագէ ծագ,—

Ժամանակը իր վախճանին կը հասնի
Եւ արեւը մի բուռ մոխիր կը դառնայ,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա յաւերժ է, նա անշէջ է, նա անմահ...»

Ջհացնող համբոյրներում դիւթական,
Հանց հինաւուրց հեքիաթական գինու մէջ,
Թալկանում է. եւ հալչում է էլ-Սամաճ...
Ժամանակը դառնում՝ վայրկեան ու յաւերժ...

Ապառաճիխ եբենոսեաց դռներից
Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.
Մանկլաւիկներ ու ճաժիշներ ցնծալից
Նուագում են, ու երգում են. ու պարում...»

3

Լուսիւնը մահուան թեւով ծուարած՝
Առկայծում է կանթեղն աղօս, մեհեաւոր.
Եւ մեռնում է հեզ բամբիռը դալկացած
Էլ-Սամաճի կրծքի վրայ սգաւոր:

Նա մեռնում է ինչպէս ցօղը բողբոջում,
Մանկիկն ինչպէս սուրբ գրկի մէջ մայրական.
Եւ հրծծում է, աղօթքի պէս ջերմօրէն
Հէք բամբիռի ականջն ի վար էլ-Սամաճ:

– Կը խոտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս,
Եւ կը վանեմ, կը յաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս»:

Եւ գրկել է դժգունացող բամբիռին,
Մահուան հանդէպ սուր ու վահան է շարժում.
Եւ բամբիռի սառած-մեռած շրթներին
Իր հրեղէն սիրն ու շունչը ներարկում:

4

Լուսիններ են եկել-անցել, ու կրկին
Մեռած բամբշին ամուր գրկած Էլ-Սաման
Շշնչում է ականջն ի վար մեղմագին,
Ինչպես դեղին սիւներն ի վար լուսնկան:

Եւ լքել են ապարանքը սարսափից
Մանկլաւիկներն ու նաժիշտներ ոսկեհեր.
Արմաւներն են լուռ սոսաւում թախծալից,
Եւ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր:

Շատրուաններն հեծկլտում են ու լալիս,
Եւ սիւնից սիւն սարդը ոստայն է հիւսում.
Անապատի հողմն է միայն այց գալիս
Եւ գահի շուրջ կաղկանձում ու փսփսում:

Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին.
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հիւծուած բամբիշին:

Եւ քայքայուն ականջն ի վար լռելեայն
Մեռած, սառած շրթունքներով Էլ-Սաման
Շշնչում է յաւերժաբար ու անձայն,
Ինչպես խարխուլ սիւներն ի վար լուսնկան:

Պուրակները չորացել են, չքացել,
Եւ շիջել է լոյս երազը սիւների.
Անապատը դեղին քղանցքն է փռել
Եւ ծածկել է ապարանքը Թաղմորի...

Եւ աւազուս ծիրմի վրայ մեճաւոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկայ,
Որ իմացաւ վառ աստղերը հեռաւոր
Էլ-Սամաճի սէրը հզօր ու անմահ:

Որ աշխարհին պատմեց սէրը յաղթապանծ,
Էլ-Սամաճի սէրը՝ անանց, յաւերժող,
Քարաւաններն ու նամբորդներն երկիւղած
Հեռուներից հեռուն եկող գնացող...

ՀՕՏՆ ՈՒ ՀՈՎԻՒ

(Հայ ժողովրդական առասպել)

Ասում են թէ՝ կար ժամանակ շատ առաջ,
Երկրի վրայ գառ ու ոչխար չըկային.
Լոկ դրախտի արօտներում հիասքանչ
Ապրում էին գառն ու մաքին երկնային։

Սիրուց լքուած մի պատանի սրտաբեկ
Թափառում էր Արագածի լանջերում.
Թափառում էր անմխիթար, անընկեր,
Ինչպէս զրկուած իր եղնիկից եղջերուն։

Նուագում էր ջինջ սրինգով եղեգնի
Իր կարօտը, մենութիւնը տխրագին,
Թախանձում էր աղբիւրներին, ժայռերին,
Որ լինէին իրան ընկեր անմէկին։

Աղբիւրները հառաչելով ասացին՝
«Գնացող ենք, ի՞նչպէս մնանք մենք քեզ հետ».
Եւ ժայռերը հառաչելով ասացին՝
«Մնացող ենք, ի՞նչպէս գնանք մենք քեզ հետ»։

Ոչխարները՝ հեզ ու բարի, լսեցին
Մրմունջները այն պատանու վշտահար.
Եւ մայելով դրախտից դուրս վազեցին,
Երգով դիւթուած, եկան իջան լեռն ի վար։

Գառն ու մաքին բոլորուեցին Նրա շուրջ
Սրացուեր Նրա խաղցր սրինգին.
Նրան խոնարհ՝ հետեւեցին ամենուր,
Նրան ընկեր սիրով, սրտով անմեկին:

Այն օրուանից սուրբ սարերում բոյն դրին
Հօտն ու հովիւ՝ նուիրական ու արդար.
Այն օրուանից սուրբ սարերի բարձունքից
Իջաւ բարին ու ծաւալուեց ողջ աշխարհ:

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

1

Եկաւ հապճեպ սուրհանդակ՝ փոշիների մէջ թաթաւ,
Ուրարտուի արքայի առջեւ խոնարհ ծունր իջաւ.
— «Որդի՛ հզօր Խալդիի. տէր գետերին Նայիրի,
Ինձ առաքեց բդեշխը քո այն հեռու աշխարհի,
Ուր արեւն է մայր մտնում:
Յաղթո՛ղ գոռոզ Ասուրի,
Մի թշնամի, որ նման մթնում փայլող մի սուրի,
Մխրճուել է մեր կողը, եւ քանդելով բուրգ-պատուար՝
Ներս է խուժում մեր հողը, հեղեղների պէս վարար:
Չենք իմանում, չգիտենք նրանց տոհմը, ո՞վքեր են,
Ո՞վ է նրանց աստուածը, նրանց լեզուն. ո՞ւսկից են:
Եւ մրրիկն են սանձել, թէ արծիւը ամպերի,
Նրանց ձիերը թռչում են պատնէշներով բերդերի...»
Սարդուրիսի ճակատին մռայլ վիհեր բացուեցին.
Եւ արձակեց հրաման Ուրարտական թագերին.
Կազմեց ամուր այրուձի, կազմեց բանակ մեծաուժ,
Եւ մեկնեցին ռազմադաշտ թշնամու դէմ խուժադուժ...

2

Գամիրք, Մոսոք ու Թափալ ծունկ են իջել գլխահակ՝
Յաղթողներին բերելով հարկ ու ընծայ անքանակ.—
Ցորեն, մեղր ու երկաթ, իրենց չքնաղ կոյսերը,
Որոնց միայն զգուել են երկնի մաքուր հովերը:

Նետեր ունին սայրասուր եւ աղեղներ լայնալիճ:
Որ արծիւին սրտախոց վայր են բերում երկնքից,
Պարսեր ունին ամեհի, սուրեր ունին կուռ-կոփուած:
Կայծակների ամպեղէն դարբնոցում ջրդեղուած:
Փռիւգիական գտակներ եւ զօտիներ երկաթի,
Եւ վիթխարի ուսերին վագրների վառ մորթի,
Որոնց բռնել են շտապ իրենց անցած վայրերում.
Եւ ճակատներն արեւվառ՝ ինչպէս կաւը քուրայում:
Վաչեների մէջ կորիւն ժիր մանուկներ ոսկեհեր,
Բազուկները ջլապինդ, աչիկները՝ արեւներ:
Եւ նրանց հետ ալեհեր եւ իմաստուն ծեր պապեր՝
Պիրկ ձեռներին գինով լի էտրուրական սափորներ:
Վիթի նման աղջիկներ՝ գարունքուայ պէս բռնկուած՝
Զրահի տակ ստինքներ՝ սէրն ու կարօտ անթեղած,
Եւ մայրերը սիրաշատ ու նրանց սուրբ արգանդում:
Կեանքն է անում, ինչպէս որ վիշապածագն անդնդում

3

Ինչպէս ծովը դուրս պոռթկայ իր վիհերից անպարփակ,
Յորձանքներ տայ եւ յորդի, որոնելով նոր յատակ,
Այնպէս յորդում է առաջ նրանց արշաւն ահաւոր,
Որոնելու նոր աշխարհ, իրենց երդի համար նոր:
Եւ յորդում են, եւ նրանց խօլ բարբառից սարսափուն
Վարազներն են թաքթաքում շամբուտների զուբերում:
Եւ յորդում են, եւ հարթում նժոյգների ոտքի տակ
Խոչեր-խութեր ու լեռներ, ազգեր-ցեղեր ու բանակ.
Եւ նրանց վերեւ յածում է սաղաւարտով պղնձի՝
Նահապետը քաջ, Գեստրաս, ինչպէս արեւ քաջաձի:

4

Եկաւ արքան Սարդուրիս, եւ արքաներ Նայիրի
Ոսոխի դէմ ամեհի, հեռո՛ւ, անյայտ աշխարհի·

Երկաթեղէն պատերով պատուար կեցան դարէդար,
Եւ սուր սրի զարկեցին, ճակատ ճակտի անդադար.
Սերունդ իջաւ գերեզման, սերունդ ելաւ օրրանից,
Եւ կռուեցին նոր սուսեր, պայքարեցին նոր-նորից։
Ճակատ ճակտի բախուեցին եւ սուր սրի զարկեցին,
Փշրուեցին նետ ու սուր, Ուրարտուի այրուձին,
Եւ նորեկներն յաղթապանծ՝ կուռ պատերը ճեղքեցին։

Ռազմիկները Խալդերի փախան պարտուած ու նուաստ՝
Թողած բալիշ ու աւար իրենց հողը հացաշատ,
Ոստանները ոսկեդուռ, իրենց կիներն սեւաչուի,
Փախան մինչեւ ծովածեծ կողալանջերն Կաւկաւի։

5

Եւ վաչերը շառաչիւն՝ յաղթողների կանգ առան
Արարատեան դաշտի մէջ, Մասիսների յանդիման․
Գեստրասները կախեցին վահանն իրենց պողպատի
Ադամանդից յուսեղէն Աւագ-Մասսայ ճակատի։
Հիմ դրեցին, վառեցին իրենց երգը սրբազան,
Եւ ծուխն ելաւ ու փռուեց գետերն ի վար Նայիրեան․
Եւ բագինը կանգնեցին իրենց արեւ-աստծու՝
Քաջ Վահագնի, բաշխիչը յաղթանակի եւ գինու․
Եւ Աստղիկի, բամբիշը Վիշապաքաղ Վահագնի,
Աստուածուհին գեղեցկի, հզօր սիրոյ եւ կեանքի։

Եղան նրանք քաջ պետեր — հայեր սեպուհ, յաղթական,
Աշխարհն եղաւ հայաստան եւ պիտ մնայ Հայաստան՝
Մինչեւ արեւը հանգչի եւ ցուրտ աճիւնը նրա
Ձիւնէ համայն ազգերի հայրենիքների վրայ…

ՅԱՆԿ

Արարատի ծեր գմբէթից	6
Հայաստանին	9
Ցաւած սիրտս երգեր հիւսից	11
Արեւն իջաւ սարի գըլխուն	12
Ծաղիկ էի նորաբողբոջ	13
Կուզե՞ս լինիմ վշտի ցօղեր՝	14
Սի՛րտ իմ, սպասի՛ր	15
Ամէն գիշեր իմ պարտէզում	15
Իմ փերին	16
Ես երգիչ եմ	17
Սի՛րտս երկինք է	17
Մի՞թէ պիտի թողում	18
Մաճկալ ես	19
Էս ճամբէն ոլոր-մոլոր	20
Դա՛րդս լացէք	21
Մայրիկիս	22
Գիշեր եկաւ	23
Կանգնել եմ մոլոր՝	23
Որսկան ախպէր	24
Քընքուշ լուսնի	25
Մութը գրկած գետ ու գետին	26
Հովերն առան	27
Մանթաշին	28
Կենսական ծովի	29
Անտուն գիշերները	30
Գիշերն եկաւ	30
Սիւ աչերէն չա՛տ վախեցի՛ր	31
Ա՛խ, ալ-վարդի,	31
Արագածին	32
Ա՛խ, իմ ճամբէս	35
Երկնիկները լուսաթաղին	46
Կըռունկները	37
Սիրեցի, հարբա տարան	38
Շառաչելով մի վառ աստղիկ	38
Երազիս մէջ ծովը տեսայ	39
Ես որ մեռնիմ	39
Երազ տեսայ	40
Ցոգնած ծովը	41
Սեւ-մութ ամպեր	42
Ա՛խ, մեր սիրտը	43
Անյայտ անորոշ	44
Գիտե՛մ, երկիրը	44
Արտուան՝ ուսին	45
Քեզ չը տեսնել՝ ուխտել էի,	45
Լուռ գիշերին	46
Մութ անտառով	46
Ես որ մեռնիմ՝	47
Գերեզմանս անյայտ լինի	47
Տիեզերական զանգ	48
Է՛յ Ջան հայրենիք	49
Քնքուշ տատրակս	50
Ջայնըս հնչում է	51
Է՛յ դու մահուան	52
Ծովը	53
Իրիկունն եկաւ	54
Իմ այրող վշտից	54
Տարիներ յետոյ	55
Այսօր ձեր տուն	55
Ժեռ սև քարը արտիս վրայ	56
Այս ուռուռ տակ	57

Երազիս տեսայ 57
Ա՛խ, ես սիրուն ճամբի ափսոս 58
Դէպի անապատ 58
Անառուն Թռչնակս 59
Եւ, վաղո՛ւց, վաղուց 59
Արագի ափին 60
Ծամերդ հիւսել՝ 60
Հոգիս մըռայլ էր 61
Ձմեռն անցաւ 62
Դու չես հասկանայ 63
Պանդուխտ որդին 65
Ես ձեզ ասում եմ՝ 67
Օաա՛ր, ամայի՛ ճամբէքի վերայ 68
Ընկերիս յիշատակին 69
Մենակ մանկութեան 70
Ազատութեան զանգ 72
Աղբիւրի մէջ մի մարալ 74
Անառուն քամու պէս 74
Անապատում 75
Վարդի չրթունքըդ 75
Մէկը չեղաւ 76
Նրանք իմ կեանքը 76
Բո՛լր իմ նազելի 77
Եւ սէրըդ սիրաբա 77
Դու անցորդի պէս 87
Ա՛խ, իմ սիրուս 87
Երկինք հիասքանչ 79
Ձմրուխտեայ երգեր 80
Նման գայլերի համբին 81
Մռայլ ամպերից 82
Եւ անապատից 83
Եւ արծիւ մը սեւ 83
կեանքի կռւում 84
Առաւօտուն 84
Հիմա հեռաւոր 85
Միշտ զգում եմ ես 85
Լուռ պարահիղում 86
կնոջն ուզեցի հաւատալ 86
Իմ հոգին տարագիր 87
Բաղերը վայրի 89
Անհուն վրէժի 90
Է՛յ դու, ջահել 90
Մեր կեանքի ամէն 90
Լեռների լանջում 91
Ես կուզէի արեւալառ 91
Գիշերն երազով 92
Եա՛ր աչերըդ արեգական 93
Երազիս տեսայ՝ 94
Շափա՛ղ կուտաս 94
Ո՛ւմ սիրան է հնծում 95
Հեռաւոր ծովի 95
Երազիս տեսայ 96
Որդիական սէր 97
Մօր սիրտը 98
Ո՛չ իշխանութիւն 100
Ապրած իմ կեանքից 100
Լա՛ց, իմ նազելիս 101
Անմահ արեւի 102
Անգիր, ե՛ւ անյայտ 103
Ի՞նչ օրի հասայ 103
Ծովն ալեկոծ 104
Ո՞րտեղ է ընկած 104
Մի երեխայ 105
Մշուշը ծածկեց 106
Զգիտեմ, թէ ո՞ւր 106
Վատրուած եմ ես 107
կը տեսնեմ ահա 108
Դաւեըս ափ առած՝ 109
Ո՞ւմ հետ եմ անյայտ 109

Ամէն գարունքին՝ 110
Ոսկի թիթեռնե՛ր 111
Ջո ուներդ 111
Ո՞րտեղ պիտի հանգչի 112
Ծաղկունքը գարնան 112
Բախտը ինձնից թըռաւ 113
կարծես երէկ էր 114
Հայրենի գետի 115
Հայրենի աղբի՛ւր 115
Աչո՛ւն է, քամի 116
Ջիւն է գալիս, 116
Առաւօտ պահին 117
Լորիների տակ 118
կեռասենին ծաղկից կրկին 119
Գիշեր է, քամի 120
Երազ 121
Ա՜խ, ասացին ինձ 122
Գետակի վրայ 123
Ծառիս վրայ 125
Ջո կարօտած հայրենիքի 128
Մարգարիտնե՛ր վըզիդ 127
Ամէն անգամ 129
Նա մի փոքրիկ աղջիկ է 130
Մեր բաղի խաս բլբուլին 130
Գրկիր ինձ մեղմիկ 131
Հայրենիքից հեռու 132
Թռչուններն ուրախ 133
Երկու թռչուն 134
կատակ 135
Այցի եմ գալիս 136
Ես հովիկ լինէի 136
Թարթիչներդ չուք կըտան 137
Աչնան ծաղիկնե՛ր 137
Մեղեդիներով 138
Պոմպէյի մէջ 139
Ասում են, թէ 140
Մի մրահոն աղջիկ տեսայ 141
Ծո՛վ, եկան ազգեր 142
Ինչո՞ւ, ինչո՞ւ 143
Հայրենի ծուխը 144
Անի 146
Վերջին յորձանքն 148
Աչերդ՝ սեւ-հուր 148
Ծաղկավառ ուղին 149
Երկու մանուկ 149
Հայրենիքիս 150
Մանկութիւն 151
Տիեզերքն այս անսահման 152
Ի՞նչ պիտ լինեմ 152
Սաւառնում ես 153
Վերջալոյսին ոսկեշող 154
Հայրենիքիս 155
Երբ մանուկ էի, 156
Նոր տարուայ առաւօտեան 157
Ողջոյն ամէնքին 159
Ամառուայ կապոյտ 161
Պինկէօլ 162
Թռչունների երգը 163
Եօթ-ութ տարեկան 163
Է՛ս գիշե՛ր 165
Եւ ուշ գիշերին 165
Արեւի պէս սիրուն Զարօս 166
Գարունն եկաւ 166
Թագմակոչ 167
Հայ ճարտարապետութիւնը 169
Սիրելի հերոս Ս. Գ. Զաքի-
եանի անմահ յիշատակին 171
Մեր պատմիչները և մեր
գուսանները 172
Ժողովրդի երգը 175

Մեծ յաղթանակի օրը 176
Հրէական առասպել 177
Սոկրատէսը 178
Ամթիլեան իր և սուրը 180
Յաւերժական սէրը 185
Հօտն ու հովիւ 190
Մեր նախահայրերը 192

Թիւ	1	Ց. Թուլաճեան	ԱՆՈՒՇ (Սպառած)	Դին	75 Լ.Դ.
»	2	Ա. Ծառուկեան	ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ	»	200 »
»	3	Ա. Իսահակեան	ՍԱՍՄԱՑ ՄՀԵՐ	»	100 »
»	4	Պ. Դուրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ (Սպառած)	»	125 »
»	5	Մ. Իշխան	ԵՐԵՔ ՄԵԾ ՀԱՑԵՐ	»	150 »
»	6	Դ. Վարուժան	ՀՈՐՃԸ	»	75 »
»	7	Ց. Շիրազ	ՌՈՒՍԹԱՒՑԻ ՇՈՒԹԱՆ ԵՒ ԹԱՄԱՐԸ	»	75 »
»	8	Սայաթ-Նովա	ՏԱՂԵՐ (Սպառած)	»	150 »
»	9	Ա. Իսահակեան	ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ	»	75 »
»	10	Ց. Թուլաճեան	ԱՆՈՒՇ (Բ. Տպագրութիւն)	»	75 »
»	11	Վ. Տէրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	»	100 »
»	12	Ե. Չարեցց	ՀԱՏԸՆՏԻՐ	»	250 »
»	13	Մ. Մեծարեցց	ԾԻԱԾԱՆ-ՆՈՐ ՏԱՂԵՐ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	»	200 »
»	14	Վ. Թէքէեան	ՀԱՏԸՆՏԻՐ	»	150 »
»	15	Ինsրա	ՆԵՐԱՇԽԱՐՀ	»	300 »
»	16	Սիամանթօ	ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՒ ՑՈՑՍԻ ՋԱՀԵՐ — ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ — ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՒԷՐ — ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ	»	300 »
»	17	Ց. Շիրազ	ՍԻԱՄԱՆԹՕ ԵՒ ԽԱՉԷՋԱՐԷ	»	100 »
»	18	Ա. Իսահակեան	ԻՄ ՅՈՒՇԵՐԻՑ	»	150 »
»	19	Վ.Բ. Փափազեան	ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ	»	200 »
»	20	Ա.Ե. Իսահակեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ (Ա. Հատոր)	»	300 »

ԿՈՂՔԻ ԳԵԱԳՐԲ.՝ ՆԵՐՍԷՍ ՊԷՐՊՈՒՏԵԱՆԻ

ԵԴՈՒԱՐԴ ՊՈՂՊԱՏԵԱՆ
EDWAN PRESS
B. P. 3261
RUE DES CAPUCINS, NO. 50
BEYROUTH - LIBAN

PRINTED IN LEBANON

Mateos Tsaretsi Bibliotheek
Amsterdam

ԳԻՆ՝ 300 ԼԻԲ· ԴԱՇԵԿԱՆ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ 1 ՏՈԼԱՐ



مطبعة إدوان
شارع الكنوشية نمرة ٥٠
بيروت - لبنان